

ԳԼԵՆԴԵԼԻ
ՀԱՆՐԱՅԻՆ
ԴՊՐՈՑՆԵՐԻ
ԿՐԹԱՇՐՁԱՆ

223 North Jackson Street
Glendale, California 91206
818-241-3111

**Տեղեկատվություն
Ծնողների/խնամակալների
և աշակերտների համար**

2020-2021



GLENDALE UNIFIED SCHOOL DISTRICT

“Preparing our students for their future”

223 North Jackson St., Glendale, California 91206-4380

Telephone: 818-241-3111, Ext. 1215 • Fax: 818-548-9041

OFFICE OF THE SUPERINTENDENT

2020-2021 ուսումնական տարի

Հարգելի ծնողներ և խնամակալներ,

Բարի գալուստ նոր ուսումնական տարի: Այս ձեռնարկը պարունակում է կարևոր տեղեկատվություն Գլենդեյի հանրային դպրոցների կրթաշրջանի քաղաքականության, կանոնակարգերի և ընթացակարգերի մասին, որոնք վերաբերում են Կալիֆոռնիայի հանրային դպրոցներում ձեր և ձեր աշակերտի իրավունքներին ու պարտականություններին: Խնդրում ենք ժամանակ տրամադրել՝ սույն ձեռնարկում պարունակվող տեղեկատվությունը գնելու և կցված բոլոր պահանջվող ձևերը վերադարձնելու համար:

Ձեր աշակերտի դպրոցը պետք է հաստատի, որ յուրաքանչյուր ընտանիք ստացել և վերանայել է այս ձեռնարկը: Բոլոր ընտանիքները պետք է ստորագրեն և վերադարձնեն հետևյալ հինգ ձևը.

- Ձև 1 “Ծնողի ծանուցման պահանջի հաստատում
- Ձև 2 «Բողոքարկման համընդհանուր ընթացակարգի մասին տարեկան ծանուցում»
- Ձև 3 «Խնամակալության մասին օրենքի ծանուցում»
- Ձև 4 «Էլեկտրոնային տեղեկատվական ծառայություններից (EIS) օգտվողի/ծնողի կամ խնամակալի պատասխանատվության պայմանագիր»
- Ձև 5 «Տեղեկատվություն գենքի անվտանգ պահպանման վերաբերող ծնողի/խնամակալի իրավական պարտավորությունների մասին»

Գլենդեյի հանրային դպրոցների կրթաշրջանը միտված է ամեն դասարան ապահովել որակավորված ուսուցիչներով: Կրթաշրջանը ջանք չի խնայում յուրաքանչյուր դասարանի և առարկայի համար լավագույն ուսուցիչներին հավաքագրելու, վարձելու և պահելու համար: Որպես դաշնային Title I ֆոնդեր ստացող, կրթաշրջանից ակնկալվում է երաշխավորել, որ **յուրաքանչյուր** դպրոցի **յուրաքանչյուր** ուսուցիչ համապատասխանի պետական հավաստագրման և արտոնագրման համապատասխան պահանջներին, այդ թվում այլընտրանքային ուղիներով ձեռք բերված հավաստագրման վերաբերյալ ցանկացած պահանջների՝ սահմանված «**Յուրաքանչյուր աշակերտ պետք է հաջողի**» դաշնային օրենքով:

Հավելենք, որ Title I ծրագիր ունեցող դպրոց հանախող աշակերտների ծնողներն իրավունք ունեն հայցել և տեղեկություններ ստանալ իրենց երեխայի ուսուցչի մասնագիտական որակավորման վերաբերյալ: Ծնողները կարող են նաև տեղեկատվություն հայցել դասարանում ուսումնառության ընթացքում աջակցություն ապահովող օգնականների մասնագիտական որակավորման վերաբերյալ: Եթե ձեր երեխան հանախում է Title I ծրագրի դպրոց, և դուք ցանկանում եք հավելյալ տեղեկություններ ստանալ ձեր երեխայի ուսուցչի որակավորման վերաբերյալ, խնդրում ենք դիմել դպրոցի տնօրենին:

Շնորհակալություն ձեր երեխայի կրթության հանդեպ ձեր ցուցաբերած հետաքրքրության և ներգրավվածության համար: Միասին, մենք յուրաքանչյուր երեխայի կնախապատրաստենք քոլեջում, աշխատանքում և կյանքում հաջողության հասնելու համար:

Հարգանքով,

ՑԱՆԿ

ՁեՎ		Էջ
Ձև 1 –	Ծնողների ծանուցման պահանջի հաստատում	5
Ձև 2 –	Բողոքի համընդհանուր ընթացակարգերի տարեկան ծանուցման ստացման հաստատում	6
Ձև 3 –	Խնամակալության մասին օրենքի ծանուցում	7
Ձև 4 –	Էլեկտրոնային տեղեկատվական ծառայություններից (EIS) օգտվողի/ծնողի կամ խնամակալի պատասխանատվության պայմանագիր	8
Ձև 5 –	Տեղեկատվություն զենքի անվտանգ պահպանման վերաբերյալ ծնողի/խնամակալի իրավական պարտավորությունների մասին	10
Ձև 6 –	Դեղորայքի քսանչորսժամյա ընդունման գրաֆիկ	11
Ձև 7 –	Ուսուցումանը չմասնակցելու խնդրագիր	11
Ձև 8 –	Աշակերտի անվան, լուսանկարի, կայքէջերում տեսանյութերի և զանազան հրապարակումների հանրային օգտագործման թույլտվություն	12
Ձև 9 –	Զինվորական մարմիններին, գործատուներին, քոչվորներին/ համալսարաններին ավագ դպրոցի 11-րդ և 12-րդ դասարանների աշակերտների անձնական տվյալները չտրամադրելու խնդրագիր	13
Ձև 10-	Աշակերտներ, որոնց ծնողները լրիվ դրույքով ծառայում են զինված ուժերում կամ Ազգային պաշտպանության պահակախմբում	14
	Ծնողների և աշակերտների իրավունքներն ու պարտականությունները	15
	Ոչ խտրականության հայտարարություն	15
	Կալիֆոռնիայի Առողջ երիտասարդություն օրենսդրություն	16
	Կալիֆոռնիայի առողջապահական ծառայություններ	17
	Գլխուղեղի ցնցումների վերաբերյալ տեղեկագիր	24
	Աշակերտի ապահովագրական ծրագիր	25
	Բարձրագույն կրթության մարզական ծրագիր մրցունակ մարզիկների համար	25
	Ֆիզիկական կրթությունից աշակերտի ազատում (միայն Ավագ դպրոցի համար)	25

Բնակավայրի տարբերակներ	25
Ծնողի և ընտանիքի ներգրավվածություն	27
Կարիերայի խորհրդատվություն և դասընթացի ընտրություն	28
Տեղեկություններ Անգլերեն սովորողների (EL) համար	28
Գաղթական, նոր ներգաղթած և զինված ուժերի աշակերտներ	29
Կրթության հավասարություն	30
Աշակերտական վճարներ/նվիրատվություններ/դրամահավաք	30
Սննդի ծառայություններ	30
Դպրոց հաճախումներ	32
Անվտանգության տեսախցիկներ	33
Աշակերտի վարքագիծ	33
Էլեկտրոնային ազդանշանային սարքեր	39
Բռնի հանցագործության զոհ	39
Հոգեկան առողջության ծառայություններ	40
Ինքնասպանության կանխարգելման քաղաքականություն	40
Դրական վարքագծի միջամտություն և աջակցություն (PBIS)	40
Խնամակալության օրենքի ծանուցում	40
Ծխախոտի օգտագործման կանխարգելման ուսուցում (TUPE)	41
Դպրոցից դուրս կեսօրյա ճաշ	41
Այլընտանքային դպրոցներ	41
Սեռական բնույթի ոտնձգություններ	42
Կրթություն անօթևան աշակերտների համար	46
Խնամատարության տակ գտնվող պատանիների կրթություն	47
Ավագ դպրոցի ատեստատների հետադարձ ուժ ունեցող դրամաշնորհ. Հեռացված և տեղահանված աշակերտներ	48
Դաշնային օգնություն աշակերտներին	48
Կալիֆոռնիայի դրամաշնորհային ծրագիր	48
Ծնողների մասնակցությունը դպրոցի ժողովներին և խորհրդակցություններին	49

Բողոքի համընդհանուր ընթացակարգերի քաղաքականություն	49
Բարեկրթության քաղաքականություն	60
Ուսման ապահով միջավայր օրենսդրություն	60
Դպրոցների պատասխանատվության հաշվետու քարտ (SARC)	61
Աշակերտների լուսանկարում և տեսագրում	61
Առողջ դպրոցներ	61
Համացանցի հասանելիություն/ էլեկտրոնային տեղեկատվական ծառայություններ և Ընդունելի օգտագործման կանոնադրություն	62
Համացանցի անվտանգության վերաբերյալ տեղեկություններ	66
Կալիֆոռնիայի Կրթության օրենսգրքի՝ ծնողներին ծանուցման պահանջ	67
Դպրոցին առնչվող արտակարգ իրավիճակ և դպրոցական անվտանգություն	72

ՁեՎ 1 – ԾՆՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՍՏԱՑՄԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ
2020-2021 ուս. տարի

Ձև 1-ը պետք է լրացվի Գլենդեյի հանրային դպրոցների կրթաշրջանի ԲՈԼՈՐ աշակերտների ծնողների կամ խնամակալների կողմից և ԿԱՄ (1) վերադարձվի աշակերտի դպրոցի գրասենյակ, ԿԱՄ (2) առցանց ParentConnection-ում լրացվի «Աշակերտի տարեկան տեղեկատվության նորացում» բաժինը:

(Տպատառերով) Աշակերտի անունը Նույնականացման համարը Դպրոցը Դասարանը

Խնդրում ենք այս ձևը ստորագրել և 30 օրվա ընթացքում վերադարձնել աշակերտի դպրոց: Սույնը հաստատում է, որ Կալիֆոռնիայի օրենքի (EC § 48982) համաձայն դուք տեղեկացվել եք ծնողի և աշակերտի իրավունքների ու պարտականությունների մասին: Ձեր ստորագրությունը չի նշանակում որևէ մասնակի ծրագրի մասնակցելու համաձայնություն, պարզապես հաստատում էք, որ ստացել եք օրենքով պահանջվող կանոնների այս ծանուցումը:

Ծնողի կամ խնամակալի ստորագրությունը

Ամսաթիվ

**ՅՈՒՐԱԲԱՆՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿՐԹԱՇՐՋԱՆԻ ԻՐ ԾՆՈՂԻ ԿԱՄ ԽՆԱՄԱԿԱԼԻ ԿՈՂՄԻՑ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԱՅՍ ՁԵՎԸ Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ՍՏԱՆՎԼՈՒ**



**ՁեՎ 2 – ԲՈՂՈՔԻ ՄԻԱԶԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ
ՍՏԱՑՄԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ**
2020-2021 ուս. տարի

Ձև 2-ը ը պետք է լրացվի Գլենդեյի հանրային դպրոցների կրթաշրջանի ԲՈԼՈՐ աշակերտների ծնողների կամ խնամակալների կողմից և ԿԱՄ (1) վերադարձվի աշակերտի դպրոցի գրասենյակ, ԿԱՄ (2) առցանց ParentConnection-ում լրացվի «Աշակերտի տարեկան տեղեկատվության նորացում» բաժինը:

(Տպատառերով) Աշակերտի անունը Նույնականացման համարը Դպրոցը Դասարանը

Խնդրում ենք այս ձևը ստորագրել և 30 օրվա ընթացքում վերադարձնել աշակերտի դպրոց: Սույնը հաստատում է, որ դուք ստացել եք Վիլյամսի Համընդհանուր բողոքարկման ընթացակարգի մասին տարեկան ծանուցումը: Ձեր ստորագրությունը չի նշանակում որևէ մասնակի ծրագրի մասնակցելու համաձայնություն, պարզապես հաստատում էք, որ ստացել եք օրենքով պահանջվող կանոնների այս ծանուցումը:

Ծնողի կամ խնամակալի ստորագրությունը

Ամսաթիվ

**ՅՈՒՐԱԲԱՆՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿՐԹԱՇՐՋԱՆԻ ԻՐ ԾՆՈՂԻ ԿԱՄ ԽՆԱՄԱԿԱԼԻ ԿՈՂՄԻՑ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԱՅՍ ՁԵՎԸ Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ՍՏԱՆՎԼՈՒ**

**ՁԵՎ 3 – ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ԾԱՆՈՒՑՈՒՄ
2020-2021 ուս. տարի**

Ձև 3-ը պետք է լրացվի Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի ԲՈԼՈՐ աշակերտների ծնողների կամ խնամակալների կողմից և ԿԱՄ (1)վերադարձվի աշակերտի դպրոցի գրասենյակ, ԿԱՄ (2)առցանց ParentConnection-ում լրացվի «Աշակերտի տարեկան տեղեկատվության նորացում» բաժինը:

(Տպատառերով) Աշակերտի անունը _____ Նույնականացման համարը _____ Դպրոցը _____ Դասարանը _____

Կալիֆոռնիայի օրենքի համաձայն (Ընտանեկան օրենսգրք, մաս 3010) ծնողները հավասարապես իրավասու են իրենց երեխայի խնամակալության հարցում: Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի վարած քաղաքականությունը հիմնված է Ընտանեկան օրենսգրքի 3010 բաժնի վրա, որի համաձայն անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելով՝ ծնողը կարող է երեխային դպրոցից վերցնել կամ որոշումներ կայացնել նրա առողջության, կրթության և բարեկեցության վերաբերյալ:

Համաձայն Ընտանեկան օրենսգրքի 3025 մասի, ոչ-խնամարկու ծնողի՝ իր երեխայի վերաբերյալ դպրոցական գրառումներին ծանոթանալու ցանկությունը չպետք է մերժվի: Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը պետք է թույլ տա ծնողին ծանոթանալ իր երեխայի դպրոցական տվյալներին, այդ թվում՝ դպրոցի տրամադրության տակ գտնվող բժշկական փաստաթղթերին:

Եթե դատարանի որոշմամբ սահմանափակվել են երեխային այցելելու կամ խնամակալության և/կամ երեխայի մասին տեղեկություններ ստանալու ծնողի իրավունքները, երկու ծնողի պարտականությունն է անմիջապես իրենց յուրաքանչյուր երեխայի դպրոցին տրամադրել դատավորի ստորագրությամբ և դատարանի կնիքով վճիռի ընթեռնելի պատճենը: Դատարանի որոշման պատճենները կարելի է ստանալ այն դատարանի գրասենյակից, որտեղ ընդունվել է որոշումը:

Մի ծնողի բանավոր կամ գրավոր հայտարարությունը, առանց ստորագրված դատական փաստաթղթի, դպրոցի համար անբավարար պատճառ է երեխային մոտենալու և/կամ երեխայի դպրոցական արձանագրությունները ձեռք բերելու մյուս ծնողի իրավունքը մերժելու համար:

Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի դպրոցները պետք է հիմնվեն են երեխայի խնամակալության մասին ներկայացված դատարանի կողմից ստորագրված ամենավերջին որոշման վրա: Փաստաթղթի բացակայության դեպքում, համաձայն Կալիֆոռնիայի վերոհիշյալ օրենքի, ծնողներին տրվում են երեխայի խնամակալության հավասար իրավունքներ:

Ծնողներին խնդրում ենք դպրոցի անձնակազմին չներքաշել երեխայի խնամակալության վերաբերյալ վեճերի մեջ: Եթե ծնողը համոզված չէ, թե արդյոք դպրոցն ունի իր երեխայի խնամակալության վերաբերյալ վերջին տեղեկությունները, նա պետք է կապվի դպրոցի հետ և պարզի, թե արդյոք դպրոցը ստացել է դատական ամենավերջին որոշումների ընթեռնելի պատճենները:

ԵՍ ԿԱՐԴԱՑԵԼ ԵՎ ՀԱՍԿԱՑԵԼ ԵՄ ՎԵՐՈՆՇՅԱԼ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

(Տպատառերով) Ծնողի/խնամակալի անունը _____ Ստորագրությունը _____ Ամսաթիվ _____

**ՅՈՒՐԱԲԱՐՔՆԵՐԻ ԱՇԿԵՐՏ ՊԵՏՔ Է ՎԵՐԱԴԱՐՁՆԻ ԻՐ ԾՆՈՂԻ ԿԱՄ ԽՆԱՄԱԿԱԼԻ ԿՈՂՄԻՑ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԱՅՍ ՁԵՎԸ Ի ՀԱՍՏԱՑՈՒՄՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ՍՏԱՆՎԼՈՒ**

**ՁԵՎ 4 - ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (EIS)
ՊԱՏՇԱՃ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԵՎ ԿՐԹԱՇՐՋԱՆԻ ԱՉԱՏՈՒՄ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ (ԱՇԱԿԵՐՏՆԵՐ)
2020-2021 ուս. տարի**

Ձև 4-ը պետք է լրացվի Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի ԲՈԼՈՐ աշակերտների ծնողների կամ խնամակալների կողմից և ԿԱՄ (1) վերադարձվի աշակերտի դպրոցի գրասենյակ, ԿԱՄ (2) առցանց ParentConnection-ում լրացվի «Աշակերտի տարեկան տեղեկատվության նորագում» բաժինը:

Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը աշակերտներին թույլ է տալիս օգտագործել կրթաշրջանին պատկանող կամ այլ կերպ տրամադրված ուսումնական նպատակների համար անհրաժեշտ տեխնոլոգիա: Կրթաշրջանի սարքավորումների օգտագործումը ըստ կրթաշրջանի հայեցողության տրված արտոնություն է և ենթակա է Խորհրդի քաղաքականության կիրառելի կանոններով, վարչական կանոնակարգերով և այս Պատշաճ Օգտագործման Համաձայնագրով սահմանված պայմաններին և սահմանափակումներին: Կրթաշրջանն իրեն իրավունք է վերապահում ցանկացած պահի, առանց գրուշացման, ցանկաված պատճառով կասեցնել օգտագործման իրավունքը:

Կրթաշրջանն ակնկալում է բոլոր աշակերտներից պատասխանատու կերպով օգտագործել տեխնոլոգիաները՝ հնարավոր խնդիրներից և պատասխանատվությունից խուսափելու համար: Կրթաշրջանը կարող է ողջամիտ սահմանափակումներ մտցնել այն կայքերի, նյութերի և/կամ տեղեկատվության հանդեպ, որոնք հասու են աշակերտներին համակարգի միջոցով:

Յուրաքանչյուր աշակերտ, որը իրավասու է օգտագործել կրթաշրջանի տեխնոլոգիան, և նրա ծնողը/խնամակալը, պետք է ստորագրեն այս Պատշաճ Օգտագործման Համաձայնագիրը՝ ի նշան այն բանի, որ կարդացել և հասկացել են համաձայնագիրը:

Սահմանումներ. Կրթաշրջանի տեխնոլոգիան ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով. համակարգիչներ, կրթաշրջանի համակարգչային ցանց, այդ թվում սերվերներ և անլար համակարգչային ցանցի տեխնոլոգիա (wi-fi), համացանց, էլ.փոստ (միայն 9-12-րդ դասարանի աշակերտների համար), USB կրիչներ, անլար հասանելիության կետեր (routers), պլանշետային համակարգիչներ, սմարթֆոններ և այլ սարքեր, հեռախոսներ, բջջային հեռախոսներ, անձնական թվային օգնականներ, փեյջերներ, MP3 նվագարկիչներ, կրելի տեխնոլոգիա, ցանկացած անլար հաղորդակցման սարք, այդ թվում արտակարգ դեպքերի ռադիոկապ և/կամ ապագա տեխնոլոգիական նորամուծություններ, անկախ այն բանից, թե դրանք դպրոցում են օգտագործվել, թե դրա տարածքից դուրս, և այդ սարքավորումները կամ սարքերը կրթաշրջանին են պատկանում, թե անձնական սեփականություն են հանդիսանում:

Աշակերտների պարտավորություններն ու պատասխանատվությունները. Աշակերտներից ակնկալվում է կրթաշրջանի էլեկտրոնային սարքերն օգտագործել ապահով, պատասխանատու կերպով և միայն ուսումնական նպատակներով: Աշակերտը, որին հատկացվել է տեխնոլոգիան, ողջ ընթացքում պատասխանատու է դրա ճիշտ օգտագործման համար: Աշակերտները չպետք է ուրիշի հետ կիսեն իրենց հատկացված առցանց ծառայությունների հաշվի տեղեկությունները, գաղտնաբառերը կամ նույնականացման և իրավասության նպատակով օգտագործվող այլ տեղեկություններ, և պետք է օգտագործեն համակարգը միայն իրենց հատկացված հաշվի ներքո:

Աշակերտներին արգելված է օգտագործել կրթաշրջանի սարքերը ոչ պատշաճ նպատակներով, այդ թվում, բայց չսահմանափակված հետևյալով.

1. Մտնել, տեղադրել, ցուցադրել կամ այլ կերպ օգտագործել խտրական նյութեր, որոնք գրպարտիչ են, պիտակավորող, անպարկեշտ, սեռական բնույթի կամ խանգարող:
2. Բռնանալ, ոտնձգություններ կատարել, ահաբեկել կամ սպառնալ աշակերտներին, աշխատակազմին կամ այլ անձանց ("cyberbullying"):
3. Բացահայտել, օգտագործել կամ տարածել այլ անձի նույնականացման մասին տեղեկություններ (ինչպիսիք են անունը, հասցեն, հեռախոսահամարը, սոցիալական ապահովության համարը կամ այլ անձնական տեղեկությունները)՝ այլ աշակերտի, աշխատակազմի անդամի կամ այլ անձի սպառնալու, ահաբեկելու, ոտնձգություն կատարելու կամ ծաղրելու նպատակով:
4. Խախտել հեղինակային իրավունքի, արտոնագրի, ապրանքանիշի կամ մտավոր սեփականության այլ իրավունքներ:
5. Միտումնավոր վնասել կրթաշրջանի սարքավորումները կամ խանգարել գործունեությունը (օրինակ՝ կրթաշրջանի սարքավորումները ոչնչացնել, համակարգիչներում վիրուս տեղադրել, համակարգչային ծրագիր ավելացնել կամ հեռացնել առանց ուսուցչի կամ կրթաշրջանի աշխատակցի թույլտվության, փոխել պարամետրերը ընդհանուր օգտագործման համակարգիչների վրա):
6. Տեղադրել չարտոնված ծրագրեր:
7. Անօրինականորեն «կոտրել» համակարգը՝ կրթաշրջանի կամ այլ օգտատերերի տվյալները շահարկելու նպատակով:
8. Ներգրավվել կամ նպաստել ցանկացած գործունեությանը, որը դեմ է բարոյական չափանիշներին, խախտում է որևէ օրենք կամ Խորհրդի քաղաքականությունը, վարչական կանոնները կամ կրթաշրջանի աշխատանքը:

Գաղտնիություն. Քանի որ կրթաշրջանի տեխնոլոգիայի օգտագործումը նախատեսված է ուսումնական նպատակների համար, աշակերտները կրթաշրջանի սարքերն օգտագործելիս չպետք է ակնկալեն գաղտնիություն:

Կրթաշրջանն իրավունք է վերապահում վերահսկելու և գրանցելու կրթաշրջանի տեխնոլոգիաների օգտագործումը, ներառյալ, բայց չսահմանափակվելով. համացանց կամ սոցիալական լրատվամիջոցներ, կրթաշրջանի տեխնոլոգիաներից ուղարկված կամ ստացված հաղորդագրություններ կամ օգտագործման այլ ձևեր: Նման վերահսկողությունը / գրանցումը կարող է տեղի ունենալ ցանկացած պահի, առանց նախնական զգուշացման, ցանկացած օրինական նպատակներով, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ գրառումների պահպանում, ոչ պատշաճ, ապօրինի կամ արգելված գործունեության տարածում և/կամ ուսումնասիրում: Աշակերտները պետք է տեղյակ լինեն, որ շատ դեպքերում կրթաշրջանային տեխնոլոգիաների (օրինակ՝ ցանցի որոնումները և էլեկտրոնային հասցեները) օգտագործելը չի կարող ջնջվել կամ հեռացվել:

Կրթաշրջանի տեխնոլոգիայի համար ստեղծված կամ օգտագործվող բոլոր գաղտնաբառերը միայն կրթաշրջանի սեփականությունն են: Կրթաշրջանի սարքերի վրա աշակերտի կողմից գաղտնաբառի ստեղծումը կամ օգտագործումը չի ստեղծի գաղտնիության ակնկալիք:

Անձնական սարքեր. Եթե աշակերտն օգտագործում է անձնական սարք՝ կրթաշրջանի տեխնոլոգիա մուտք գործելու համար, նա պարտավոր է ենթարկվել Խորհրդի բոլոր կիրառելի քաղաքականություններին, վարչական կանոնակարգերին և Պատշաճ Օգտագործման Համաձայնագրին: Անձնական սարքի ցանկացած այդպիսի օգտագործումը կարող է ենթակա լինել սարքի բովանդակության և սարքի վրա ուղարկված կամ ստացված ցանկացած հաղորդակցության բացահայտման՝ համաձայն օրինականության կամ հանրային տվյալների պահանջների:

Հայտնել. Եթե աշակերտը տեղյակ է ապահովության որևէ խնդրի (օրինակ՝ որևէ մուտքի կամ հաշվի տվյալների գաղտնիության որևէ փոխզիջման մասին) կամ կրթաշրջանի տեխնոլոգիաների չարաշահման մասին, նա պետք է անհապաղ հայտնի ուսուցչին կամ կրթաշրջանի անձնակազմին:

Խախտումների հետևանքները. Օրենքի, Խորհրդի քաղաքականության կամ սույն համաձայնագրի խախտումները կարող են հանգեցնել աշակերտի հանդեպ խիստ միջոցների կիրառմանը՝ գրկել կրթաշրջանի տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքից, և/կամ այլ միջոցների ձեռք առնելուն, ընդունել մինչև օգտագործման կասեցմանը կամ հեռացմանը: Բացի այդ՝ օրենքի, Խորհրդի քաղաքականության կամ սույն համաձայնագրի խախտումները կարող են հաղորդվել իրավապահ մարմիններին:

Ծնողի կամ պաշտոնական խնամակալի ծանուցում. Որպես այս աշակերտի ծնող/խնամակալ, ես կարդացել եմ, հասկանում և համաձայն եմ, որ իմ երեխան պետք է ենթարկվի Պատշաճ Օգտագործման Համաձայնագրի պայմաններին: Ստորագրելով սույն Համաձայնագիրը, ես թույլ եմ տալիս իմ երեխային օգտագործել կրթաշրջանի տեխնոլոգիան և / կամ մուտք գործել դպրոցի համակարգչային ցանց և համացանց: Ես հասկանում եմ, որ չնայած կրթաշրջանի բոլոր ջանքերին, դպրոցի համար անհնար է սահմանափակել բոլոր վիրավորական և հակասական նյութերի հասանելիությունը: Համաձայն եմ դպրոցին, կրթաշրջանին և կրթաշրջանի անձնակազմին զերծ պահել պատասխանատվությունից, հատուցել և զերծ պահել բոլոր տեսակի պահանջներից, վնասներից և ծախսերից, որոնց կարող են հանգեցնել իմ երեխայի կողմից կրթաշրջանի տեխնոլոգիաների օգտագործումը կամ կրթաշրջանի օգտագործած տեխնոլոգիական պաշտպանվածության միջոցների ձախողումը: Ավելին, ես ընդունում եմ իմ երեխայի հաշվի վերահսկողության ողջ պատասխանատվությունը, եթե դպրոցից դուրս է իր հաշվից օգտվում:

<i>(Տպատառելով)</i> Աշակերտի անունը	Նույնականացման համարը	Դպրոցը	Դասարանը
-------------------------------------	-----------------------	--------	----------

Ծնողի կամ խնամակալի ստորագրությունը	Ամսաթիվ
-------------------------------------	---------

**ԵՐԲ ԴՊՐՈՅԸ ՍԿՍԻ ԱՅՍ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ՍՏԱՆՈՒՓ ՓԱՍՏԸ ԸՇՏԵԼ, 4-12-րդ
ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՅՈՒՐԱՔԱՆԳՅՈՒՐ ԱՇԿԵՐՑ ԿՍՏԱՆԱ ԱՅՍ ԶԵՎԻ ՊԱՏՃԵՆԸ
ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ**

ՁԵՎ 5 – ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՁԵՆՔԻ ԱՆՎՏԱՆԳ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԾՆՈՂԻ/ԽՆԱՄԱԿԱԼԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2020-2021 ուս. տարի

Ձև 5-ը պետք է լրացվի Գլենդեյլի հանրային դպրոցների կրթաշրջանի ԲՈՒՈՐ աշակերտների ծնողների կամ խնամակալների կողմից և ԿԱՄ (1)վերադարձվի աշակերտի դպրոցի գրասենյակ, ԿԱՄ (2)առցանց ParentConnection-ում լրացվի «Աշակերտի տարեկան տեղեկատվության նորացում» բաժինը:

Գլենդեյլի հանրային դպրոցների կրթաշրջանի աշակերտների և աշխատակազմի համար անվտանգ ուսումնական միջավայրի ապահովումը մեր գերակա առաջնահերթություններից մեկն է: Մենք բոլոր տեղյակ ենք շրջակա համայնքներում և ողջ երկրում ինքնավնասման կամ հրազենային բռնությունների դեպքերի մասին: Ամեն տարի Կալիֆոռնիայում միջին հաշվով մինչև 18 տարեկան 27 երեխա մահանում է հրազենով կատարված ինքնասպանության պատճառով: Այս միջադեպերից մեծ մասում անչափահասը օրինականորեն ձեռք բերված հրացանը վերցրել է իրենց կամ ազգականի բնակարանից (lawcenter.giffords.org):

Սենատի 172 օրինագծով (2019 թ., հոկտեմբերի 12-ի), Սենատոր Էնտոնի Պորտանտինոյի հեղինակությամբ օրինագիծը Կալիֆոռնիայում հանցագործություն է համարում անչափահասի տանը բռնված կամ բռնաթափված հրազեն պահելը՝ առանց պատշաճ կերպով պահպանելու և զենքը փականքի տակ տեղավորելու կամ հրազենի անվտանգության սարքի օգտագործելու: (California Penal Code Section 25100(A))

Տանը չապահովված զենքերի գոյությունը դպրոցներում ինքնավնասման կամ զենքով կատարված բռնություններից բացի այլ վտանգներ է ներկայացնում մեր աշակերտների համար: Ամեն տարի մինչև 18 տարեկան 350 երեխա պատահաբար կրակում է իր կամ մեկ ուրիշի վրա: Դա մոտավորապես օրը մի կրակոց է (everytownresearch.org):

Մի ուսումնասիրություն պարզել է, որ երեխաների 87%-ը գիտի, թե որտեղ են պահվում իրենց ծնողների զենքերը, իսկ 60 %-ը՝ ձեռք է տվել դրան (Baxley and Miller, 2006): Հետազոտությունները ցույց են տալիս, որ հրազենի ապահով պահեստավորումը 85%-ով նվազեցնում է երեխաների և դեռահասների շրջանում ինքնավնասման և ոչ դիտավորյալ հրազենային վնասվածքների վտանգը (everytownresearch.org): Հրազենի ապահով պահեստավորումը պաշտպանում է տանը բնակվող երեխաներին, ինչպես նաև մեր կրթաշրջանի և ողջ համայնքի երեխաներին:

Երեխայի անվտանգության նախագուշական միջոցները ուժի մեջ են մնում, նույնիսկ եթե երեխաներ չունեն կամ եթե ձեր երեխաները չափահաս են արդեն: Ազգականի կամ հարևանի երեխան կարող է ձեզ այցելել, այդ պատճառով խնդրում ենք միշտ կիրառել հրազենի անվտանգությունը և զենքի ապահով պահպանումը:

Ձենքը սխալ կերպով պահելու հետևանքով վնասվածքներից կամ մահերից խուսափելու համար այն տանը, որտեղ հնարավոր է երեխաների ներկայություն, դուք պետք է բոլոր զենքերը պահեք բռնաթափված, հրազենային անվտանգության սարքով և բռնարկդում փականված: Չինամթերքը պետք է պահվի առանձին՝ հրազենից հեռու:

Դուք կարող եք մանրամասներ իմանալ և ներբեռնել օգտակար ռեսուրսներ, այդ թվում անվտանգ պահեստավորելու փաստերի թերթիկ, ձեր երեխաներին զենքի մասին բացատրելու տեղեկատու ուղեցույց և փաստեր ու ռեսուրսներ երեխաների հրազենային ինքնասպանությունների մասին BeSMARTforKids.org/resources կայքում:

(**Տպատանելով**) Աշակերտի անունը Նույնականացման համարը Դպրոցը Դասարանը

Ծնողի կամ խնամակալի ստորագրությունը Ամսաթիվ

**ՁԵՎ 6 - ՔՍԱՆՉՈՐՄԺՎՄՅԱ ԴԵՂՈՐԱՅՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԳՐԱՖԻԿ
2020-2021 ուս. տարի**

Ձև 6-ը պետք է լրացվի բոլոր այն երեխաների ծնողների կողմից, ովքեր տանը դեղորայք են ընդունում և վերադարձվի իրենց դպրոցի առողջապահության գրասենյակ:

(Տպատառերով) Աշակերտի անունը	Նույնականացման համարը	Դպրոցը	Դասարանը
<u>Դեռի անունը</u>	<u>Դեղաբանակը</u>	<u>Դեռի օգտագործման պատճառը</u>	<u>Դեռն ընդունելու ժամերը</u>
1. _____	_____	_____	_____
2. _____	_____	_____	_____
Բժշկի անունը	Հասցեն	Հեռախոսահամարը	

Սույնով հաստատում եմ, որ իմ համոզմամբ, վերոհիշյալ տեղեկությունները ճիշտ են: Ես տալիս եմ համաձայնությունս, որ դպրոցի բուժքույրը խորհրդակցի երեխայիս բժշկի հետ՝ վերոհիշյալ դոզորայքի օգտագործման հետևանքների, բացասական կողմնակի ազդեցության, բաց թողած կամ գերբարձր դեղաչափերի նշանների և ախտանիշների մասին:

Ծնողի կամ խնամակալի ստորագրությունը	Ամսաթիվ
Հասցեն	Հեռախոսահամարը

Եթե դեղը պետք է օգտագործվի դպրոցում, ձեր բժիշկը պետք է լրացնի ու ստորագրի Ձև HS25-ը **“Դեղը դասերի ընթացքում օգտագործելու մասին պահանջագիր”**, որը կարող էր ստանալ ձեր դպրոցից: Եթե փոխվի դեղը, դեղաբանակը կամ դեռի օգտագործման ժամերը, պետք է նոր պահանջագիր ներկայացվի դպրոցին:



**ՁԵՎ 7 - ՈՒՍՈՒՑՈՒՄԱՆ ԶՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԽՆԴՐԱԳԻՐ
2020-2021 ուս. տարի**

Ձև 7-ը պետք է լրացվի ծնողների կողմից, ովքեր ցանկանում են իրենց երեխային ազատել մարդու բեղմնավորմանն անդրադարձող առարկաների ուսուցումից, և վերադարձվի դպրոցի գրասենյակ:

Ես խնդրում եմ, որ

(Տպատառերով) Աշակերտի անունը	Նույնականացման համարը	Դպրոցը	Դասարանը
ազատվի այն դասերից, որոնք անդրադառնում են հետևյալ թեմաներին՝ _____			
_____ հետևյալ առարկաներից.			

Ես հասկանում եմ, որ դասից ազատված աշակերտները այդ ժամանակահատվածն անց են կացնելու գրադարանում կամ ուսումնական դահլիճում:

Ծնողի կամ խնամակալի ստորագրությունը	Ամսաթիվ
-------------------------------------	---------

**ՁԵՎ 8 – ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ԱՇԱԿԵՐՏԻ ԱՆՎԱՆ, ԼՈՒՍԱՆԿԱՐԻ,
ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՏԵՍԱՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ՉԱՆԱՉԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ
ՀԱՆՐԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ
2020-2021 ուս. տարի**

Թույլտվությունների այս փաթեթը կմնա ուժի մեջ, քանի դեռ աշակերտը համախում է Գլենդեյի հանրային դպրոցներ: Չև 8-ի թույլտվությունները կարող եք ցանկացած պահի փոփոխել Parent Connection-ում կամ դպրոցի միջոցով:

(Տպատառերով) Աշակերտի անունը Նույնականացման համարը Դպրոցը Դասարանը

Այս ձևը թույլտվություն է տալիս կամ արգելում է աշակերտի անունը, լուսանկարը և/կամ տեսապատկերը հրապարակել տեղեկատուներում, դպրոցի/կրթաշրջանի կայքէջում, սոցիալական ցանցերում, լրատվամիջոցներում կամ կրթաշրջանի, լրատվամիջոցների, կրթաշրջանի կողմից վավերացված այլ խմբերի հրապարակումներում:

Աշակերտները երբեմն լուսանկարվում կամ տեսագրվում են լրատվամիջոցների կողմից՝ ուսումնական ծրագրերի, միջոցառումների ու գործունեության մասին ծնողներին ու համայնքին տեղեկացնելու նպատակով: Աշակերտները կարող են նաև լուսանկարվել կամ տեսագրվել դպրոցի կամ կրթաշրջանի կայքէջերի, տեղեկատուների, սոցիալական ցանցի, գովազդային նյութերի կամ հանդիսությունների համար, նրանց ձեռքբերումների գնահատման և պարգևատրման հանդեսի, դպրոցի կամ կրթաշրջանի ուսումնական ծրագրերը կարևորելու կամ իրադարձությունները ներկայացնելու նպատակով:

Կրթաշրջանը հարգում է աշակերտների ու նրանց ընտանիքների տեղեկությունները գաղտնի պահելու իրավունքը: Խնդրում ենք ստորև ընտրել Այո կամ Ոչ պատասխանը:

_____ **Այո, Լիովին թույլատրում եմ.** Ես թույլտվություն եմ տալիս, որ իմ աշակերտի լրիվ անունը, լուսանկարը և/կամ տեսապատկերը օգտագործվի վերը նշված ցանկացած և բոլոր հրապարակումներում:

_____ **Այո, միայն դպրոցի հրապարակումների համար.** Ես թույլտվություն եմ տալիս, որ իմ աշակերտի անուն-ազգանունը, լուսանկարը և/կամ տեսապատկերը օգտագործվեն միայն դպրոցական հրապարակումների համար (օր.՝ տարեգիրք, դասարանի շնորհանդեսներ կամ տպագիր դպրոցական լրատու), որոնք մատչելի չեն հանրությանը:

_____ **Ոչ, մի՛ հրապարակեք աշակերտի մասին որևէ տեղեկատվություն.** Ես թույլ չեմ տալիս, որ իմ աշակերտի անունն օգտագործվի կամ նա լուսանկարվի կամ նկարահանվի որևէ հրապարակման կամ լրատվամիջոցների, այդ թվում տարեգրքի կամ դպրոցական թերթի համար:

_____ Ծնողի կամ խնամակալի ստորագրություն _____ Ամսաթիվ

Նշում. Այս ձևը չլրացնելը նշանակում է դպրոցին/կրթաշրջանին թույլ եք տալիս օգտագործել ձեր աշակերտի անունը, լուսանկարը և տեսապատկերը ցանկացած և բոլոր հրապարակումներում և լրատվամիջոցներում:


**ՁեՎ 9 – ՉԻՆՎՈՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ, ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻՆ, ՔՈՒԵՉՆԵՐԻՆ/
ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻՆ՝ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ 11-ՐԴ ԵՎ 12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ
ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՉՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԽՆԴՐԱԳԻՐ
2020-2021 ուս. տարի**

«Յուրաքանչյուր աշակերտ պետք է հաջողի» (Every Student Succeeds Act (ESSA)) օրենքը կրթաշրջանից պահանջում է՝ զինվորական մարմիններին, ապագա գործատուներին, քոլեջներին ու համալսարաններին պահանջելու պարագայում տրամադրել **ավագ դպրոցի բոլոր 11-րդ և 12-րդ դասարանցիների** անունները, հասցեներն ու հեռախոսահամարները:

Եթե **ավագ դպրոցի 11-րդ և 12-րդ դասարանի** աշակերտ ունեք և **չեք** ցանկանում, որ Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը տրամադրի ձեր 11-րդ և 12-րդ աշակերտների տվյալները, խնդրում ենք լրացնել ստորև նշված տեղեկությունները, ստորագրել և վերադարձնել այն *ձեր երեխայի տնօրենի գրասենյակ*: Եթե ձեր երեխամ 18 տարին անց է, ծնողի կամ խնամակալի փոխարեն նա ինքը պետք է ստորագրի այս ձևը: 10-րդ կամ ավելի ցածր դասարանի աշակերտների մասին ոչ մի տեղեկություն չի հաղորդվում: Խնդրում ենք չլրացնել այս ձևը, եթե աշակերտը 10-րդ կամ ավելի ցածր դասարանի աշակերտ է:

Խնդրում ենք վերադարձնել այս փաստաթուղթը մինչև **ուրբաթ, 2020 թ. հոկտեմբերի 2-ը**, քանի որ պահանջվող տեղեկատվությունը տրամադրվելու է զինվորական մարմիններին **ուրբաթ, 2020թ. հոկտեմբերի 9-ին**:

Հավելյալ հարցերի համար խնդրում ենք զանգահարել Աշակերտների աջակցության ծառայությունների գրասենյակ՝ **(818)241-3111**, ներքին **1285** հեռախոսահամարով:



11-ՐԴ ԵՎ 12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՉՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԽՆԴՐԱԳԻՐ

Խնդրում ենք ստորև տպատառերով լրացնել **ԲՈՒՈՐ** պահանջվող տեղեկությունները.

(**Տպատառերով**) Աշակերտի անունը Նույնականացման համարը Դպրոցը Դասարանը

Խնդրում եմ երեխայիս անունը, հասցեն և հեռախոսահամարը, առանց իմ գրավոր նախնական համաձայնության, չտրամադրել հետևյալներին (նշել մեկը կամ բոլորը)՝

- ԱՄՆ Չինված ուժեր** **Գործատուներ** **Քոլեջ և/կամ Համալսարան**

Ծնողի ստորագրությունը _____

***Աշակերտի ստորագրությունը** _____
(**ՄԻԱՅՆ** էթե 18 տարին լրացել է)

**ՁեՎ 10 – ԱՇԱԿԵՐՏՆԵՐ, ՈՒՄ ԾՆՈՂՆԵՐԸ ԾԱՌԱՅՈՒՄ ԵՆ ՉԻՆՎԱԾ
ՈՒԺԵՐՈՒՄ ԿԱՄ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԱԿԱԽՄԲՈՒՄ
ԼՐԻՎ ԴՐՈՒՅՔՈՎ
2020-2021 ուս. տարի**

Ձև 10-ը պետք է լրացվի և դպրոցի գրասենյակ վերադարձվի միայն այն ծնողների կողմից, ովքեր Ձինված Ուժերի անդամ են:

(Տպաստաներով) Աշակերտի անունը

Նույնականացման համարը

Դպրոցը

Դասարանը

«Յուրաքանչյուր աշակերտ պետք է հաջողի» (Every Student Succeeds Act (ESSA)) օրենքի համաձայն՝ պահանջվում է ներկայացնել այն աշակերտների տվյալները, ում ծնողները կամ խնամակալները Ձինուժի (ցամաքային, ռազմածովային, օդային ուժերի, նավատորմային կամ առափնյա պահակախմբի) կամ լրիվ դրույքով Ազգային պաշտպանության պահակախմբի անդամ են:

Եթե Դուք Ձինված ուժերի անդամ եք, խնդրում ենք ստորև ընտրել մեկ վանդակ և հայտնել ծառայությունը սկսելու և ավարտելու օրը (եթե հայտնի է).

- Ցամաքային (Army)
- Ռազմածովային նավատորմ (Navy)
- Օդային ուժեր (Air Forces)
- Ռազմածովային կորպուս (Marine Corps)
- Առափնյա պահակախումբ (Coast Guard)
- Ազգային պաշտպանության պահակախումբ (National Guard)

Սկսելու ամսաթիվը

Ավարտելու ամսաթիվը(եթե հայտնի է)

Ծնողի կամ խնամակալի ստորագրություն

Ամսաթիվ

**ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
2020-2021 ուս. տարի**

Նահանգային և դաշնային օրենքները դպրոցական կրթաշրջաններից պահանջում են ամեն տարի աշակերտներին, ծնողներին, խնամակալներին, և չափափաս աշակերտներին տեղեկացնել որոշակի իրավունքների ու պարտականությունների մասին: Կալիֆոռնիա նահանգի Կրթության օրենսգրքի 48982 մասի համաձայն ծնողները գրավոր պետք է հաստատեն, որ տեղեկացվել են այս օրենսգրքի հատվածներին: Ձեր ստորագրությամբ չեք համաձայնվում, որ աշակերտը մասնակցի որևէ մասնակի ծրագրի, այլ պարզապես հաստատում եք, որ ստացել եք օրենքով պահանջվող այս ծանուցագիրը: **Բոլոր ծնողները պետք է ստորագրեն Ձև 1-ը և Ձև 2-ը և բոլոր մյուս ձևերը (որոնք այս տեղեկագրի առաջին էջերում են) և երեխաները դրանք պետք է վերադարձնեն իրենց դպրոց:** Եթե հարցեր ունեք, խնդրում ենք կապվել ձեր երեխայի դպրոցի հետ:

ՈՉ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՉ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1964թ. Քաղաքացիական օրենսգրքի Մաս VI, 1972թ. Կրթական բարեփոխումների Մաս IX և 1973թ. Իրավունքների վերականգման օրենքի 504 Բաժին). Ուսումնական խորհուրդն արգելում է կրթաշրջանի ցանկացած դպրոցում և դպրոցական գործունեության ընթացքում անօրինական խտրականություն՝ ներառյալ խտրական ոտնձգություն, ահաբեկում և բռնարարք, ցանկացած անձի կողմից որևէ աշակերտի հանդեպ՝ աշակերտի իրական կամ ենթադրյալ ռասայի, մաշկի գույնի, ծագման, ազգային ծագման, ազգության, ազգային պատկանելության, էթնիկ խմբի, տարիքի, կրոնի, ամուսնական կամ ծնողական կարգավիճակի, ֆիզիկական կամ մտավոր անկարողության, սեռի, սեռական կողմնորոշման, սեռային ինքնության կամ սեռային արտահայտման կամ սույն բնութագրություններից մեկի կամ ավելիի առկայությամբ մեկ անձի կամ խմբի հետ հարաբերություններ ունենալու համար: Կրթաշրջանը քայլեր կձեռնարկի, որպեսզի անգլերեն լեզվի իմացության պակասը կրթաշրջան ընդունելության և ծրագրերին մասնակցելու համար պատենշ չհանդիսանա: Բողոքները, որոնք առնչվում են ոչ խտրականության քաղաքականության խախտմանը պետք է ուղղվեն Դեկտոր Լենա Ռիքտերին (ստորև ներկայացված է ինչպես կապվել): Կրթաշրջանի Բողոքի Համընդհանուր քաղաքականության կրկնօրինակը կարող եք ձեռք բերել զանգահարելով՝ (818) 241-3111, ներքին 1457 հեռախոսահամարով: Կրթաշրջանի Title IX ծրագրի համակարգողն է Դեկտոր Զելի Զինգը, հեռախոսահամար՝ (818) 241-3111: Կրթաշրջանի 504 ծրագրի համակարգողն է պարոն Յակոբ Էօլմիսիքիան, հեռախոսահամար՝ (818) 241-3111.

Ստորև ներկայացված են կրթաշրջանի ղեկավարների և նրանց պատասխանատվության տակ գտնվող ծրագրերի անունները՝

Գերատեսչի օգնական (ուսումնական ծառայություններ)	504 ծրագրեր
	Գնահատում և պատասխանատվություն
	Աթլետիկա
	Կարիերա և տեխնիկական կրթություն(CTE)
	Կատեգորիկ ծրագրեր
	Աշակերտի բարեկեցության ծրագրեր
	Խորհրդատուներ
	Երկլեզվյան/FLAG ծրագիր
	Վաղ կրթություն և Արտադասարանային կրթություն
	Ուսումնական տեխնոլոգիա և տեղեկատվական ծառայություններ
	Տարրական, միջին և ավագ դպրոցներ
	Ընդհանուր ուսումնական ծրագրեր
	Տեղական վերահսկողության հաշվետու ծրագիր (LCAP)
	Մագնետ դպրոցներ
	Ֆիզիկական կրթություն
	Նախակրթարաններ

Անվտանգության ծրագրեր, արտակարգ իրավիճակների ծրագրեր

Հատուկ Կրթություն

Աշակերտների աջակցության ծառայություններ

Դասավանդման և ուսման բաժին

Title IX (Աշակերտների վերաբերյալ)

Բողոքի Համընդհանուր ընթացակարգեր

Մաս 504 (Աշխատակազմի վերաբերյալ)

Աշխատանք և աշխատակիցներ

Title IX

Գլխավոր գրասենյակ

Կառույցներ և աջակցող գործողություններ

Ֆինանսական ծառայություններ

Սննդի ծառայություններ

Պլանավորում և զարգացում

Կադրերի բաժնի գլխավոր պատասխանատու

Բիզնեսի և ֆինանսական հարցերով
գլխավոր պատասխանատու

Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը հանձնառու է յուրաքանչյուր անհատի ընձեռնել կրթության հավասար հնարավորություններ: Կրթաշրջանի ծրագրերը, գործողությունները և կառույցները պետք է զերծ մնան անհատի հանդեպ խտրականությունից, այդ թվում՝ իրական կամ ենթադրյալ ռասայի, մաշկի գույնի, ծագման, ազգության, ազգային պատկանելիության, էթնիկ խմբավորման, տարիքի, կրոնի, ամուսնական կամ ծնողական կարգավիճակի, ֆիզիկական կամ մտավոր անկարողության, սեռի, սեռական կողմնորոշման, սեռային ինքնության կամ արտահայտման կամ սույն բնութագրությամբ անձի կամ խմբի հետ հարաբերություններ ունենալու պատճառով: Անօրինական խտրականության վերաբերյալ բողոքները հետաքննվում են Բողոքի Համընդհանուր գործընթացի միջոցով: Նման բողոքները պետք է ներկայացվեն առաջին անգամ տեղի ունեցած ենթադրյալ խտրականության դեպքից հետո ոչ ուշ, քան վեց ամսվա ընթացքում: Բողոքի դիմումի ձևը կամ հավելյալ տեղեկություններ ձեռք բերելու համար զանգահարեք Դոկտոր Լենա Ռիքտերին՝ Կատեգորիկ ծրագրերի գրասենյակ (818) 241-3111, ներքին 1457 հեռախոսահամարով:

ԿԱԼԻՓՈՐՆԻԱՅԻ ԱՌՈՂՉ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ ՕՐԵՆՔ

Կալիֆոռնիայի առողջ երիտասարդություն օրենքը դպրոցական կրթաշրջաններից պահանջում է աշակերտներին տրամադրել ինտեգրված, համապարփակ, ճշգրիտ և անաչառ ուսուցում սեռական առողջության և HIV-ի կանխարգելման մասին՝ զոնե մեկ անգամ միջին դպրոցում և մեկ անգամ ավագ դպրոցում: Այն նպատակ ունի 7-12-րդ դասարանների աշակերտներին տրամադրել անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ. 1) HIV-ից, սեռական ճանապարհով փոխանցվող այլ վարակներից և անցանկալի հղիությունից պաշտպանվելու համար; 2) զարգացնել առողջ վերաբերմունք դեռահասների աճի և զարգացման, մարմնի պատկերի, սեռի, սեռական կողմնորոշման, հարաբերությունների, ամուսնության և ընտանիքի վերաբերյալ և 3) ունենալ առողջ, դրական և անվտանգ փոխհարաբերություններ և վարքագիծ: Այն նաև նպատակ ունի սեռի ընկալմանը՝ որպես մարդու զարգացման նորմալ մաս:

Ծնողները կամ պաշտոնական խնամակալներն իրավունք ունեն.

1. Ստուգել գրավոր և տեսագրված ուսումնական նյութերը, որոնք օգտագործվում են սեռական առողջության և HIV-ի կանխարգելման համապարփակ կրթության ոլորտում:
2. Գրավոր պահանջել, որ իրենց երեխան սեռական առողջության համապարփակ կրթություն կամ HIV -ի կանխարգելման կրթություն չստանա:
3. Հայցել Կրթության օրենսգրքի 51930-51939 մասերի պատճենը, Կալիֆոռնիայի Առողջ Երիտասարդություն օրենսդրությունը:
4. Տեղեկացվել, թե սեռական առողջության համապարփակ կրթությունը կամ HIV-ի կանխարգելումն ուն կողմից է ուսուցանվելու՝ կրթաշրջանի անձնակազմի, թե՛ դրսից հրավիրված խորհրդատուների:
5. Ուսուցումը սկսելուց առնվազն 14 օր առաջ ծանուցում ստանալ փոստով կամ տեղեկացման այլ սովորական միջոցով, եթե դասավանդումը նախապատրաստվել է ուսումնական տարին սկսելուց հետո:
6. Տեղեկացվել, երբ կրթաշրջանը որոշում է խորհրդատուներ հրավիրել կամ հյուր խոսնակների հետ հանդիպում կազմակերպել սեռական առողջության կամ HIV-ի կանխարգելման համապարփակ ուսուցման համար՝ ա) դասընթացի ամսաթվի և բ) յուրաքանչյուր հյուր խոսնակների կազմակերպության անվան մասին:

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԱՌՈՂՋԱԳԱՀԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Յուրումներ ժամանակավոր անկարողություն ունեցող աշակերտների համար – Կրթության օրենսգիրք, Մասեր 48206.3, 48207, 48208

Ժամանակավոր անկարողություն ունեցող աշակերտը, որի համար անհնար կամ աննպատակահարմար է մասնակցել իր կանոնավոր դասընթացներին կամ այլընտրանքային կրթական ծրագրին, կարող է օրը մեկ ժամ անհատականացված ուսուցում ստանալ տանը: Լրացուցիչ տեղեկությունների համար կապվեք Առողջապահական ծառայությունների հետ:

Ժամանակավոր անկարողություն ունեցող աշակերտը, ով գտնվում է հիվանդանոցում կամ բնակելի այլ բուժհաստատություններում, բացառությամբ պետական հիվանդանոցի, կարող է համարվել, որ հետևել է ըստ բնակավայրի դպրոց հաճախելու պահանջին այն կրթաշրջանում, որտեղ գտնվում է հիվանդանոցը:

Ծնողի կամ խնամակալի պարտականությունն է տեղեկացնել կրթաշրջանին, որի տարածքում գտնվում է հիվանդանոցը կամ բնակելի առողջապահական հաստատությունը, ժամանակավոր անկարողություն ունեցող աշակերտի՝ այնտեղ գտնվելու մասին: Տեղեկացումը ստանալուց հետո կրթաշրջանը հինգ աշխատանքային օրվա ընթացքում պետք է որոշի, արդյոք աշակերտը կստանա անհատականացված ուսուցում ըստ Կրթական օրենսգրքի 48206.3 Մասի, և եթե այո, ապա պետք է ապահովի այդ ուսուցումը հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Ժամանակավոր անկարողություն ունեցող աշակերտը կարող է շարունակել մնալ ըստ բնակավայրի իր կրթաշրջանում կամ չարտերային դպրոցում և մասնակցել կանոնավոր դասընթացներին, եթե հիվանդանոցային պայմանները թույլ են տալիս, երկու տեսակի դպրոցներում էլ ուսուցման ընդհանուր օրերի թիվը չպետք է գերազանցի հինգ օրը, և մասնակցությունը չի կարող կրկնօրինակվել: Անհրաժեշտության դեպքում, բնակավայրի կրթաշրջանը կարող է ուսուցում ապահովել տնային պայմաններում այն օրերի համար, երբ այն չի տրամադրվել հիվանդանոցային պայմաններում՝ ելնելով բժշկի ժամանակավոր պահանջից: Հանախումների համար պատասխանատուն պետք է վստահանա, որ դպրոցական կանոնավոր ծրագրից բացակայությունները հարգելի են համարվել, մինչև որ աշակերտն ի վիճակի լինի վերադառնալ սովորական դպրոցական ծրագրին:

Ավագ դպրոցի պատվավոր ավարտական ատեստատը, որն ակնհայտորեն տարբերվում է սովորական ատեստատից, կարող է շնորհվել հիվանդությամբ տառապող աշակերտին բնակավայրի դպրոցի խորհրդի կողմից, վարչական շրջանի կրթության գրասենյակից կամ չարտեր դպրոցից:

Հղի և ծնող աշակերտներ - Կրթության օրենսգիրք, Մասեր 46015, 48205 և 48980

Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը նույն հարմարվողականությամբ է վերաբերվում է հղի մորը և դեռահաս հորը, անկախ սեռից: Դեռահաս ծնողները չեն կարող մերժվել մասնակցելու որևէ դասի կամ արտադասարանական գործունեության միայն հղիության, ծննդաբերության, կեղծ հղիության, հղիության ընդհատման կամ հետծննդյան վերականգնման պատճառով: Դասերը շարունակելու ֆիզիկական և հոգեկան կարողությունը կարող է որոշվել միայն բժշկի կամ բուժքրոջ կողմից: Հղի կամ ծնող աշակերտները չպետք է պարտադրվեն մասնակցել անչափահաս հղիների ծրագրերին կամ այլընտրանքային ծրագրերի, եթե դա իրենց անձնական ընտրությունը չի:

Ծնողական իրավունքը որպես տարբերակ կտրամադրվի տարեկան ծանուցագրերում կամ կիսամյակի ընթացքում ողջունելի փայթեթների, կողմնորոշումների միջոցով, առցանց, տպագիր կամ անկախ ուսումնական փայթեթներով, որ տրամադրվում են կրթաշրջանի կամ չարտերային դպրոցի բոլոր աշակերտներին:

Ութ շաբաթ տևողությամբ ծնողական արձակուրդը կամ բժշկի հաստատմամբ լրացուցիչ ժամանակն անհրաժեշտ է մանկահասակ երեխաների ծննդյան նախապատրաստման, դեռահաս ծնողների հոգեկան և ֆիզիկական առողջական կարիքների, նորածինների հետ կապվելու կամ նորածնի կամ ծնողների պաշտպանության համար: Լրացուցիչ ժամանակ է տրամադրվում, եթե դա անհրաժեշտ է բժշկական տեսակետից և սահմանված է բժշկի կամ բուժքրոջ կողմից: Հղի և ծնող դեռահասները պարտադիր չէ, որ լրիվ կամ մասնակիորեն վերցնեն իրենց հասանելիք արձակուրդը: Բացակայությունը հաստատվելու է կրթաշրջանի կամ չարտերայինային դպրոցի ղեկավարի կողմից, որպես հարգելի բացակայություն, ինքնուրույն ուսումնառության նույն եզակի կողով: Այնուամենայնիվ, արձակուրդի ընթացքում ոչ մի աշխատանք չի պահանջվում կատարել: Վերադառնալու պես, ծնող պատանիներն իրավունք ունեն

վերադառնալ դպրոցական դասընթացներին, որոնցում գրանցվել էին արձակուրդից առաջ: Բաց թողածը հաղթահարելու ծրագրերը կազմելուն և դասերը վերսկսելուն կօգնեն խորհրդատուն կամ որևէ ղեկավար մարմին բոլոր աշխատանքներին լիարժեք մասնակցելու հնարավորություն ունենալու համար, ինչպես որ նախքան արձակուրդն էր: Անհրաժեշտության դեպքում դեռահաս ծնողները, ովքեր սովորում էին այլընտրանքային դպրոցական հաստատությունում, դպրոցն ավարտելու համար կարող են վերադառնալ այդ հաստատություն: Աշակերտը չպետք է ենթարկվի որևէ ակադեմիական տույժի այս հնարավորություններն օգտագործելու պատճառով:

Երեխայի հիվանդությանը համար խնամատար դեռահաս ծնողներից բժշկից թուղթ չի պահանջվում. մայրը կամ հայրը թույլտվություն կստանան հաճախումները վերահսկողի կողմից:

Գաղտնի բժշկական ծառայություններ – Կրթության օրենսգիրք, Մաս 46010.1

Դպրոցի ղեկավարությունը կարող է թույլ տալ դասերից դուրս գալ 7-12-րդ դասարանների ցանկացած աշակերտի՝ գաղտնի բժշկական ծառայություններ ստանալու համար, առանց աշակերտի ծնողի կամ խնամակալների համաձայնության:

Անաֆիլակսիայի հրատապ բուժում - Կրթության օրենսգիրք, Մաս 49414

Դպրոցական կրթաշրջաններից պահանջվում է Էպինեֆրինի ավտոմատ ներարկիչներ ապահովել դպրոցների բուժքույրերին և վերապատրաստված անձնակազմին և թույլ տալ նրանց օգտագործել Էպինեֆրինի ավտոմատ ներարկիչները ցանկացած աշակերտի համար, ով կարող է անաֆիլաքսիա ունենալ, անկախ հիվանդության պատմությունից: Անաֆիլաքսիան ծանր և կյանքին վտանգ պատճառող ալերգիկ ռեակցիա է, որը կարող է առաջանալ ալերգիան խթանող հանգամանքների ազդեցությամբ, ինչպիսիք են՝ սնունդը, դեղամիջոցը, միջատների խայթոցը, լստեքսը կամ մարգանքը: Ախտանշաններից են շնչուղիների նեղացումը, ցանր կամ մոլաքորը, սրտխառնոցը կամ փսխումը, թույլ զարկերակը և գլխապտույտը: Ենթադրվում է, որ անաֆիլակսիկ ռեակցիաների մոտավորապես 25% -ը տեղի է ունենում դպրոցական ժամերին այն աշակերտների մոտ, ովքեր նախկինում չեն ախտորոշվել սննդի կամ այլ ալերգիաներով: Առանց Էպինեֆրինի անհապաղ օգտագործման, որից հետո էլ շտապ բժշկական օգնություն կանչելու, հիվանդը կարող է մահանալ: Արագ նկատելը և այն բուժելը կարող է կյանքեր փրկել:

Գեղամիջոցների ընդունում – Կրթության օրենսգիրք, Մաս 49480

Ցանկացած աշակերտ, ով դպրոցական ժամերի ընթացքում պետք է բժշկի կողմից նշանակված դեղորայք ընդունի, կարող է օգնություն ստանալ դպրոցի բուժքրոջ կամ նշանակված այլ անձնակազմի կողմից, եթե դպրոցների կրթաշրջանը ստանում է բժշկի գրավոր ցուցումները՝ մանրամասնելով դեղի ընդունման եղանակը, քանակը և ժամանակը, և խնդրանք դպրոցի բուժքրոջը, որպեսզի աշակերտին օգնի բժշկի կողմից սահմանված դեղամիջոցներն ընդունել: ԿՕ 49423 Բժշկի ցուցումները պետք է ստորագրի նաև ծնողը/խնամակալը: Աշակերտը կարող է կրել և ինքնուրույն կառավարել ավտոմատ ներարկվող Էպինեֆրինը կամ աթթմայի ինհալացիոն դեղամիջոցները, եթե կրթաշրջանը ստանում է բժշկի գրավոր ցուցումներն այդ դեղի ընդունման ձևի, քանակի և ժամանակի մանրամասն նկարագրությամբ և ծնողի կամ խնամակալի կողմից գրավոր թույլտվությունը: Բոլոր պահանջները պետք է հաստատվեն դպրոցի բուժքրոջ կողմից՝ նախքան դեղի օգտագործումը:

Եթե ձեր երեխան հատուկ դեղորայք է ընդունում, ապա լրացրեք Ձև 6-ը և այն վերադարձրեք երեխայի դպրոցի առողջապահության գրասենյակ:

Ուղեցույցներ, որոնք պետք է նկատի ունենաք

1. Խոսքը ձեր երեխայի բժշկի հետ երեխայի դեղորայք ընդունելու գրաֆիկի մասին, որպեսզի ձեր երեխան ստիպված չլինի դեղ ընդունել դպրոցում:
2. Եթե ձեր երեխան կանոնավոր կերպով դեղ է ընդունում ընթացիկ առողջական խնդիրների համար, նույնիսկ եթե նա դեղը օգտագործում է միայն տանը, գրությամբ տեղեկացրեք դպրոցի բուժքրոջը կամ դպրոցի պաշտոնյային յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին: Դուք պետք է նշեք դեղերի անունները, դրանց ընդունման դեղաչափը և դեղը նշանակող բժշկի անունը (ԿՕ § 49480):
3. Եթե ձեր երեխան դեղը պետք է ընդունի դպրոցում, նրա հետ երկտող ուղարկեք դպրոց, ինչպես նաև երկտող ձեր երեխայի բժշկից, ով լիազորված է բժշկությամբ զբաղվել Կալիֆոռնիա նահանգում: Ամեն տարի՝ ուսումնական տարվա սկզբին թարմացրեք դպրոցին տրամադրված ձեր տեղեկությունները, եթե որևէ փոփոխություն կա դեղորայքի, ցուցումների կամ բժշկի վերաբերյալ (ԿՕ § 49423):

4. Որպես ծնող կամ խնամակալ, դուք պետք է դպրոցին տրամադրեք այն բոլոր դեղերը, որոնք ձեր երեխան պետք է ընդունի դպրոցական օրվա ընթացքում: Դուք կամ մեկ այլ չափահաս պետք է դեղը բերի դպրոց, բացառությամբ այն դեպքի, երբ ձեր երեխային թույլատրվում է դեղը կրել իր հետ:
5. Բոլոր հսկվող դեղերը, ինչպես Ռիտալինը, պետք է հաշվվեն և գրանցվեն դպրոցի դեղորայքի մատյանում: Դուք կամ մեկ այլ չափահաս, ով առաքել է դեղը, պետք է ստուգի քանակը և ստորագրի մատյանում:
6. Յուրաքանչյուր դեղամիջոց, որ ձեր երեխան պետք է ստանա դպրոցում, պետք է պահվի առանձին տուփիկում՝ պիտակավորված է Միացյալ Նահանգներում արտոնագրված դեղագործի կողմից: Տուփիկը պետք է ունենա ձեր երեխայի անունը, բժշկի անունը, դեղամիջոցի անվանումը և ցուցումներ՝ երբ և ինչ քանակով ընդունել դեղը:
7. Ետ վերցրեք բոլոր դադարեցված, հնացած և/կամ չօգտագործված դեղերը մինչև ուսումնական տարվա ավարտը:
8. Տեղյակ եղեք և հետևեք ձեր երեխայի դպրոցի դեղորայքային քաղաքականությանը: Դպրոցական խորհուրդը իր ժողովներում կարող է ցանկացած պատճառով փոփոխել կամ չեղարկել իրենց վարած քաղաքականությունը:

Կալիֆոռնիայում Երեխայի Առողջության և Հաշմանդամության կանխարգելման ծրագիր (HSC), Մասեր 124100 և 124105

Երեխայի առողջության և հաշմանդամության կանխարգելման (CHDP) ծրագրի համաձայն աշակերտները պետք է ամբողջական ֆիզիկական քննություն անցնեն մինչև 1-ին դասարան գնալը: Այս ստուգումը կարելի է կատարել մանկապարտեզի տարիքում, 18 ամսականից հետո և նախքան 1-ին դասարան գնալը: Այս քննությունն անվճար է Մեդիքալ ապահովագրություն ունեցող աշակերտների համար: Այն երեխաները, ովքեր բժշկական ապահովագրություն չունեն, կարող են CHDP-ի ֆիզիկական քննությունն անցնել տեղական County Health կոչվող բաժանմունքում:

Բերանի խոռոչի ստուգում - Կալիֆոռնիայի կրթության օրենսգիրք, Մաս 49452.8

Այս օրենքը պահանջում է, որ ձեր երեխան բերանի խոռոչի բժշկական քննություն անցնի մինչև մայիսի 31-ը՝ անցումային մանկապարտեզի/մանկապարտեզի կամ 1-ին դասարանի տարիքում՝ մինչև առաջին անգամ հանրային դպրոց հաճախելը: Օրենքը սահմանում է, որ քննությունը պետք է իրականացնի արտոնագրված ատամնաբույժը կամ առողջապահության արտոնագրված մասնագետը: Դպրոց գնալուց 12 ամիս առաջ կատարված բերանի խոռոչի քննությունը համարվում է ընդունելի: Եթե չեք կարող ձեր երեխային քննության տանել, ապա դուք կարող եք ազատվել այս պահանջից՝ պահանջվող ձևի 3-րդ բաժինը լրացնելով:

Պարտադիր առողջական ստուգումներ - Կալիֆոռնիայի կրթության օրենսգիրք, Մաս 49451

Ծնողները կարող են ամեն տարի դպրոցի տնօրենին գրավոր գրություն ներկայացնել՝ իրենց երեխային ֆիզիկական քննությունից ազատելու համար: Եթե հավաստի պատճառ կա կարծելու, որ երեխան տառապում է որևէ հայտնի վարակիչ հիվանդությամբ, ապա երեխան պետք է դպրոց չգա: Դպրոցի բուժքույրերը տեսողության և լսողության պարտադիր քննություններ են անցկացնում մանկապարտեզի, 2-րդ, 5-րդ, 8-րդ և 11-րդ դասարանի աշակերտների համար, իսկ սկոլիոզի քննությունն աղջիկների համար անցկացվում է 7-րդ և տղաների համար 8-րդ դասարանում:

Պատվաստումներ – Կրթության օրենսգիրք, Մասեր 49403, 48216, HSC 120325, 120335, 120365, 120370, 120375

Աշակերտները պետք է պատվաստվեն որոշակի վարակիչ հիվանդությունների դեմ: Աշակերտներին արգելվում է դպրոց հաճախել, քանի դեռ ըստ տարիքի և դասարանի պատվաստումների պահանջները չեն կատարված: Կրթաշրջանը պետք է անհրաժեշտ միջոցներով համագործակցի տեղական առողջապահության ներկայացուցիչների հետ՝ դպրոցական տարիքի երեխաների մոտ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման հարցերում: Կրթաշրջանը կարող է օգտագործել ցանկացած նյութական միջոցներ, գույք կամ անձնակազմ և կարող է թույլ տալ, որ ցանկացած արտոնագրված բժիշկ կամ գրանցված բուժքույր պատվաստումներ անեն ցանկացած աշակերտի, որի ծնողները գրավոր համաձայնություն են տվել:

2016 թվականի հունվարի 1-ից որևէ դպրոցում սովորող աշակերտների ծնողներն այլևս իրավունք չունեն պահանջվող պատվաստումներից հրաժարվել անձնական հավատալիքներից ելնելով: Մինչև 2016 թվականի հունվարի 1-ը դպրոցի փաստաթղթերում առկա անձնական համոզմունքների հիման վրա ազատումը վավեր

կմնա մինչև 2016 թվականի հունվարի 1-ը, մինչև աշակերտը փոխադրվի հաջորդ դասարան (ներառյալ անցումային մանկապարտեզը) կամ 7-րդ դասարան:

Աշակերտները պարտավոր չեն պատվաստումներ կատարել, եթե հաճախում են տնային ուսուցմամբ մասնավոր դպրոց կամ ուսումնառության ինքնուրույն ծրագիր ունեն և չեն հաճախում դպրոց: Այնուամենայնիվ, ծնողները պետք է շարունակեն այդ աշակերտների պատվաստումների տվյալները տրամադրել իրենց դպրոցներին: Պատվաստումների պահանջը չի արգելում աշակերտներին օգտվել իրենց անհատականացված ուսումնական ծրագրով տրամադրված հատուկ կրթության և հարակից ծառայություններից:

Ոչ լիովին պատվաստված աշակերտին կարող են ժամանակավորապես մերժել դպրոց կամ այլ հաստատություն հաճախել, երբ այդ երեխան ենթակա է տվյալ հիվանդության վտանգին, և որի պատվաստման փաստաթղթերում ապացույց չկա վերը նկարագրված վարակիչ հիվանդություններից մեկի դեմ պատվաստման կարգավիճակի մասին:

Պետական օրենսդրությունը պահանջում է հետևյալ պատվաստումները նախքան երեխայի դպրոց հաճախելը.

(ա) Բոլոր նոր աշակերտները, անցումային մանկապարտեզից մինչև 12-րդ դասարան, պետք է Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանին տրամադրեն պոլիոյի, դիֆթերիայի, կապույտ հազի, տետանուսի (փայտացման), կարմրուկի, խոզուկ, կարմրախտի և ջրծաղիկի դեմ պատվաստումների ապացույցներ:

(բ) Անցումային մանկապարտեզի և մանկապարտեզի բոլոր սաները պետք է ներկայացնեն նաև հեպատիտ B-ի դեմ պատվաստումների ապացույց:

(գ) Յոթերորդ դասարանի բոլոր աշակերտները պետք է նաև ներկայացնեն կարմրուկի դեմ երկրորդ և կապույտ հազի դեմ պատվաստումների ապացույցներ:

Ձեր աշակերտին պատվաստումներից բժշկական կամ անձնական հավատալիքների հիման վրա ազատվելու մասին տեղեկատվություն կգտնեք www.shotsforschools.org կայքում:

2-րդ տեսակի շաքարախտի մասին ծանուցում - Կրթության օրենսգիրք, Մաս 49452.7

Կալիֆոռնիայի կրթության վարչությունը Կալիֆոռնիայի հանրային առողջության վարչության, Ամերիկյան շաքարախտի ասոցիացիայի, Կալիֆոռնիայի դպրոցական բուժքույրերի կազմակերպության և Օրինջ վարչաշրջանի երեխաների հիվանդանոցի հետ համագործակցելով մշակել է 2-րդ տեսակի շաքարախտի վերաբերյալ հետևյալ տեղեկությունը: Սկսած 2010 թ. հուլիսի 1-ից այն պետք է տրամադրվի բոլոր 7-րդ դասարանցիների ծնողներին կամ խնամակալներին:

Նկարագրություն՝

2-րդ տեսակի շաքարախտը ամենատարածված տեսակն է մեծահասակների մոտ:

1. Մինչև մի քանի տարի առաջ 2-րդ տեսակի շաքարախտը հազվադեպ էր հանդիպում երեխաների մոտ, սակայն այն ավելի է տարածվել, հատկապես՝ մարմնի ավելորդ քաշ ունեցող երեխաների մոտ:
2. Ամերիկայի Միացյալ Նահանգների հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնների (CDC) տվյալների համաձայն՝ 2000թ.-ից հետո ծնված երեք երեխաներից մեկը իր կյանքի ընթացքում ձեռք կրերի 2-րդ տեսակի շաքարախտ:

2-րդ տեսակի շաքարախտն ազդում է շաքարը (գլուկոզան) էներգիայի վերածելու մարմնի կարողության վրա:

1. Մարմինը սննդամթերքի ածխաջրերը գլուկոզայի է վերածում, որը հիմնական վառելիք է հանդիսանում մարմնի բջիջների համար:
2. Ենթաստամոքսային գեղձը սկսում է ինսուլին արտադրել՝ մի հորմոն, որը գլուկոզան արյան միջից փոխանցում է բջիջներին:
3. 2-րդ տեսակի շաքարախտի դեպքում, մարմնի բջիջները դիմադրում են ինսուլինի ազդեցությանը, ուստի բարձրանում է արյան շաքարի մակարդակը:
4. Ժամանակի ընթացքում՝ արյան մեջ գլուկոզան հասնում է վտանգավոր բարձր մակարդակի, որը կոչվում է հայպերգլիսեմիա:
5. Հայպերգլիսեմիան կարող է հանգեցնել այնպիսի առողջական խնդիրների, ինչպիսիք են սրտի հիվանդությունը, կուրությունը և երիկամների աշխատանքի խանգարմանը:

2-րդ տեսակի շաքարախտի հետ կապված վտանգի գործոններ - Առաջարկվում է, որպեսզի 2-րդ տեսակի շաքարախտի հետ կապված նախանշաններ ցույց տվող կամ հավանաբար վտանգի առջև կանգնած աշակերտները քննվեն այս հիվանդության համար: Հետազոտողներն լիովին չեն հասկանում, թե ինչ պատճառներով է ոմանց մոտ զարգանում 2-րդ տեսակի շաքարախտ: Այնուամենայնիվ, հետևյալ գործոնները կապված են երեխաների շրջանում 2-րդ տեսակի շաքարախտի աճող վտանգի հետ:

1. Մարմնի ավելորդ քաշ - Երեխաների մոտ 2-րդ տեսակի շաքարախտի ամենամեծ վտանգը մարմնի ավելորդ քաշն է: Միացյալ Նահանգներում հինգ երեխայից մեկը մարմնի ավելորդ քաշ ունի: Ծաքարախտով հիվանդանալու հնարավորությունները կրկնակի շատանում են ավելորդ քաշ ունեցող երեխայի մոտ:

2.Ընտանիքի շաքարախտի պատմությունը – Ծատ շաքարախտով երեխաների և երիտասարդների առնվազն մեկ ծնողը շաքարախտ ունի կամ առկա է հիվանդության ընտանեկան պատմություն:

3. Պասիվ ապրելակերպը - Ակտիվ չլինելը իջեցնում է ինսուլինի նկատմամբ մարմնի դիմադրողականությունը:

4.Ռասային/Էթնիկական խմբեր – Բնիկ ամերիկացիները, աֆրիկացի ամերիկացիները, իսպանացի/լատինամերիկյան կամ ասիացի/խաղաղ-օվկիանոսյան բնակիչներն ավելի մեծ հավանականություն ունեն հիվանդանալու 2-րդ տեսակի շաքարախտով, քան այլ էթնիկ խմբերը:

5.Սեռական հասունություն – Արբունքի տարիքի հասած պատանիները ավելի մեծ հավանականություն ունեն հիվանդանալու 2-րդ տեսակի շաքարախտով, քան փոքր տարիքի երեխաները, քանի որ բարձրանում է հորմոնների մակարդակը և կարող է ինսուլինի հանդեպ դիմադրություն առաջացնել՝ մարմնական արագ աճի ու զարգացման այս փուլում:

2-րդ տեսակի շաքարախտի նախանշաններն ու ախտանիշները – 2-րդ տեսակի շաքարախտի նախանշաններն ու ախտանիշները դանդաղ են զարգանում և ի սկզբանե կարող են որևէ նախանշան ցույց չտալ: Այնուամենայնիվ, ինսուլինի դիմադրությամբ կամ 2-րդ տեսակի շաքարախտով հիվանդ ոչ բոլորի մոտ են երևում այս ախտանիշները, և պարտադիր չէ, որ այս ախտանիշները ունեցող անձինք շաքարախտ ունենան՝

1. Քաղցի զգացում՝ անզամ ուտելուց հետո
2. Մարմնի քաշի անբացատրելի կորուստ
3. Ծարավի զգացողության աճ, բերանի չորություն և հաճախամիզություն
4. Հոգնածության զգացում
5. Խամրած տեսողություն
6. Վերքերի կամ կտրվածքների դանդաղ ապաքինում
7. Մուգ թավշային մաշկի գույն, հատկապես՝ վզի ետևում կամ թևերի տակ
8. Աղջիկների մոտ անկանոն դաշտան, դաշտանի բացակայություն և/կամ երեսի ու մարմնի վրա չափից ավելի մազակալում:
9. Արյան բարձր ճնշում կամ անկանոն արյան ճարպերի մակարդակի բարձրացում:

2-րդ տեսակի շաքարախտի կանխման մեթոդներն ու բուժումը. Առողջ ապրելակերպը կարող է կանխել և բուժել 2-րդ տեսակի շաքարախտը: Անզամ էթե ընտանիքում առկա է շաքարախտի պատմություն, ճիշտ չափաբաժիններով առողջ սննունդը և կանոնավոր ֆիզիկական վարժությունները կարող են օգնել երեխաներին ձեռք բերել և պահպանել նորմալ մարմնի քաշ և արյան գլուկոզայի նորմալ մակարդակ:

1. **Սնվեք առողջ** – Կատարեք սննդի խելացի ընտրություն: Կերեք ցածր ճարպով և կալորիաներով սնունդ:
2. **Ֆիզիկապես ավելի ակտիվ եղեք.** Օրական գոնե 60 րոպե մարզվեք:
3. **Դեղ օգտագործեք** – Եթե սննդակարգը և մարզանքը բավական չեն շաքարախտը կանխելու համար, հավանաբար պետք է դեղ օգտագործել 2-րդ տեսակի շաքարախտը բուժելու համար:

2-րդ տեսակի շաքարախտը բուժելու առաջին քայլը բժշկին այցելելն է: Բժշկը, ելնելով երեխայի տարիքից, քաշից և հասակից, կարող է որոշել՝ երեխայի մարմնի քաշը ավել է, թե ոչ: Բժիշկը կարող է նաև պահաջել, որ երեխան արյան գլուկոզայի քննություն հանձնի, պարզելու համար, արդյոք վերջինս շաքարախտ ունի կամ նախաշաքարախտային էտալում է, թե ոչ (պայման, որը կարող է հանգեցնել 2-րդ տեսակի շաքարախտի):

Ծաքարախտի տեսակները ստուգելու քննություններից են՝

1. **Glycated hemoglobin (A1C) քննություն.** Արյան քննությունը չափում է ավելի քան երկուսից երեք ամսվա արյան շաքարը: Եթե երկու առանձին քննությունների ընթացքում A1C մակարդակը 6.5 տոկոս է կամ ավելի բարձր, ցույց է տալիս շաքարախտի առկայություն:
2. **Պատահական արյան շաքարի քննություն (ոչ սոված վիճակում).** Արյան նմուշ է վերցվում պատահական ժամանակ: Մեկ դեցիլիտրի մեջ 200 միլիգրամ կամ ավելի արյան շաքարի

մակարդակը նշանակում է շաքարախտի առկայություն: Այս քննության արդյունքները պետք է հաստատվեն սովորական վիճակում արված քննության արդյունքներով:

3. **Սովորական վիճակում արյան քննություն.** Արյան նմուշը վերցվում է ամբողջ գիշեր չուտելուց հետո: Նորմալ է, եթե արյան մեջ շաքարը մեկ դեցիլիտրի մեջ 100 միլիգրամից քիչը է: 100-125 միլիգրամը համարվում է շաքարախտի ենթակա, իսկ 126 միլիգրամից բարձրը՝ հաստատված երկու տարբեր քննություններով, համարվում է շաքարախտով հիվանդ:
4. **Գլուկոզայի հանդուժողականության քննություն.** Այս քննությունը չափում է սովորական վիճակում արյան մեջ շաքարի քանակը՝ մի քանի ժամվա ընթացքում շաքարաչուր խմելուց հետո: Երկու ժամից հետո 200 միլիգրամ արդյունքը ցույց է տալիս շաքարախտի առկայություն:

Երեխաների մոտ 2-րդ տեսակի շաքարախտը կանխարգելի/բուժելի հիվանդություն է, և այս տեղեկությունները նպատակաուղղված են այս հիվանդության վերաբերյալ իրազեկությունը բարձրացնելուն: Որևէ հարց ունենալու դեպքում, կապ հաստատեք ձեր երեխայի դպրոցի բուժքրոջ, դպրոցի ղեկավարի կամ բժշկի հետ:

Տեղեկատվական աղբյուրներ՝

- American Diabetes Association Clinical Journal
- Helping Children with Diabetes Succeed: A Guide for School Personnel
- KidsHealth
- Mayo Clinic
- National Library of Medicine (NLM) and National Institutes of Health's (NIH) MedLine
- U.S. Centers for Disease Control and Prevention

Հարցերի համար՝ Աշակերտների աջակցության ծառայություն – www.cde.ca – (916) 319-0284

Գլխուղեղի ցնցումներ և գլխի վնասվածքներ - Կրթության օրենսգիրք, Մաս 49475

Գլխուղեղային ցնցումը ուղեղային այն վնասվածքն է, որն առաջանում է գլխի հարվածից կամ ցնցումից կամ մարմնին որևէ հարվածից, որի ուժգնությունը փոխանցվում է գլխին: Թեև ցնցումների մեծ մասը թեթև են, դրանք բոլորն էլ համարվում են լուրջ և կարող են բարդություններ առաջացնել, այդ թվում՝ երկարատև ուղեղի վնասվածք և մահ, եթե ժամանակին չախտորոշվեն և չբուժվեն: Կրթաշրջանը, չարտերային դպրոցը կամ մասնավոր դպրոցը, որն իր ընտրությամբ մարզական ծրագիր է առաջարկում, կասկածի դեպքում պետք է անհապաղ հեռացնի ամբողջ օրով այն մարզիկին, որը կասկածվում է այդ գործունեության ընթացքում գլխուղեղի ցնցում կամ գլխի վնասվածքներ ստանալու մեջ: Մարզիկը չի կարող վերադառնալ այդ գործունեությանը, քանի դեռ չի ստուգվել, գնահատվել և գրավոր թույլտվություն ստացել արտոնագրված բուժաշխատողի կողմից: Եթե արտոնագրված բուժաշխատողը որոշում է, որ մարզիկը գլխուղեղի ցնցում կամ գլխի վնասվածք ունի, ապա մարզիկը պարտավոր է լրացնել խաղերը վերսկսելու արձանագրություն՝ առնվազն 7 օր արտոնագրված բուժաշխատողի հսկողության ներքո գտնվելուց հետո: Տարեկան կտրվածքով, գլխուղեղի ցնցումների և գլխի վնասվածքների վերաբերյալ տեղեկատվական թերթիկը պետք է մարզիկի և մարզիկի ծնողի/խնամակալի կողմից ստորագրվի և վերադարձվի նախքան մարզումների կամ մրցումների սկսելը: Այս պահանջը չի տարածվում այն մարզիկների վրա, ովքեր ընդգրկվում են մարզական գործունեության մեջ սովորական դպրոցական օրվա ընթացքում կամ ֆիզիկական դաստիարակության դասընթացի շրջանակներում:

Վերահսկվող նյութեր. Օփիոիդներ - Կրթության օրենսգիրք, Մաս 49476

Դպրոցական ղեկավարությունը յուրաքանչյուր ուսումնական տարի պետք է փաստեր տրամադրի մարզիկների համար օփիոիդի օգտագործման վտանգի և կողմնակի ազդեցությունների վերաբերյալ: Ծնողները և մարզիկ աշակերտները պետք է ամեն տարի ստորագրեն փաստաթուղթը ստանալու հավաստագրումը:

Բժշկական կամ հիվանդանոցային ծառայություններ - Կրթության օրենսգիրք, Մաս 49472

Գլխուղեղի հանրային դպրոցների կրթաշրջանը չի տրամադրում մատչելի բժշկական և հիվանդանոցային ծառայություններ դպրոցական գործունեության կամ հանախումների հետ կապված պատահարներից վնասված աշակերտներին:

**ՎԼԽՈՒՂԵՂԻ ՑՆՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱԳԻՐ
2020-2021 ուս. տարի**

**ՎԼԽՈՒՂԵՂԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՊՐՈՑՆԵՐԻ ԿՐԹԱԾՐՉԱՆ
ՎԼԽՈՒՂԵՂԻ ՑՆՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱԳԻՐ
(Կիրառելի է միայն 2020-2021 ուս. տարվա համար)**

ՓԱՍՏԵՐ

Գլխուղեղային ցնցումը ուղեղային այն վնասվածքն է, որն առաջանում է գլխի հարվածից կամ ցնցումից կամ մարմնային որևէ հարվածից, որի ուժգնությունը փոխանցվում է գլխին: Գլխուղեղային վնասվածքները լինում են մեղմից մինչև ծանր աստիճանի և կարող են խաթարել ուղեղի նորմալ աշխատանքը: Թեև ցնցումների մեծ մասը թեթև են, **բայց դրանք բոլորն էլ կարող են լուրջ հետևանքներ ունենալ և բարդություններ առաջացնել, այդ թվում՝ երկարատև ուղեղի վնասվածք և մահ, եթե ժամանակին չախտորոշվեն և չբուժվեն:** Գլխուղեղի ցնցման նշանները տեսանելի չեն և սպորտով զբաղվելու ընթացքում տեղի ունեցած ցնցումները չեն առաջացնում գիտակցության կորուստ: Կան զանազան նշաններ ու ախտանշաններ, որոնք կարող են ի հայտ գալ վնասվածքից անմիջապես հետո կամ հնարավոր է ժամեր կամ օրեր տևել, մինչև դրանք ամբողջությամբ երևան գան: Եթե ձեր երեխամ ձեզ հայտնում է ցնցման որևէ ախտանիշի մասին կամ եթե դուք որևէ նշաններ եք նկատում, անմիջապես դիմեք բժշկի:

Ախտանիշներ.

- Գլխացավեր
- «Գլխի մեջ ճնշման զգացում»
- Սրտխառնոց կամ փսխում
- Պարանոցի ցավ
- Հավասարակշռության խնդիրներ կամ գլխապտույտ
- Պոտորված կամ երկակի տեսողություն
- Լույսի կամ ձայնի հանդեպ զգայունություն
- Դանդաղաշարժություն կամ դանդաղ կոտորության զգացողություն
- Երերունության զգացողություն
- Քնկոտություն
- Քնի ժամերի փոփոխություն
- Հիշողության կորուստ
- «Լավ չգալու զգացողություն»
- Հոգնածություն կամ թուլություն
- Տխրություն
- Նյարդայնություն կամ անհանգստություն
- Դյուրագրգռություն
- Հուզվածություն
- Ծփոթվածություն
- Կենտրոնանալու կամ հիշողության խնդիրներ (մոռանալ խաղի կանոնները)
- Նույն հարցի/մեկնաբանության կրկնություն

Գլխուղեղային ցնցումով խաղալու կամ մրցությանը ժամանակից շուտ վերադառնալու վտանգները.

Գլխուղեղային ցնցումով կամ ախտանիշերով մարզիկը պետք է անմիջապես հեռացվի խաղից: Գլխուղեղային ցնցումով կամ ախտանիշերով պատանի մարզիկի խաղը շարունակելը նրան ենթակա է դարձնում հատկապես ավելի մեծ վնասվածքների: Գլխուղեղային ցնցում ստանալուց հետո որոշ ժամանակահատվածում կա ավելի էական վտանգ՝ մասնավորապես, եթե մարզիկը մեկ այլ ցնցում ստանա՝ նախքան առաջին ցնցումի լրիվ ապաքինումը: Այն կարող է ավելի երկար ապաքինում պահանջել կամ գլխուղեղային ուռուցքի հանգեցնել (երկրորդային ազդեցության ախտանիշ), որը կործանարար և նույնիսկ ճակատագրական հետևանքներ կարող է ունենալ: Հայտնի է, որ պատանի մարզիկները թերի են զեկուցում իրենց ախտանիշների կամ վնասվածքների մասին: Ցնցումները տարբեր չեն լինում: Ուստի, ղեկավար մանկավարժներին, մարզիչներին, ծնողներին ու աշակերտներին այդ ուղղությամբ կրթելը մարզիկ-աշակերտի անվտանգության գլխավոր գրավականն է:

Եթե կարծում եք, որ ձեր երեխան գլխուղեղային ցնցում է ստացել.

Կալիֆոռնիայի համադպրոցական դաշնությունը (CIF) պահանջում է, որ գլխուղեղային վնասվածք կամ ցնցում ստացած մարզիկ աշակերտը, այդ պահին և ամբողջ օրով հեռացվի խաղից և մի քանի ժամ վերահսկողության տակ գտնվի: Խաղից հեռացված աշակերտը չի կարող խաղին վերադառնալ՝ մինչև չքննվի գլխուղեղային ցնցման հարցով զբաղվող լիազորված և վերապատրաստված բուժապատրաստողի կողմից և խաղին վերադառնալու համար վերջինիցս չստանա գրավոր թույլտվություն:

Դուք պետք է նաև ձեր երեխայի մարզիչին տեղեկացնեք, եթե կարծում եք, որ երեխան գլխուղեղային ցնցում է ստացել: Հիշեք, որ ավելի լավ է չմասնակցել մեկ խաղի, քան ամբողջ տարվա խաղերին: Եթե կասկած ունեք, հիշեք, որ առաջնայինը մարզիկի առողջությունն է:

ԱՃԱԿԵՐՏԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
Կալիֆոռնիայի կրթության Օրենսգիրք, Մաս 49472

Կրթաշրջանը կարող է վթարային վնասվածքի ապահովագրություն տրամադրել աշակերտներին այն վնասվածքների համար, որոնք պատահում են դպրոցական սովորական օրերին՝ դպրոցի կողմից հովանավորվող աշխատանքների կամ դպրոցական փոխադրամիջոցներով տեղաշարժվելու ժամանակ: Աշակերտական ապահովագրության տեղեկաթերթիկները նախակրթարանից վեցերորդ դասարանների յուրաքանչյուր աշակերտի հետ տուն են ուղարկվում ուսումնական տարվա առաջին շաբաթվա ընթացքում: Հետո այդ ձևերը տրվում են նորեկ աշակերտների ծնողներին: Միջին և ավագ դպրոցներում աշակերտի ապահովագրության վերաբերյալ դիմումները կարելի է ստանալ յուրաքանչյուր դպրոցից կամ դրանք էլեկտրոնային փոստով ուղարկվում են ծնողներին: Դրանք տեղակայվում են նաև կրթաշրջանի կայքում (www.gusd.net)՝ Բիզնես ծառայությունների բաժնում: Ծնողը կամ խնամակալը վճարում են այս ապահովագրության ծախսերը:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՐՉԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ՄՐՑՈՒՆԱԿ ՄԱՐՉԻԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կալիֆոռնիայի Կրթության օրենսգիրք, Մաս 67455

Պետական օրենսդրության համաձայն՝ աշակերտները, ովքեր բարձրագույն կրթության մարզական կազմակերպության կողմից որևէ իրավախախտման գոհ կամ ականատես են հանդիսանում, իրավունք ունեն գեկույց կազմել, հայցադիմել կամ այլ կերպ օժանդակել ուսանող մարզիկների իրավունքների խախտումների մասին գեկուցելուն՝ ծրագրի, մասնակիցների կամ աշխատակիցների վերաբերյալ: Նման գեկույցներով հանդես գալու իրավունքը երաշխավորված է «Աշակերտ մարզիկների իրավունքների օրինագծով» և չի կարող հանգեցնել որևէ հատուցման կամ որևէ արտոնությունից զրկվելուն, եթե գեկույցը կատարվել է բարեխղճորեն և ճշմարտացի:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՑ ԱՉԱՏՈՒՄ (ՄԻԱՅՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ)

Տեղական կրթության գործակալությունները (LEA) պետք է տրամադրեն ֆիզիկական դաստիարակության ուսուցման առնվազն 400 րոպե յուրաքանչյուր 10 դպրոցական օրվա համար՝ ԿՕ, Մաս 51222 (ա), եթե աշակերտները չեն թույլատրվել չմասնակցել կամ ազատվել են դասից Կալիֆոռնիայի կրթության օրենսգրքի 51241 Մասի համաձայն: 10-12-րդ դասարանների բոլոր աշակերտներին, ովքեր ազատվում են ֆիզիկական դաստիարակության պարտադիր հաճախումից, կառաջարկվեն ընտրովի ֆիզիկական կրթության տարբեր դասընթացներ: Ֆիզիկական դաստիարակության յուրաքանչյուր այլընտրանքային դասընթաց կուսուցանվի համապատասխանաբար հավաստարմագրված ուսուցչի կողմից և յուրաքանչյուր 10 ուսումնական օրվա ընթացքում պետք է ապահովի նվազագույնը 400 րոպե ֆիզիկական կրթության ուսուցում: ԿՕ, Մասեր 33352[b][6], 51222(b), 51241[b][2].

LEA- ի Ուսումնական խորհուրդը կարող է առաջարկել և շնորհել ֆիզիկական դաստիարակությունից ազատում, այն պայմանով, եթե աշակերտը բավարարում է կրթության օրենսգրքի և դպրոցների խորհրդի ազատման քաղաքականության պահանջները: Աշակերտների ազատման հայցադիմումի ձևերը կարող եք գտնել Հավելվածում, ձեռք բերել դպրոցի կայքից կամ խորհրդատուից: Ազատման թույլտվությունները վերանայվում են ամեն տարի և ՉԵՆ ազատում աշակերտին GUSD-ի ավագ դպրոցի ատեստատի երկամյա ֆիզիկական դաստիարակության պահանջից: GUSD-ի ավարտական պահանջը բավարարելու համար աշակերտները պետք է լրացնեն ֆիզիկական կրթության 2 տարվա դասընթացը (20 միավոր): Ցանկացած աշակերտ, որ ցանկանում է ազատում հայցել, պետք է լրացնի GUSD- ի ազատման հայցադիմումի ձևը:

ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

1. 6-ից 18 տարեկան անչափահաս երեխան ենթակա է պարտադիր կրթության և, եթե չի ազատված ուսուցումից, պետք է հաճախի իր կրթաշրջանի դպրոցը, ըստ իր ծնողի կամ օրինական խնամակալի բնակության հասցեի:

2. Աշակերտը կարող է հաճախել կրթաշրջանի դպրոցներից որևէ մեկը, եթե նա ունի հետևյալ կարգավիճակներից մեկը. տեղավորված լինի կրթաշրջանի սահմաններում գտնվող խնամատարական տանը կամ արտոնված մանկական հիմնարկությունում, համաձայն տեղաբաշխման հանձնառության Բարեկեցության և Հաստատությունների օրենսգրքի; **խնամատարության տակ գտնվող աշակերտը, որը մնում է իր սկզբնական դպրոցում;** ազատված աշակերտը, ով սպորում է կրթաշրջանի սահմաններում; աշակերտը, ով սպորում է խնամատարի տանը, որը գտնվում է կրթաշրջանի սահմաններում; աշակերտը, ով գտնվում է նահանգային հիվանդանոցում, որը գտնվում է կրթաշրջանի սահմաններում կամ զինվորականի կամ գաղթական ընտանիքի աշակերտը:
3. Տարիներ շարունակ աշակերտի հաճախման դպրոցը հանդիսացել է նրա շրջանի դպրոցը, որպեսզի ժՑԻ հարմարություններից առավելագույնս կարողանան օգտվել: Այնուամենայնիվ, կրթաշրջանը շարունակում է հաշվի առնել թույլտվության հայցերը: Կրթաշրջանն առաջարկում է հետևյալ տարբերակները.

A. Ներկրթաշրջանային թույլտվություն

Այս թույլտվությունը հաշվի է առնվում անձնական այնպիսի կարիքների դեպքում, ինչպիսիք են՝ հարմարվելու դժվարությունը, ակնկալվող տեղափոխությունը, կրթաշրջանում պաշտոնավարելը, նախկինում այդ դպրոց հաճախելը, երեխայի մասնավոր խնամատարությունը, քրոջ, եղբոր պարագա կամ ուսումնական հատուկ ծրագրերի ամկայությունը: Ներկրթաշրջանային թույլտվության սույն դիմումի ձևը կարող եք վերցնել, այցելելով gusdpermits.com.

B. Ներկրթաշրջանային ընդունում– Կրթության օրենսգրք, Մաս 35160.5(b).

Կրթաշրջանի բնակիչները կարող են դիմել և իրենց երեխային արձանագրել նույն դասարաններն ունեցող կրթաշրջանի որևէ դպրոցում: Կրթաշրջանի յուրաքանչյուր դպրոցի վերաբերյալ տեղեկությունները հասանելի են կրթաշրջանի կայքում: Ոչ մի աշակերտ, ով ներկայումս բնակվում է դպրոցի հաճախելիության տարածքում, չի կարող տեղահանվել տեղափոխվող աշակերտների պատճառով: Աշակերտները, ովքեր բռնություն գոհ են հանդիսանում, իրավասու են փոխադրման թույլտվություն ստանալու կրթաշրջանում նույն դասարանի տեղերի առկայության պարագայում: Եթե «ներկրթաշրջանային» դպրոցներում ազատ տեղեր չկան, ապա աշակերտը կարող է «միջկրթաշրջանային» թույլտվություն հայցել՝ անհապաղ դուրս գրվելով իր կրթաշրջանից, ինչը սակայն չի երաշխավորում նոր կրթաշրջանում գրանցվելը:

C. Միջկրթաշրջանային թույլտվություն – Կրթության Օրենսգրք, Մաս 46600.

Ծնողը կամ խնամակալը կարող է դիմել դպրոցի կրթաշրջանին՝ իր երեխային այլ կրթաշրջանի դպրոցում արձանագրելու թույլտվություն ստանալու համար: Այս թույլտվությունը նկատի է առնում հետևյալ պայմանները՝ ակնկալվող տեղափոխություն, հնարավորություն, նախկին հաճախում, մասնավոր կերպով երեխայի խնամատարության պարագա (անցումային մանկարտեզից մինչև 8-րդ դասարան), քրոջ, եղբոր պարագա, ծնողի աշխատանք (անցումային մանկարտեզից մինչև 8-րդ դասարան): Միջկրթաշրջանային թույլտվության դիմումը պետք է ներկայացվի կրթաշրջանին ըստ բնակավայրի և պետք է հաստատվի երկու կրթաշրջանների կողմից: Կրթաշրջանները կարող են միջկրթաշրջանային փոխանցման հարցում համաձայնության գալ՝ մեկ կամ ավելի աշակերտի համար, մինչև հինգ տարի ժամանակահատվածով: Սույն համաձայնությունը հստակորեն պետք է նշի այն ժամկետներն ու պայմանները, որոնց համաձայն ընդունվում կամ մերժվում է փոխանցումը և կարող է պարունակել նորից դիմելու պայմանները ու նշել, թե որ պարագայում թույլտվությունը կարող է չտրվել: Եթե պայմանագրում նշված չէ, ապա աշակերտը չպետք է կրկին դիմի միջկրթաշրջանային փոխանցման համար, և կրթաշրջանի ուսումնական խորհուրդը աշակերտին պետք է թույլատրի շարունակել հաճախել դպրոցը, ուր արդեն նա գրանցված է: Անկախ նրանից, որ համաձայնագիր կա կամ թույլտվություն է տրվել, բնակավայրի կրթաշրջանը չի կարող արգելել աշակերտի տեղափոխումը, եթե նա զինձառայության մեջ գտնվողի զավակ է և հայցվող կրթաշրջանը հաստատել է տեղափոխման դիմումը: Ոչ էլ կրթաշրջանը կարող է արգելել միջկրթաշրջանային թույլտվությունը, եթե ներկրթաշրջանային թույլտվության տարբերակներ չկան բռնության գոհ հանդիսացող աշակերտի համար: Միջկրթաշրջանային մերժված դիմումի դեմ գրավոր բողոքը պետք է ուղղել Աշակերտների աջակցության ծառայությունների գրասենյակին: Եթե վերանայելուց հետո դիմումը դարձյալ մերժվի, կարող եք դիմել Գերատեսուչին կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչին և ապա՝ վարչաշրջանի ուսումնական խորհրդին:

Աշխատավայրի հասցեն բնակության հասցեի փոխարեն (Allen Bill) – Կրթության օրենսգիրք, Մաս 48204

Որոշ կրթաշրջաններ կարող են ընտրել ընդունելու ըստ աշխատավայրի հասցեի հիմունքով, բնակության հասցեի փոխարեն: Կրթաշրջանն աշակերտին թույլ է տալիս կրթաշրջանի դպրոց հաճախել, եթե աշակերտի գոնե մեկ ծնողը/խնամակալը դպրոցական շաբաթվա ընթացքում առնվազն տասը ժամ ֆիզիկապես աշխատում է այդ կրթաշրջանի տարածքային սահմաններում: Ընդունելուց հետո, աշակերտի տեղափոխման թույլտվությունը կարող է ուժը կորցնել միայն, եթե ծնողը դադարում է աշխատել կրթաշրջանի տարածքային սահմաններում: Որպես բնակիչ, աշակերտը պարտավոր չէ նորից դիմել, որպեսզի տեղափոխությունը վավեր համարվի:

Չինվորականի ընտանիքներ - Կրթության օրենսգիրք, Մաս 46600

Միջկրթաշրջանային տեղափոխման թույլտվությունները չեն կարող մերժվել բնակության վայրի կրթաշրջանի կողմից, բայց կարող են ունենալ նույն ընդունման պահանջները ցանկալի կրթաշրջանի կողմից: Ակտիվ զինվորական ծառայության մեջ գտնվող ընտանիքները, որ սպասում են տեղափոխման թույլտվությանը, ընտանիքի տեղափոխվելուց հետո կարող են փաստաթղթեր տրամադրել տասը օրվա ընթացքում: Խնդրաքնն ընդունվելուց հետո դրանք կարող են ուղարկվել ցանկալի կրթաշրջանին կամ չարտերային դպրոցին՝ ընդունելության գործընթացը սկսելու և հետաձգումներից խուսափելու համար: Ակտիվ զինծառայողների երեխաների համար դասընթացների և ավարտական պահանջները ենթակա են բացառության: ՆՇՈՒՄ: Այս հատուկ կողերը մանրամասն նկարագրված են բնակության պայմաններ և ավագ դպրոցի ավարտական պահանջների ներքո:

- D. **Ոչ Մագնետ Երկկեզվյան FLAG ծրագրի թույլտվություն՝ Դանգոն, Չեֆերսոն, Մոնտե Վիստա, Մյուր, Ար. Դի. Վայթ և Վերդուգու Վուլլանդս դպրոցներում** – Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի տարրական դպրոցների FLAG ծրագրով հետաքրքրվող ընտանիքները պետք է լրացնեն FLAG դպրոցի դիմումը և ընդունվելու դեպքում պահանջված բոլոր փաստաթղթերը հանձնեն դպրոցին: Գլենդելի բնակիչներից չի պահանջվում ներկրթաշրջանային թույլտվություն ստանալ՝ իրենց շրջանից դուրս FLAG ծրագրին մասնակցելու համար, սակայն կրթաշրջանից դուրս FLAG ծրագրին մասնակցելու դիմողներից պահանջվում է թույլտվության նամակ ստանալ իրենց կրթաշրջանից՝ արձանագրության գործընթացն ավարտելու համար: Թույլտվության այս նամակը, ինչպես նաև *գրանցումն սպացուցող փաստաթուղթը* և միջկրթաշրջանային դիմումը պետք է հանձնել Աշակերտների աջակցության ծառայությունների գրասենյակին: **FLAG ծրագրում ուսուցումը շարունակելը պայմանավորված է աշակերտի կանոնավոր դպրոցական հաճախումների և դպրոցի լավ վարքագծի պահանջների համապատասխանությամբ: Այս ակնկալիքները չբավարարելու դեպքում աշակերտը կվերադառնա իր բնակավայրի դպրոցը:**
- E. **Տարրական Մագնետ դպրոցներ (ներառյալ FLAG ծրագրեր Մագնետ դպրոցներում) Սերիտոս, Էդիսոն, Ֆրանկլին և Քեփել դպրոցներում** - Գլենդելի հանրային դպրոցների Մագնետ ծրագրով հետաքրքրվող ընտանիքները պետք է լրացնեն մագնետ դպրոցի դիմումը և ընդունվելու դեպքում՝ դպրոցին հանձնեն պահանջվող բոլոր փաստաթղթերը: Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի աշակերտներից չի պահանջվում Մագնետ դպրոց հաճախելու համար ստանալ ներկրթաշրջանային թույլտվություն, այնուամենայնիվ, կրթաշրջանից դուրս դիմորդներից ակնկալվում է թույլտվության նամակ ներկայացնել իրենց կրթաշրջանից՝ արձանագրության գործընթացն ավարտելու համար: Իրենց կրթաշրջանի թույլտվության այս նամակը, ինչպես նաև արձանագրության վավերացման նամակը և ներկրթաշրջանային դիմումը պետք է հանձնել Աշակերտների աջակցման ծառայությունների գրասենյակին: **Մագնետ ծրագրին շարունակել մասնակցելը պայմանավորվում է աշակերտի բավարար առաջադիմությամբ, դպրոց կանոնավոր հաճախումներով ու լավ վարքագծով: Այս ակնկալիքները չբավարարելու դեպքում աշակերտը կվերադառնա ըստ իր բնակավայրի դպրոցը:**
- F. **Անցումային մանկապարտեզ (TK)**- Քանի որ Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի ոչ բոլոր դպրոցներն ունեն անցումային մանկապարտեզի (TK) ծրագիր, այդ ծրագրին ենթակա աշակերտները (5 տարեկան երեխաները՝ ծնված սեպտեմբերի 2-ից մինչև դեկտեմբերի 2-ը) կարձանագրվեն իրենց շրջանի ամենամոտ դպրոցում, որն ունի TK ծրագիր: Անցումային

մանկապարտեզի երեխաները հաջորդ տարում մանկապարտեզ կհաճախեն իրենց բնակավայրի դպրոցում:

AB 1156 կրթական օրենքի համաձայն այն աշակերտը, ով շրջանի դպրոցի կամ առաջարկվող դպրոցի անձնակազմի բացահայտմամբ ահաբեկման գոհ է դարձել իր շրջանի դպրոցի աշակերտի կողմից, միջկրթաշրջանային թույլտվություն ստանալու առաջնահերթություն կունենա, առկա միջկրթաշրջանային որևէ պայմանագրի ներքո, կամ պայմանագիր չլինելու դեպքում, նկատի կառնվի միջկրթաշրջանային պայմանագիր մշակելու պարագան՝ աշակերտի լիազոր խնամակալի խնդրանքով:

Դպրոց ընտրելու տարբերակների մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար, խնդրում ենք կապվել Աշակերտների աջակցության ծառայությունների գրասենյակի հետ՝ (818) 241-3111 ներքին 1283 համարով:

ԾՆՈՂԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի և համայնքի միջև կապը բարելավում է ուսումնական ծրագրերն ու ընդլայնում է աշակերտի հաջողության հնարավորությունները: Ընտանիքը հանդիսանում է աշակերտի կրթության ամենակարևոր գործընկերը: Դպրոցի ու կրթաշրջանի ծրագրերում ընտանիքների ակտիվ մասնակցությունը դրական ազդեցություն է ունենում աշակերտի ձեռքբերումների վրա: Ծնողների կամ խնամակալների համար առկա են հնարավորություններ, որպեսզի արդյունավետ կերպով մասնակցեն իրենց երեխաների կրթական կյանքին և դպրոցի ու կրթաշրջանի մակարդակներում կիսեն իրենց փորձառությունն ու գիտելիքները: Ծնողներն ու խնամակալները՝ առաքված նամակների, ինչպես նաև դպրոցի կայքի, զանգերի և կրթաշրջանի (www.gusd.net) կայքէջի միջոցով տեղեկացվում են դպրոցական ծրագրերի մեջ ներգրավվելու հնարավորությունների մասին:

Ծնողները քաջակերվում են մասնակցել կրթաշրջանի Տեղական վերահսկողության հաշվետու ծրագրի (LCAP) ժողովներին և իրենց դպրոցի Դպրոցական խորհրդի (SSC) ու Անգլերեն լեզվի խորհրդատվական հանձնաժողովի (ELAC) ժողովներին: Դպրոցական խորհուրդը այն խորհրդատվական մարմինն է, որը գնահատում է դպրոցական որոշակի ծրագրերի արդյունավետությունը: ELAC-ը նույնպես խորհրդատվական մարմին է, որը շեշտը դնում է անգլերեն լեզու սովորողների ուսումնական հարցերի ու ծրագրերի վրա: Ծնողները կարող են նաև մասնակցել կրթաշրջանի Անգլերեն լեզու սովորողների խորհրդատվական հանձնաժողովի (ELAC) գործունեությանը:

Ծնողների և Ընտանիքների ներգրավվածության քաղաքականության և ծնողների և ընտանիքի ներգրավման հնարավորությունների մասին կարող եք տեղեկանալ www.gusd.net/Page/12405 կայքէջում:

ԿԱՐԻԵՐԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ և ԴԱՍԸՆԹԱՅԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Սկսած 7-րդ դասարանից, դպրոցի անձնակազմը պետք է օգնի աշակերտներին դասընթացների ընտրության կամ կարիերայի վերաբերյալ խորհրդատվություն ստանալու հարցում, ուսումնասիրելու կարիերայի հնարավորությունները կամ պահանջվող դասընթացները՝ ելնելով աշակերտի հետաքրքրություններից և կարողություններից, ոչ թե սեռից: Ծնողներին կամ օրինական խնամակալներին ծանուցվում է, որպեսզի նրանք կարողանան մասնակցել նման խորհրդատվական նիստերին և որոշումների ընդունմանը:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆԳԼԵՐԵՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ (EL) ՀԱՄԱՐ

Գլենդեյլի հանրային դպրոցների կրթաշրջանի նպատակն է բոլոր աշակերտներին տրամադրել բարձրորակ չափանիշների վրա հիմնված կրթություն: Անգլերեն լեզու սովորող մեր աշակերտների համար նախատեսված երկակի նպատակն է՝ արագորեն ու արդյունավետորեն զարգացնել լեզվի իմացություն և համատարիք ու համադասարանցի անգլիախոս աշակերտների հետ հավասար ուսումնական առաջադիմություն ցուցաբերել: Անգլերեն լեզու սովորող մեր աշակերտներին տրամադրվում է դասարանային մակարդակի ուսուցում՝ ակադեմիական անգլերենի հմտություն զարգացնելու համար: Բոլոր Անգլերեն սովորողներին տրամադրվում է Անգլերենի Լեզվի Չարգացման (ELD) դասավանդում և ուսումնական ծրագրի՝ հմտության և գրագիտության բարձր մակարդակի հասնելուն աջակցելու համար:

Կալիֆոռնիայի Կրթության օրենսգրքի 52164.1 Մասի համաձայն, բոլոր նոր արձանագրված աշակերտները, ովքեր անգլերենից բացի խոսում են իրենց մայրենի լեզվով, պետք է քննվեն անգլերեն լեզվի հմտությունը որոշելու և Անգլերեն Լեզվի Չարգացման համապատասխան ծրագրում նրանց տեղավորելու համար: Հնարավոր է նաև անցկացվի մայրենի լեզվի քննություն:

Նահանգի կողմից հաստատված Անգլերեն լեզվի հմտության քննությունը Կալիֆոռնիայի համար (ELPAC) կատարվում է դպրոցում գրանցվելուց հետո, հետագայում ամեն տարի տրվում է անգլերեն լեզու սովորող

բոլոր աշակերտներին: Ծնողը կամ խնամակալը տեղեկացվում են քննության արդյունքների, լեզվի հմտության և ELD ծրագրում տեղավորման մակարդակի մասին:

Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանից պահանջվում է անգլերեն սովորողներին առաջարկել հետևյալ ծրագրերը՝ **Structured English Immersion (SEI) ծրագիրը** (ԿՕ Մաս 305[a][2])։ Ստորև ներկայացվում է Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի կողմից տրամադրված լեզվի ձեռքբերման ծրագրերի նկարագրությունը: Ծնողները կարող են ընտրել այն ծրագիրը, որը լավագույնս համապատասխանում է իրենց երեխային: (20 6[e][3][A][iii],[v])

* **Structured English Immersion (SEI) Ծրագիր 1** – այս ծրագիրն այն աշակերտների համար է, ովքեր բավարար չափով չեն տիրապետում անգլերենին: Ուսուցումը մեծ մասամբ կատարվում է անգլերենով, սակայն ծրագիրն ու ուսուցումը նախատեսված են անգլերեն լեզու սովորող աշակերտների համար: Ուսուցումը հիմնված է Անգլերեն լեզվի զարգացման (ELD) և դասարանի մակարդակի բովանդակության չափորոշիչների վրա: Ծրագիր 1-ում ընդգրկված աշակերտները անգլերեն լեզվից գնահատական են ստանում միայն Անգլերեն Լեզվի զարգացման համար:

* **English Language Mainstream/(ELM) Ծրագիր 2** – Անգլերեն սովորողների համար լեզուն յուրացնելու ծրագիր, որում աշակերտներին դասավանդում են ELD և այլ հիմնական առարկաներ՝ օգտագործելով կրթաշրջանի կողմից հաստատված դասագրքեր և լրացուցիչ նյութեր: Այս ծրագիրն այն աշակերտների համար է, ովքեր համարյա տիրապետում են անգլերենին: Ուսուցումն ամբողջապես կատարվում է անգլերեն լեզվով: Դասավանդումը հիմնված է ELD-ի և դասարանի մակարդակի բովանդակության չափորոշիչների վրա: **2-րդ ծրագրի աշակերտները գնահատվում են Անգլերեն լեզվի զարգացման և Անգլերեն լեզվի ոլորտներում:**

* **Dual-Language Immersion (DLI) Ծրագիր (անգլերեն/հայերեն/ֆրանսերեն/գերմաներեն/իտալերեն/ճապոներեն/կորեերեն/իսպաներեն)**. Լեզուների ձեռքբերման ծրագիր է, որը նախատեսում է լեզվի ուսուցում և դասավանդում աշակերտների համար, որոնց մայրենի լեզուն կամ անգլերենն է կամ այլ լեզու՝ բարձր ուսումնական նվաճումների, երկու լեզվի տիրապետման և միջմշակութային փոխըմբռնման հասնելու նպատակով: Ուսումնական ծրագրի հիմնական առարկաները տրամադրվում են աշակերտի մայրենի կամ թիրախային լեզվով՝ անգլերեն լեզվի զարգացման (ELD) ծրագրի համատեղ ուսուցմամբ: DLI ծրագրում ընդգրկվելը կախված է դիմելու և տեղերի առկայության հանգամանքներից:

Դպրոցները, որոնցում յուրաքանչյուր դպրոցի 30 կամ ավելի աշակերտների ծնողներ կամ օրինական խնամակալներ, կամ 20 կամ ավելի նույն դասարանի աշակերտների ծնողներ կամ օրինական խնամակալներ պահանջում են լեզվի յուրացման ծրագիր, ապա այն պետք է տրամադրվի հնարավորության սահմաններում: (20 U.S.C., Մաս 6312[e][3][A][viii][III]); (ԿՕ, Մաս 310[a]). Վերը նշվածներից տարբերվող լեզվի ծրագիր հայցելու համար խնդրում ենք բանավոր կամ գրավոր հայց ներկայացնել ձեր դպրոցի գրասենյակ:

ԳԱՂԹԱԿԱՆ, ՆՈՐ ՆԵՐԳԱՂԹԱԾ և ՉԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ. ԱՎԱՐՏԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄԸ ԾԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ - Կրթության օրենսգիրք, Մաս 51225.1 և 51225.2

Ծանուցումը պետք է տրվի այն լեզվով, որը ծնողը և աշակերտը հասկանում են, տեղափոխման պահից 30 օրվա ընթացքում: Երբ աշակերտը լրացնում է դասընթացների պետական նվազագույն պահանջները և իրավասու է ատեստատ ստանալ, աշակերտին, կրթության իրավունքներ ունեցողներին տեղեկացնել հետևյալի մասին. աշակերտն իրավունք ունի բնակավայրի դպրոցից ատեստատ ստանալ, եթե նա կատարել է ավարտական պահանջներն ավագ դպրոցի սովորողի համար, ով ավագ դպրոցի 3-րդ կամ 4-րդ տարում տեղափոխվել է այլ երկրից կամ այլ դպրոցական կրթաշրջանից; Բնակության վայրի կրթաշրջանը պետք է աշակերտին տա այն դպրոցի ատեստատը, որտեղ աշակերտը սովորում է տեղափոխումից հետո և ընդունի այլ երկրի դպրոցում անցած դասընթացները՝ նախքան տեղափոխումը: Կրթաշրջանը կամ չարտերային դպրոցը կբացատրեն, թե ինչպես կառավարման խորհրդի կամ չարտերային դպրոցի կողմից ընդունված դասընթացներ վերցնելու և այլ պահանջների կատարումը կամ տեղափոխումից հետո ուսումը շարունակելը, հնարավորություն կտան ուսումնական հաստատություն ընդունվել դպրոցն ավարտելուց հետո: Զուեջ ընդունվելու հնարավորությունների մասին տեղեկատվությունը կարելի է ստանալ Կալիֆոռնիայի հանրային քոլեջներից: Աշակերտին կամ կրթության իրավունք ունեցող անձին անհրաժեշտության դեպքում հնարավորություն է տրվում ավագ դպրոցի 5-րդ տարին սովորել, լրացուցիչ դասընթացներ անցնել՝ ատեստատը ստանալու պահանջները բավարարելու նպատակով: Եթե կրթաշրջանը կամ չարտերային դպրոցը չկարողանա ժամանակին ծանուցում տրամադրել, աշակերտը իրավասու է ատեստատ ստանալ տեղեկացվելուց հետո, նույնիսկ եթե այդ ծանուցումը տրվել է նախնական փոխանցումից հետո: Բացի պետական դասընթացների նվազագույն պահանջներին և կրթաշրջանի կամ չարտերային դպրոցի

կառավարման խորհրդի կողմից ընդունված այլ պահանջներին տեղեկացնելուց, պետք է նաև. աշակերտները տեղեկացվեն դասընթաց ընտրելու իրենց հնարավորության և կառավարման խորհրդի կողմից ընդունված այլ պահանջների մասին; թույլ տրվի աշակերտին, նրա համաձայնությամբ, եթե աշակերտը 18 տարեկան է կամ ավելի մեծ կամ, եթե աշակերտը մինչև 18 տարեկան է, աշակերտի համար ուսումնական որոշումներ կայացնելու իրավունք ունեցող անձի համաձայնությամբ, վերցնել դասընթացներ կամ կառավարման խորհրդի կողմից ընդունված այլ պահանջներ կատարել՝ լրացուցիչ դասընթացներ վերցնել ավագ դպրոցի 5-րդ տարվա համար: Խորհուրդ տալ աշակերտին, եթե նա 18 տարեկան է կամ ավելի մեծ, կամ, եթե աշակերտը մինչև 18 տարեկան է, աշակերտի համար ուսումնական որոշումներ կայացնելու իրավունք ունեցող անձին, խուրհուրդ տալ հաշվի առնել տեղական ուսումնական գործակալության կողմից ղեկավարվող դպրոցում կամ չարտերային դպրոցում արձանագրվելու և շարունակական դասավանդումից օգտվելու ու ավագ դպրոցը վավեր առեստատով ավարտելու հնարավորությունը: Եթե «նորեկների ծրագրին մասնակցող աշակերտը» ազատված է տեղական ավարտական պահանջներից, ապա ազատումը շարունակում է կիրառվել այն բանից հետո, երբ աշակերտն այլևս չի համապատասխանում «նորեկ ծրագրին մասնակցող աշակերտ» սահմանմանը, մինչև նա սովորում է դպրոցում կամ եթե տեղափոխվում է այլ դպրոց, այդ թվում չարտերային դպրոց, կամ այլ կրթաշրջան ավագ դպրոցի 3-րդ կամ 4-րդ տարվա ընթացքում: Գաղթած երեխաները և նրանց ծնողները չպետք է պահանջեն տեղափոխում՝ միայն այդ բացառությունը ստանալու նպատակով:

Եթե դուք զինվորականի ընտանիք եք, ձեր երեխան կարող է իրավունք ունենալ ազատվել տեղական ավարտական դասընթացների պահանջներից, որոնք դուրս են Կալիֆոռնիայի նահանգի պահանջներից: Խնդրում ենք հանդիպում նշանակել դպրոցի խորհրդատուի հետ՝ ձեր երեխայի դպրոցն ավարտելու տարբերակները քննարկելու համար: Գլենդեյի հանրային դպրոցների կրթաշրջանին չպատկանող այլ դպրոցում անցած բոլոր դասընթացների համար կտրամադրվեն լրիվ կամ մասնակի միավորներ (կրեդիտ):

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՎՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ - Կրթության օրենսգրք, Մաս 66251, 66260.6, 66270, և 66270.3)

Բարձրագույն կրթության իրավահավասարության մասին օրենքում նշվում է, որ բոլոր անձինք՝ անկախ իրենց հաշմանդամությունից, սեռից, գենդերային ինքնությունից, գենդերային արտահայտությունից, ազգությունից, ռասայից կամ էթնիկ պատկանելությունից, կրոնից, սեռական կողմնորոշումից կամ այլ առանձնահատկությունից՝ ինչպես օրինակ սանրվածքները, հավասար իրավունքներ և հնարավորություններ ունեն դիմելու բարձրագույն կրթության համար ֆինանսական օգնություն ստանալու համար, ինչպես նաև դիմումը չեն կարող մերժվել՝ ելնելով ներգաղթողի կարգավիճակից: Սա չի երաշխավորում որևէ վերջնական իրավունակություն, այլ պարզապես ֆինանսական օգնություն ստանալու համար դիմելու հնարավորություն է տալիս, ինչպես և ցանկացած այլ ուսանողի, առանց խտրականության:

ԱՇԿԵՐՏԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ/ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ/ԴՐԱՄԱՀՎԱԿԸ

Գլենդեյի հանրային դպրոցների կրթաշրջանում արձանագրված աշակերտներից չի պահանջվում կատարել որևէ վճարում, կանխավճար կամ այլ ծախսեր կրթաշրջանի կամ դպրոցի ուսումնական միջոցառումներին մասնակցելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով: Նվիրատվություններն ու դրամահավաքը կատարվում են տարբեր միջոցառումների և պիտույքների համար և երբեմն պարզապես անհրաժեշտ են դասերի շարունակական հաջողության համար: Նվիրատվություններն ու դրամահավաքներին մասնակցությունը կատարվում է կամավոր հիմունքներով:

Պետական օրենքի համաձայն Գլենդեյի հանրային դպրոցների կրթաշրջանը պետք է տրամադրի անվճար հանրային կրթություն: Որոշ բացառություններով հանդերձ, անվճար հանրային կրթության իրավունքի համաձայն, կրթաշրջանը չի կարող պահանջել աշակերտներից կամ իրենց ընտանիքներից գնել կոսթեթ, պիտույքներ, սարքավորում կամ համագգեստ որևէ դպրոցական միջոցառման համար: Կրթաշրջանի դպրոցները կտրամադրեն բոլոր անհրաժեշտ պիտույքները աշակերտների որակյալ կրթությունը ապահովելու համար: Հետևաբար, անգամ եթե առկա են ցանկալի դասարանական պտույքների ցուցակներ, դրանք միայն կամավոր հիմունքով են: Որևէ աշակերտի չի կարող արգելվել մասնակցություն ծրագրերին, եթե նա պիտույքներ չի բերել դպրոց:

ՄՆՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գլենդեյի հանրային դպրոցների կրթաշրջանի (GUSD) սննդի ծառայությունների բաժանմունքը մասնակցում է Դպրոցական կեսօրյա ճաշ (National School Lunch Program -NSLP), Դպրոցական Նախաճաշ (School Breakfast Program - SBP), Երկարօրյա ծրագրի ուսուցիչ (After School Snack Program), Ամառվա ընթացքում անխափան կերակրման տարբերակ (Seamless Summer Feeding Option (SSFO) և Թարմ միրգ և բանջարեղեն (Fresh Fruit and Vegetable Program (FFVP) ծրագրերին: Միրգ, բանջարեղեն և կաթ առաջարկվում է յուրաքանչյուր կերակուրի հետ:

Անվճար և գեղջված գներով սննդի դիմումներ 2020-2021 ուս. տարվա համար

Առցանց դիմումներ. Անվճար և գեղջված գներով սննդի դիմումները հասանելի են առցանց՝ mealapp.gusd.net.

Թղթի դիմումներ - տարրական դպրոցների աշակերտների դիմումները կլինեն իրենց առաջին օրվա փաթեթի մեջ: Միջին դպրոցների աշակերտների դիմումները կուղարկվեն տուն արձանագրության փաթեթների հետ միասին:

Նոր աշակերտները դիմումները կարող են ստանալ Welcome Center-ից, որը գտնվում է 223 N. Jackson Street, Glendale, CA 91206 հասցեում, ձեր երեխայի դպրոցից կամ սննդի ծառայությունների գրասենյակից՝ 349-A West Magnolia Avenue, Glendale, CA 91204 հասցեով: Աշխատանքային ժամերն են՝ առավոտյան ժամը 7:00-ից մինչ կեսօրվա 4:00-ը: Հեռախոսի համարն է՝ (818) 552-2677:

Իսնդրում ենք յուրաքանչյուր ընտանիքի համար լրացնել միայն ՄԵԿ դիմում: Լրացուցիչ դիմումները կարող են դանդաղեցնել դրանց ընթացքը: Թղթի վրա լրացված դիմումները ներկայացրեք ձեր երեխայի դպրոց կամ սննդի ծառայությունների գրասենյակ: Դուք նամակ կստանաք ձեր երեխայի դիմումի կարգավիճակի վերաբերյալ՝ այն վերանայելուց ամսիջապես հետո: Իսնդրում ենք դիմումը լրացնել ամբողջությամբ և ընթեռնելի: Անավարտ դիմումները կհետաձգեն ընթացքը: Սննդի դիմումի վերաբերյալ ցուցումները առկա են անգլերեն, հայերեն, կորեերեն և իսպաներեն լեզուներով: Իսնդրում ենք չպատճենահանել թղթի դիմումները, քանի որ դրանցից յուրաքանչյուրը հատուկ կող ունի:

Սննդի վճարումներ.Նախաճաշի արժեքը 1.25 դոլար է, իսկ ճաշինը՝ 2.75 դոլար: Հանրային դպրոցների կրթաշրջանի սննդի ծառայությունների համար առկա է առցանց վճարման համակարգ սննդի մեր ծրագրերում ընդգրկված բոլոր աշակերտների համար: Կարող եք այցելել <https://www.ezschoolpay.com> կայքէջը: Ձեր երեխայի դպրոցական ճաշարանում կամ սննդի ծառայությունների գրասենյակում կարող եք կանխիկ կամ չեկով կանխավճար տալ:

Աշակերտները և իրենց ծնողները/խնամակալները կտեղեկացվեն, երբ իրենց հաշվի վրա պարտք կուտակվի: Երբ տարրական դպրոցի աշակերտը 10 դոլարի, իսկ միջին դպրոցի աշակերտը 2.75 դոլարի պարտք է ունենում, ծնողը/խնամակալը վճարման հիշեցում են ստանում հեռախոսազանգի/էլեկտրոնային նամակի միջոցով: Երբ աշակերտի պարտքը դառնա 20 դոլար, ծնողը/խնամակալը վճարման մասին կտեղեկացվի Միացյալ Նահանգների փոստի միջոցով:

Սննդի դիմագ գանձման քաղաքականությունը

Բացառությամբ անվճար սնունդ ստանալու համար իրավասու աշակերտների, մյուսները կարող են վճարել ամեն կերակուրի դիմաց կամ նախապես կանխավճար տալով: Դպրոցների գերատեսուչը կամ պատասխանատու անձը վարում են հաշիվը, ուր երևում են դպրոցական կերակուր գնելու համար յուրաքանչյուր աշակերտի վճարները:

Ուսումնական տարվա սկզբին, կամ ուսումնական տարվա ընթացքում երբ աշակերտը գրանցվում է, ծնողները/խնամակալները պետք է տեղեկացվեն կրթաշրջանի սննդի համար վճարման քաղաքականությանը և խրախուսվեն, հնարավորության սահմաններում, նախնական վճարումներ կատարել: Այս տեղեկատվությունը հրապարակված է Կրթաշրջանի «Տեղեկատվություն ծնողների/ խնամակալների և աշակերտների համար» գրքույկում:

Կրթաշրջանը չպետք է որևէ գործողություն ձեռնարկի աշակերտի նկատմամբ՝ չվճարված դպրոցական սննդի գումարը գանձելու նպատակով. օրինակ՝ օգտագործի առաջադիմության թերթիկները, ատեստատները, կամ արգելի մասնակցել դպրոցական միջոցառումներին կամ գործունեությանը, սրանք չեն կարող օգտագործվել որպես միջոց՝ ստիպելու ընտանիքին վճարել պարտքը: Աշակերտները որևէ պատճառով չեն մերժվի սնունդ ստանալ և կտրամադրվի մատուցվող սնունդը, այլ ոչ թե այլընտրանքային սնունդ, անկախ իրենց պարտք ունենալու հանգամանքից: Աշակերտները չեն առանձնանա, որպես անվճար կամ գեղջված գներով սնունդ ստացողներ կամ պարտքեր ունեցողներ (Կրթության օրենսգիրք 49557.5)

2017 թ. Օրենք երեխայի սովաժության կանխարգելման և արդար վերաբերմունքի մասին

Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանն ունի Սննդի համար գանձման քաղաքականություն այն մասին, թե ինչպես են դպրոցական կերակուրի համար լրիվ կամ գեղջված գինը աշակերտները վճարում, եթե չունեն կանխիկ կամ իրենց հաշվի վրա բավականաչափ դրամ՝ սնունդ գնելու համար: Սննդի համար գանձման

քաղաքականությանը կարող եք ծանոթանալ <https://www.gusd.net/Page/13136> կայքէջում կամ կամ քաղաքականության պատճենը ստանալու համար դիմեք Սննդի ծառայություններ՝ (818) 552-2677 հեռախոսահամարով:

Գլենդեյլի հանրային դպրոցների կրթաշրջանի Տեղական բարեկեցության քաղաքականություն

Գլենդեյլի հանրային դպրոցների կրթաշրջանի Տեղական բարեկեցության քաղաքականությունը (Local Wellness Policy (BP 5030 և AR 5030) ներառում է դպրոցների տարածքում աշակերտների առողջության վերաբերյալ դաշնային և նահանգային կանոնակարգերը: Այն ներառում է սննդի և կրթության խթանման նպատակներ, ֆիզիկական և այլ դպրոցական գործունեություն, որոնք նպաստում են աշակերտների առողջությանը: Այն նկարագրում է դպրոցներում առկա բոլոր սննդամթերքների և ըմպելիքների սննդային ուղեցույցները: Այն նաև անդրադառնում է կրթաշրջանի բարեկեցությունն ապահովողի ղեկավարներին, դպրոցական համայնքի ներգրավվածությանը այդ հարցին, քաղաքականությանը համապատասխանելու գնահատմանը և վարած քաղաքականության և դրա գնահատման վերաբերյալ տեղեկատվության մատչելիությանը հասարակությանը: Այս տեղեկատվությունը, ինչպես նաև այն տեղեկությունները, թե ինչպես ներգրավվել կրթաշրջանի բարեկեցության խորհրդի աշխատանքներին, կարող եք գտնել GUSD-ի կայքում՝ Քաղաքականության և կանոնակարգերի ներքո (Policies and Regulations):

ԳՊՐՈՑ ՀԱՃԱՆՈՒՄՆԵՐ

Կանոնավոր դպրոց հաճախելը շատ կարևոր է երեխայի լիարժեք ներուժը դրսևորելու համար: Ուսումնական նոր տարին սկսելով, խրախուսում ենք որևէ ջանք չհանալ վստահ լինելու, որ ձեր երեխան **ԱՄԵՆ ՕՐ** կանոնավոր կերպով դպրոց է հաճախում:

Կալիֆոռնիայի կանոնակարգեր, Title V, Մաս 421 և Կրթության օրենսգիրք Մաս 48205. դպրոցի պաշտոնյայի կամ բժշկի հաստատմամբ, աշակերտը կարող է դպրոց չհաճախել հիվանդության, կարանտինի, բժշկի հետ ժամադրության (ներառյալ ատամնաբույժի և ակնաբույժի հետ), ընտանիքի անմիջական անդամի հուղարկավորությանը մասնակցելու կամ որպես ատենակալ ծառայելու պատճառով:

Երբ աշակերտի ծնողը կամ խնամակալը նախապես գրավոր խնդրագիր է ներկայացնում, և դա հաստատվում է տնօրենի կամ արտոնված ներկայացուցչի կողմից, աշակերտը կարող է բացակայել անձնական թույլատրելի պատճառներով, այդ թվում, բայց չսահմանափակելով դատարան ներկայանալու, որևէ տոնի կամ կրոնական արարողությանը մասնակցելու, կրոնական ծեսերի, աշխատանքային համաժողովի մասնակցելու համար: Կրոնական ծեսերին մասնակցելը յուրաքանչյուր կիսամյակում չպետք է գերազանցի չորս ժամը:

Կալիֆոռնիայի Կրթության օրենսգիրք, Մաս 48980 (j). վերոնշյալ պատճառներով աշակերտի բացակայությունները չպետք է ազդեն նրա գնահատականների վրա կամ աշակերտը չպետք է միավոր կորցնի և պետք է թույլ տալ նրան լրացնել այն առաջադրանքները և քննությունները, որոնք հարգելի բացակայության պատճառով բաց է թողել, և դրանք լրացնելով նա պետք է լրիվ միավոր վաստակի: Դասարանի ուսուցիչը, ում դասից աշակերտը հարգելի պատճառով բացակայել է, պետք է որոշի, թե աշակերտը բաց թողածը որ դասաժամին, ինչ առաջադրանք և որքան ժամանակում պետք է լրացնի: Քննությունները և առաջադրանքները պետք է աշակերտի բաց թողած քննություններին և առաջադրանքներին համազոր, բայց ոչ անպայման նույնը լինեն:

Կալիֆոռնիայի Կրթության օրենսգիրք, Մաս 48260. ցանկացած աշակերտ, ով ենթակա է լրիվ օրյա պարտադիր կրթության կամ շարունակական պարտադիր կրթության, և մեկ ուսումնական տարվա ընթացքում առանց հարգելի պատճառի երեք ամբողջ օր բացակայել է դպրոցից կամ մեկ ուսումնական տարվա ընթացքում երեք անգամ առանց հարգելի պատճառի 30 րոպեից ավելի ուշացել կամ բացակայել է դասարանից, կամ դրանց համակցությունը, համարվում է փախուստ կատարած և դրա մասին պետք է զեկուցվի հաճախումները հսկող ղեկավարին կամ կրթաշրջանի գերատեսուչին:

Հարգելի բացակայություններ— ԿՕ § 48205

- a) Չնայած 48200 բաժնի, աշակերտի բացակայությունը պետք է հարգելի համարել, եթե՝
 1. Հիվանդության պատճառով է
 2. Կարանտինի պատճառով է՝ վարչաշրջանի կամ քաղաքապետարանի առողջապահական պաշտոնյայի կարգադրությամբ
 3. Բժշկական, ատամնաբուժական, ակնաբուժական կամ խիրուրգական ծառայություններ ստանալու պատճառով է
 4. Անմիջական ընտանիքի անդամներից մեկի հուղարկավորման պատճառով է, քանի դեռ բացակայությունը մեկ օրից ավել չէ Կալիֆոռնիայում և երեք օրից ավելի չէ Կալիֆոռնիայի սահմաններից դուրս
 5. Ատենակալ ընտրվելու պատճառով է՝ օրենքի համաձայն:

6. Երեխայի հիվանդության կամ բժշկական ժամադրությունների պատճառով է՝ դպրոցական ժամերի ընթացքում, ում ծնողը խնամատար աշակերտ է:
 7. Անձնական հարգելի պատճառով է, այդ թվում, բայց չսահմանափակվելով՝ դատարան ներկայանալու, հուղարկավորության մասնակցելու, կրոնական արարողությունների մասնակցելու, աշխատանքային, օրենսդրական կամ դատական գործընթացի կրթադաստիարակչական ժողովների մասնակցելու համար, որոնք առաջարկվել են ոչ շահույթաբեր կազմակերպությունների կողմից, երբ աշակերտի բացակայությունը գրավոր պահանջել է ծնողը կամ խնամակալը և այն հաստատվել է տնօրենի կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչի կողմից:
 8. Ընտրատարածքում որպես հանձնաժողովի անդամ, ընտրաբաշխի աշխատանքներին մասնակցելու պատճառով է՝ Ընտրական օրենսգրքի 12302 մասի համաձայն:
 9. Աշակերտի անմիջական ընտանիքի հետ ժամանակ անցկացնելու համար, ով զինծառայության անդամ է, ինչպես սահմանվել է կրթական օրենսգրքի 49701 բաժնում, կանչվել է հերթապահության, արձակուրդում է կամ անմիջապես վերադարձել է, տեղակայվել է մարտական գոտու կամ մարտական աջակցության պաշտոնում: Այս պարբերության համապատասխան բացակայությունները պետք է հարգելի համարել այն ժամանակամիջոցի համար, որը կսահմանվի կրթաշրջանի գերտեսուչի հայեցողությամբ:
- b) Այս բաժնի համաձայն, բացակա աշակերտին պետք է թույլատրել, որ լրացնի բացակայության ընթացքի բոլոր առաջադրանքներն ու քննությունները և բավարար չափով աշխատանք կատարելուց հետո նրան լրիվ միավորներ տալ: Դասարանի ուսուցիչը, ում դասից բացակայել է աշակերտը պետք է որոշի, թե համարժեք որ քննությունը պետք է հանձնի աշակերտը բացակայությունից վերադառնալուց հետո:
 - c) Այս բաժնի կետերի համաձայն, կրոնական արարողություններին մասնակցելը չպետք է յուրաքանչյուր կիսամյակում չորս ժամից ավելի լինի:
 - d) Սույն բաժնի համաձայն բացակայությունները համարվում են դասարանի օրական ներկայության մասը կազմող բացակայություններ և չեն կարող ստանալ նահանգի կողմից նշանակված վճարումները:
 - e) Այս բաժնում օգտագործված «անմիջական ընտանիք» արտահայտությունն ունի նույն նշանակությունը, ինչպես սահմանվել է 45194 Մասում, այն տարբերությամբ, որ այնտեղ նշվածը վերաբերում է «աշխատակցին», իսկ այստեղ «աշակերտին»:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԽԳԻԿՆԵՐ

Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը վերահսկողության տեսախցիկներ ունի բոլոր դպրոցներում: Տեսախցիկների հիմնական նպատակը տարածքների ամբողջական վերահսկումն է անվտանգության նկատառումներով: Որոշ տեսախցիկներ տեղադրված են նաև դպրոցի ներսում: Տեսագրությունները կարող են օգտագործվել կարգապահական հարցերով, իսկ տեսախցիկի նկարած դեպքերը անհրաժեշտության դեպքում կարող են տրամադրվել տեղական օրինապահ մարմիններին: Կրթաշրջանը օգտագործում է տեսախցիկներ՝ աշակերտների, անձնակազմի և այցելուների անվտանգության համար: Այս սարքավորումը կարող է և չի կարող ցանկացած պահի դիտարկվել: Տեսախցիկները հիմնականում կտեղադրվեն հասարակական վայրերում, որտեղ «գաղտնիություն չի ակնկալվում»: Հանրային տարածքներ են համարվում դպրոցական ավտոբուսները, շենքի մուտքերը, միջանցքները, կայանատեղիները, դպրոցի գրասենյակը, որտեղ աշակերտներ, աշխատակիցներ և ծնողներ են գալիս, մարզադահլիճները միջոցառումների ժամանակ, ճաշարանները և մատակարարման սենյակները: Այնուամենայնիվ, տեսախցիկները չեն կարող ներառել կրթաշրջանի շենքերի բոլոր հասարակական տարածքները կամ ողջ անցուղարձը: Կրթաշրջանի վերահսկողության տեսախցիկները չեն տեղադրվի «մասնավոր» վայրերում, ինչպիսիք են գուգարանները, հանդերձարանները, մասնավոր գրասենյակները (եթե գրասենյակի սեփականատիրոջ համաձայնությունը չի տրվել) կամ դասասենյակները:

ԱՇԿԵՐՏԻ ՎԱՐՔԸ

Արդյունավետ ուսումնառություն չի կարող իրագործվել առանց ապահով, անվտանգ և խաղաղ միջավայրի: Դպրոցի միջավայրում անհանդուրժելի են բռնությունը, գենքը, նախապաշարումը կամ չարաշահումը: Աշակերտը պատասխանատու է իր արարքների համար: Խնդրում ենք ծանոթանալ դպրոցի կանոններին: Այստեղ դուք կգտնեք աշակերտի վարքագծի մասին Կալիֆոռնիա նահանգի և Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի քաղաքականությունն ու կանոնակարգերը:

Աշակերտին պատասխանատու համարելու պարտականություն - Կրթության օրենսգիրք, Մաս 44807
 – Յուրաքանչյուր ուսուցիչ/ղեկավար պետք է աշակերտին խիստ պատասխանատու պահի դպրոցի

տարածքում իր վարքագծի համար, դպրոցի ճանապարհին, ճաշի ժամանակ, դպրոցից դուրս և դպրոցի կողմից հովանավորված միջոցառումների կամ երթևեկության ընթացքում: Վարքագծային կանոնները տրամադրվում են ծնողներին Գլենդելի բոլոր դպրոցներում (Իրավական քաղվածքներ, Կրթական օրենսգրքի 48900, 48900.2, 48900.3, 48900.4, 48900.7 Մասեր):

Դեկավարությունը կարող է համապատասխան քայլերի դիմել (կասեցում կամ հեռացում), երբ ստացված տեղեկությունները ցույց տան, որ դպրոցից հետո կամ դպրոցական աշխատանքներից հետո աշակերտի անվայել վարքը ուղղակի և վնասաբեր ազդեցություն է ունեցել կամ լուրջ վտանգ է սպառնացել կրթաշրջանի կարգապահական համակարգի, կրթադաստիարակչական միջավայրի, աշակերտների, կրթաշրջանի անձնակազմի և/կամ տնօրինության անվտանգությանը կամ ընդհանուր բարօրությանը:

Աշակերտի պատասխանատվությունները – Կրթության օրենսգրք, Մաս 48908 և 5 CCR, Մաս 300 Յուրաքանչյուր աշակերտից պահանջվում է, որ ժամանակին և կանոնավոր դպրոց հաճախի, հնազանդվի դպրոցի կանոններին, հետևի իր ուսուցչի և մյուս պաշտոնյաների բոլոր ուղղորդումներին, աշխատասեր լինի, ենթարկվի իր ուսուցչի և այլ պաշտոնյաների ցուցումներին, ցուցաբերի ջանասիրություն ուսման մեջ, հարգանքով վերաբերվի ուսուցչին և այլ աշխատակիցներին, բարի և քաղաքավարի լինի իր դասընկերների նկատմամբ և խուսափի անպարկեշտ խոսելու և անարգելիքի:

Աշակերտի խուզարկում (GUSD Ուսումնական խորհրդի քաղաքականություն 5145.12) - Դպրոցի պաշտոնատար անձինք կարող են խուզարկել աշակերտներին, ինչպես նաև նրանց ունեցվածքը՝ ներառյալ մեքենաները, երբ օրենքով թույլատրվում է կամ եթե խուզարկումը կարող է փաստեր բացահայտել, որ աշակերտը խախտել է օրենքը կամ կրթաշրջանի և դպրոցի կանոնները:

Սա ներառում է բջջային հեռախոսների տեղեկությունների, հեռախոսային հաղորդագրությունների ու նկարների խուզարկումը: Չեն թույլատրվում առցանց բռնություն (սայբերբուլիինգ) և առցանց սեռական ունտեղություն: Ծնողները իրազեկ պետք է լինեն իրենց երեխաների բջջային հեռախոսների նկարներին և հաղորդագրություններին, որոնք կարող են խախտել օրենքը և այդ ուղղությամբ միջոցներ ձեռք առնեն՝ օրինախախտումը կանխելու համար:

Հատուկ շների կամ մետաղական դետեկտորների օգնությամբ հնարավոր են դասարանների և աշակերտների պահարանիկների պատահական խուզարկումներ՝ արգելված իրերը հեռացնելու համար:

Չենքեր (GUSD Ուսումնական խորհրդի քաղաքականություն 5131.7) - Կալիֆոռնիայ նահանգը և Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը համոզված են, որ շատ կարևոր է ուսումնական անվտանգ միջավայր սպահովելը: Հրագեն, դանակ, պայթուցիկ կամ այլ վտանգավոր առարկաներ, ներառյալ պղպեղային գազ, արցունքաբեր գազ և լազերային ցուցիչ ունենալը հակաօրինական է:

Էլեկտրոնային սարքեր ունենալը և օգտագործելը (Կալիֆոռնիայի կրթության օրենսգրք Մաս 48901.5 և Կրթաշրջանի Ուսումնական խորհրդի կանոնադրություն 5131) – Աշակերտներին պետք է թույլ տրվի իրենց մոտ ունենալ էլեկտրոնային սարքեր, ինչպես օրինակ՝ բջջային հեռախոս, սմարթ հեռախոս, լափթոփ, թաքլետ կամ հաղորդակցման այլ միջոցներ դպրոցի տարացքում, ուսումնական օրվա ընթացքում, մինչև նրանք մասնակցում են դպրոցի կողմից հովանավորված որևէ միջոցառման և գտնվում են կրթաշրջանի աշխատակցի հսկողության տակ: Էլեկտրոնային սարքերը կարելի է օգտագործել արտակարգ իրավիճակներում, դպրոցի տնօրենի հայեցողությամբ կամ առողջական նպատակով (օրինակ՝ ելումուտի կանգ, երկրաշարժի կամ այլ պարագաներ):

Դասերի կամ դպրոցական ծրագրերի ընթացքում էլեկտրոնային սարքերի ոչ պատշաճ օգտագործումը կհամարվի դպրոցի աշխատանքների խանգարում և աշակերտը կենթարկվի կազապահական միջոցառումների: Դպրոցի տնօրինության հրահանգով էլեկտրոնային սարքը կարող է բռնագրավվել: Երբ սարքը բռնագրավվում է, ծնողը/խնամակալը պետք է տեղեկացվեն այդ մասին, և օրվա վերջում բռնագրավված սարքը հանձնվում է աշակերտին կամ նրա ծնողին/խնամակալին: Ուսումնական խորհուրդը պատասխանատվություն չի ստանձնում այդ սարքերի վնասվելու, կորելու կամ գողացվելու պարագայում:

Բռնարարքների ընթացակարգեր (Կրթության օրենսգրք, Մաս 234.4 և 32283.5, Գլենդելի կրթաշրջանի Ուսումնական խորհրդի կանոնադրություն 5131) – Աշակերտներին խրախուսվում է տեղեկացնել իրենց դպրոցի անձնակազմին, եթե նրանց նկատմամբ բռնարարք է տեղի ունեցել կամ եթե կասկածում են, որ որիշ աշակերտ դրա գոհ է դարձել: Վվելացնենք նաև, որ գերտեսուչը կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչը միջոցներ պետք է կիրառեն, որպեսզի աշակերտները կարողանան սպառնալիքների և միջադեպերի մասին գեկուցել գաղտնի և անանուն: Դպրոցի անձնակազմը բռնարարքի ականատես լինելու պարագայում անմիջապես պետք է միջամտի միջադեպը կանխելու, երբ վտանգավոր չի

միջամտելը: (Կրթության օրենսգիրք 234.1): Աշակերտները կարող են ուսուցչին կամ դեկավարին բանավոր կամ գրավոր բողոք ներկայացնել, եթե կարծում են, որ որևէ բռնարարք է տեղի ունեցել: Բռնարարքների դեմ բողոքները պետք է ուսումնասիրվեն և բողոքի ընթացակարգերի համաձայն լուծում գտնեն:

Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը արգելում է խտրականության, ոստնագոյությունների, սահաբեկումների դրսևորումները: Տարեկան դասընթացներ կտրամադրվեն աշակերտների հետ աշխատող ողջ անձնակազմին՝ բռնարարքները և առցանց բռնությունը կանխելու համար: Աշխատակազմի վերապատրաստման վերաբերյալ կրթության կայքէջերի ցանկը կարող եք գտնել, այցելելով՝ <https://www.cde.ca.gov/ls/ss/se/bullyres.asp>: Եթե դուք կամ ձեր երեխան որևէ բռնարարք նկատեք դպրոցում, դպրոցական միջոցառումների ժամանակ, դպրոց գնալուց կամ դպրոցից վերադառնալիս, խնդրում ենք կապվել կրթաշրջանի խորհրդատուի հետ, որը կօգնի ձեզ այդ վարքագիծը պարզաբանելու և դադարեցնելու հարցում, հեռ. (818) 241-3111 ներքին 1285:

Ինքնասպանության կանխում - Գլենդելի կրթաշրջանը ընդունում է, որ ինքնասպանությունը երիտասարդների շրջանում մահվան գլխավոր պատճառներից է և դրան պետք է լրջորեն վերաբերվել: Ինքնասպանության փորձերը և դրանց ազդեցությունը աշակերտների և ընտանիքների վրա նվազեցնելու համար գերատեսուչը կամ լիազորված աշխատակիցը պետք է մշակեն կանխարգելիչ մարտավարություն և միջամտող ընթացակարգեր:

Ժամանակավորապես կասեցման և հեռացման օրենսգիրք Կրթության օրենսգիրք Մաս 48900- Աշակերտը չպետք է կասեցվի կամ դպրոցից հեռացվի, եթե գերատեսուչը կամ դպրոցի տնօրենը, որտեղ արձանագրված է աշակերտը, չհաստատեն, որ աշակերտը կատարել է (a)-ից մինչև (r) ենթաբաժիններում բնութագրված արարքներից մեկը կամ ավելին՝

- (a) (1) Մարմնապես վնասվածք է պատճառել է, փորձել է պատճառել կամ սպառնացել է պատճառել մեկ այլ անձի:
- (2) Դիտավորյալ ուժ կամ բռնություն է ցուցաբերել այլ անձի նկատմամբ՝ բացառությամբ ինքնապաշտպանության պարագայից:
- (b) Ունեցել, վաճառել կամ այլ կերպ հայթայթել է որևէ տեսակի հրագեն, դանակ, պայթուցիկ կամ ուրիշ վտանգավոր առարկա, բացառությամբ այն դեպքի, երբ այդպիսի առարկաներ ունենալու համար աշակերտը գրավոր թույլտվություն ունենա դպրոցի լիազորված աշխատակցից, ինչին համաձայն են տնօրենը կամ նրա հանձնակատարը:
- (c) Այօրինի կերպով ունենալ, գործածել, վաճառել կամ այլ կերպ հայթայթել կամ այլ կերպ լինել որևէ տեսակի արգելված նյութի՝ ալկոհոլ պարունակող կամ ոգելից խմիչքի ազդեցության տակ, որոնք ցանկագրված են Առողջապահության և ապահովության օրենսդրության 2-րդ գլխի 10-րդ բաժնի ներքո (սկսած մաս 11053-ից):
- (d) Այօրինի կերպով առաջարկել, պայմանավորվել կամ բանակցել որևէ տեսակի արգելված նյութ վաճառելու մասին՝ ալկոհոլ պարունակող կամ ոգելից խմիչքի ազդեցության տակ, որոնք ցանկագրված են Առողջապահության և անվտանգության օրենսդրության 2-րդ գլխի 10-րդ բաժնի ներքո (սկսած Մաս 11053-ից) և ապա վաճառել, հանձնել կամ այլ կերպ ուրիշի համար հայթայթել մի այլ տեսակի հեղուկ, նյութ կամ առարկա և այդ հեղուկը, նյութը կամ առարկան ներկայացնել որպես արգելված նյութ, ալկոհոլ պարունակող խմիչք կամ թմրադեղ:
- (e) Գողանալ կամ փորձել գողանալ կամ բռնի կերպով կորզել:
- (f) Վնասել կամ փորձել վնասել դպրոցի գույքը կամ անձնական սեփականությունը:
- (g) Գողանալ կամ փորձել գողանալ դպրոցի գույքը կամ անձնական սեփականությունը:
- (h) Ունենալ կամ օգտագործել ծխախոտ կամ որևէ արտադրանք, որը պարունակում է ծխախոտ կամ նիկոտին, ներառյալ, բայց չսահմանափակվելով ծխախոտով, սիգարետով, բարակ սիգարետով, մեխակի ծխախոտով, անծուխ ծխախոտով, խոտի տեսքով ծխախոտով, ծամելու կամ տերև ծխախոտով: Այնուհանդերձ, այս բաժինը չի արգելում աշակերտին անձնական դեղատոմսով ստացած ապրանք ունենալ կամ օգտագործել:
- (i) Անպարկեշտ կամ գռեհիկ՝ սովորություն դարձած վարք ցուցաբերել:
- (j) Այօրինի կերպով ունենալ, առաջարկել, կազմակերպել կամ բանակցել թմրադեղ օգտագործելու պարագաներ վաճառելու մասին, որը բնութագրված է Առողջապահության և անվտանգության օրենսդրության 11014.5 Մասում:
- (k) (1) Խանգարել դպրոցի աշխատանքները կամ այլ կերպ դիտավորյալ արհամարհել դպրոցի դեկավարների, ուսուցիչների, պաշտոնյաների կամ անձնակազմի հեղինակությունը, երբ նրանք կատարում են իրենց պարտականությունները:

- (2) Բացառությամբ դեպքերի, նախատեսված 48910 Մասով, մակնապարտեզի կամ 1-ից 3-րդ դասարանի աշակերտը չպետք է կասեցվի դպրոցից թիվ 1 ստորաբաժնում թվարկված արարքների համար և այս ստորաբաժինը հիմք չպետք է ծառայի մակնապարտեզի կամ 1-ից 12-րդ դասարանի որևէ աշակերտի կասեցման հանձնարարության համար: 2020 թ. հուլիսի 1-ին այս պարբերությունը կորցնում է իր օրինական ուժը:
- (3) Բացառությամբ 48910 Մասով նախատեսվածի, սկսած 2020 թ. հուլիսի 1-ից, մակնապարտեզում կամ 1-ից 5-րդ դասարաններում ընդգրկված աշակերտը չի կասեցվի (1) կետում նշված գործողություններից որևէ մեկի համար, և այդ գործողությունները հիմք չեն հանդիսանում մակնապարտեզում կամ 1-ից 12-րդ դասարաններում ընդգրկված որևէ աշակերտի հեռացման համար:
- (4) Բացառությամբ 48910 Մասով նախատեսվածի, սկսած 2020 թ. հուլիսի 1-ից, 6-ից 8-րդ դասարաններում ընդգրկված աշակերտը չի կասեցվի (1) կետում նշված գործողություններից որևէ մեկի համար: Այս կետը ուժի մեջ է մինչև 2025 թ. հուլիսի 1-ը:

- (l) Գիտակցաբար ընդունել դպրոցից կամ որևէ մեկից գողացված գույքը:
- (m) Ունենալ զենքի նմանակ: Այս բաժնում օգտագործված «զենքի նմանակ»-ը նշանակում է՝ որևէ զենքի ընդօրինակություն, որը հիմնականում նման է որևէ զենքի ֆիզիկական հատկանիշներին, և ողջամիտ անձը կարող է ենթադրել, որ կրկնօրինակն իրական զենք է:
- (n) Կատարել կամ փորձել կատարել սեռական ոտնձգություն, ինչպես բնութագրված է Քրեական օրենսգրքի 261, 266c, 286, 288, 288a և 289 Մասերում կամ սեռական խոշտանգում, ինչպես բնութագրված է Քրեական օրենսգրքի 243.4 Մասում:
- (o) Անհանգստացնել, սպառնալ կամ ահաբեկել այն աշակերտին, ով բողոքող վկա է կամ դպրոցի կարգապահական միջոցառումներում վկա է՝ նպատակ ունենալով խանգարել այդ աշակերտի վկայությանը կամ վրեժխնդիր լինել կամ երկուսն էլ:
- (p) Ապօրինի կերպով առաջարկել, բանակցել, կազմակերպել վաճառքը կամ վաճառել դեղատոմսով գնված սոմա դեղը:
- (q) Ներգրավվել կամ փորձել ներգրավել «չարամիտ կատակի» մեջ: Այս ենթաբաժնում «չարամիտ կատակ» նշանակում է աշակերտական կազմակերպության, մարմնի նախաձեռնում կամ նախապատվություն, (ուսումնական հաստատության կողմից պաշտոնապես ճանաչված կամ ոչ), որը հավանաբար կարող է մարմնական լուրջ վնասվածքի, անձնական ստորացման կամ անպատվության պատճառ դառնալ, ինչի հետևանքով ֆիզիկական կամ հոգեկան վնաս է պատճառվում նախկին, ներկա կամ ապագա աշակերտին: Այս ենթաբաժնում արժարժված «չարամիտ կատակը» չի վերաբերում սպորտային կամ դպրոցական միջոցառումներին:
- (r) Ներգրավվել բռնարարքների մեջ: Այս ենթաբաժնում հետևյալ տերմինները ունեն հետևյալ նշանակությունները՝
 1. «Բռնարարք» նշանակում է ֆիզիկական կամ բանավոր որևէ կոպիտ արարք՝ ներառյալ գրավոր կամ էլեկտրոնային սարքերով հաղորդակցություն, այդ թվում մեկ կամ ավելի արարքներ մի աշակերտի կամ մի խումբ աշակերտների կողմից, ինչպես սահմանվել է 48900.2, 48900.3 կամ 48900.4 Մասերում, ուղղված մեկ կամ մի քանի աշակերտների, որն ունի կամ ողջամտորեն կարելի է նախատեսել, որ կունենա հետևյալ մեկ կամ մի քանի հետևանքները:
 - A. Ողջամիտ աշակերտի կամ աշակերտների անձին և նրանց անձնական գույքերին վնաս հասցնելու վախի մեջ պահել:
 - B. Չգալիորեն բացասական ազդեցություն ունենալ ողջամիտ աշակերտի ֆիզիկական կամ հոգական առողջության վրա:
 - C. Չգալիորեն խանգարել ողջամիջ աշակերտի ուսումնառությանը:
 - D. Ողջամիտ աշակերտին զգալիորեն խանգարել դրսևորելու իր ունակությունները, որպեսզի չկարողանա մասնկացել կամ օգտվել դպրոցի կողմից կազմակերպված ծառայություններից, արտոնություններից և միջոցառումներից:
 2. (A) «Էլեկտրոնային գործողություն» նշանակում է դպրոցի տարածքում կամ դրանից դուրս հաղորդագրության ստեղծում կամ փոխանցում, ներառյալ, բայց չսահմանափակվելով էլեկտրոնային սարքերով՝ հեռախոսով, առանց լարի հեռախոսով, առանց լարի սարքերով, համակարգիչով, փեյջերով, էլեկտրոնային սարքի միջոցով, ներառյալ, բայց չսահմանափակվելով հետևյալով՝
 - (i) Հաղորդագրություն, տեքստ, ձայն, տեսաներիզ կամ պատկեր:

- (ii) Հայտարարություն սոցիալական ցանցերում, ներառյալ, բայց չսահմանափակվելով հետևյալով
- (I) Գրել burn page-ում կամ ստեղծել այն: «Burn page»-ը կայքէջ է համացանցում, որը ստեղծվել է թիվ 1 պարբերության մեջ ցանկագրված մեկ կամ ավելի նպատակների համար:
 - (II) Աշակերտին մարմնավորող կերպար ստեղծել՝ թիվ 1 պարբերության մեջ թվարկված մեկ կամ ավելի նպատակներով: «Իրական կերպավորում» նշանակում է գիտակցաբար և առանց դիմացինի համաձայնության կերպավորել աշակերտին՝ նրա հանդեպ բռնարարքներ ցուցաբերելու նպատակով և այնպես, որ մեկ ուրիշ աշակերտ համոզված լինի, թե դա ում է վերաբերում:
 - (III) Ստեղծել կեղծ պրոֆայլ՝ թիվ 1 պարբերության մեջ ցանկագրված մեկ կամ ավելի նպատակների համար: Կեղծ պրոֆայլ նշանակում է մտացածին աշակերտի պրոֆայլ կամ այլ աշակերտի նմանությամբ կամ հատկանիշներով պրոֆայլ, ոչ թե դրա իրական ստեղծողի տվյալներով:
- (iii) (I) Առցանց սեռական բռնարարքի գործողություն:
- (II) Սույն կետի նպատակների համար «առցանց սեռական բռնարարք» նշանակում է աշակերտի կողմից այլ աշակերտի կամ դպրոցի անձնակազմի լուսանկարի կամ այլ տեսագրության տարածում կամ տարածելու դրդում, կամ կարող է կանխատեսել (1) պարբերության (A)-ից (D) ենթակետերում նկարագրված հետևանքներից մեկը կամ մի քանիսը: Լուսանկարը կամ այլ տեսագրություն, ինչպես նկարագրված է սույն ենթակետում, պետք է պարունակի մերկ, կիսամերկ կամ սեռական բնույթի լուսանկարներ կամ անչափահասի այլ տեսողական ձայնագրության պատկեր, որտեղ անչափահասը ճանաչելի է:
- (III) Սույն կետի նպատակների համար «առցանց սեռական բռնարարք» չի ներառում այնպիսի պատկեր կամ դիմանկար, որն ունի որևէ լուրջ գրական, գեղարվեստական, կրթական, քաղաքական, գիտական արժեք, կամ որը ներառում է մարզական իրադարձություններ կամ դպրոցի կողմից թույլատրված գործողություններ:
- (B) Չնայած (1) պարբերության և (A) ենթապարբերության, էլեկտրոնային գործողության օրենքը չի կարող տարածվել վարքի վրա միայն ելնելով նրանից, որ այն փոխանցվել է համացանցում կամ ներկայումս տեղադրված է համացանցում:
- (3) «Ողջամիտ աշակերտ» նշանակում է աշակերտ, ներառյալ, բայց չսահմանափակվելով բացառիկ կարիքներով աշակերտ, ով սովորական խնամքի է ենթակա, ցուցաբերում է հմտություն և դատողություն իր տարիքին հատուկ պահվածքում, կամ իր տարիքի համար բացառիկ կարիքներով աշակերտ: «Ողջամիտ աշակերտ» նշանակում է աշակերտ, ներառյալ, բայց չսահմանափակվելով բացառիկ կարիքներով մի աշակերտ, ով ցուցաբերում է միջին աստիճանի խնամքիկարիք, հմտություն և դատողություն՝ իր տարիքին համապատասխան աշակերտի կամ բացառիկ կարիքներով իր տարիքին համապատասխան աշակերտի հետ շփվելու համար:
- (s) Աշակերտը չպետք է կասեցվի կամ դպրոցից հեռացվի այս բաժնում թվարկված որևէ արարքի համար, բացառությամբ այն պարագայի, երբ այդ արարքը վերաբերում է դպրոցական աշխատանքներին կամ միջոցառումներին, որոնք կատարվել են գերատեսուչի, տնօրենի կամ այլ կրթաշրջանի իրավասության տակ գտնվող դպրոցում: Աշակերտը կարող է կասեցվել կամ դպրոցից հեռացվել այս բաժնում թվարկված որևէ արարքի համար, որոնք վերաբերում են դպրոցական աշխատանքներին, դպրոցական միջոցառումներին կամ դպրոցական հանախումներին, որոնք տեղի են ունեցել, ներառյալ, բայց չսահմանափակվելով հետևյալով.
1. Դպրոցի տարածքում գտնվելիս:
 2. Դպրոց գնալիս կամ վերադառնալիս:
 3. Ճաշի ընթացքում՝ դպրոցում կամ դպրոցից դուրս:
 4. Դպրոցի հովանավորությամբ կազմակերպված միջոցառումների ընթացքում, այնտեղ գնալիս կամ վերադառնալիս:
- (t) Քրեական օրենսգրքի 31 Մասի համաձայն այն աշակերտը, որ աջակցել կամ դրդել է ուրիշին մարմնական վնասվածք պատճառելու կամ փորձել է մարմնական վնասվածք պատճառել, կարող է կասեցվել դպրոց հաճախելուց, բայց չհեռացվել՝ բացառությամբ այն պարագայի, երբ աշակերտը դեռահասների դատարանի կողմից դատապարտվի որպես հանցագործությանն աջակցող կամ դրդող, որի հետևանքով տուժած անձը մարմնական խիստ վնասվածք է ստացել կամ մարմնական վնասվածքը համապատասխանել է (a) ենթաբաժնի կարգապահական կանոնների պահանջին:
- (u) Այս բաժնում «դպրոցական գույքը» ներառում է, սակայն չի սահմանափակվում օգտագործված էլեկտրոնային ֆայլերով ու տվյալներով:

(v) Գերատեսուչը կամ դպրոցի տնօրենը խրախուսվում են պատժի ենթակա աշակերտի կասեցման կամ հեռացման փոխարեն վարքագծի և ուսման արդյունքների բարելավմանն ուղղված, հետազոտությունների վրա հիմնված, ռազմավարություններ օգտագործել որպես այլընտրանք, որոնք համապատասխանում են նրա տարիքին և նախագծվել են աշակերտի վարքն ուղղելու համար, ինչպես նշվել է 48900.5 Մասում:

(w) (1) Օրենսդրության միտումն է կասեցման կամ հեռացման փոխարեն այլընտրանքներ կիրառել այն աշակերտի հանդեպ, որը դասից փախչում, ուշանում կամ այլ կերպ բացակայում են դպրոցական միջոցառումներից:

(2) Օրենսդրության Բազմաշերտ Օժանդակող Համակարգը, որն իր մեջ ներառում է արդարադատության վերականգնողական փորձ, տրավմաների վերաբերյալ փորձ, սոցիալ-գազացմունքային ուսուցում և դպրոցում դրական վարքի միջամտություններ և աշակցություն, կարող են օգտագործվել աշակերտներին օգնելու ձեռք բերելու կարևորագույն սոցիալական և գազացմունքային հմտություններ, աշակցություն ստանալ տրավմայի հետևանքներից ձերբազատվելու, հասկանալու իրենց գործողությունների հետևանքները և մշակելու դպրոցական համայնքին հասցված վնասը վերականգնելու իմաստային մեթոդներ:

Կալիֆոռնիայի Կրթության օրենսգիրք, Մաս 48900.2

Ի հավելումն 48900 Մասի սահմանած պատճառների, աշակերտը կարող է դպրոցից կասեցվել կամ կարող է առաջարկվել նրան դպրոցից հեռացնել, եթե գերտեսուչը կամ դպրոցի տնօրենը, որտեղ արձանագրված է աշակերտը, որոշեն, որ աշակերտը կատարել է սեռական ոտնձգություն ըստ 212.5 Մասի: Սույն բաժնի նպատակին առընթեր, 212.5 Մասում սահմանված վարքը, տուժված անձի հետ նույն սեռին պատկանող այլ ողջամիտ անձի կողմից բավականաչափ ծանր պետք է լինի, որը բացասական ազդեցություն է ունեցել անհատի ուսման վրա կամ ստեղծել է ահաբեկչական, թշնամական կամ վիրավորական միջավայր: Այս բաժինը չի կիրառվի մանկապարտեզի և 1-ից 3-րդ դասարանների աշակերտների հանդեպ:

Կալիֆոռնիայի Կրթության օրենսգիրք, Մաս 48900.3

Ի հավելումն թիվ 48900 և 48900.2 Մասերում սահմանված պատճառների, 4-րդից 12-րդ դասարանների ցանկացած աշակերտ կարող է կասեցվել դպրոց հաճախելուց կամ առաջարկվել դպրոցից հեռացվելու, եթե գերտեսուչը կամ դպրոցի տնօրենը, որտեղ արձանագրված է աշակերտը, որոշեն, որ աշակերտը պատճառել, փորձել է պատճառել, սպառնացել է կամ մասնակցել է ատելության հիմունքով բռնության, ինչպես բռնագրգռվել է 233 հատվածի (e) ենթաբաժնում:

Կալիֆոռնիայի Կրթության օրենսգիրք, Մաս 48900.4

Ի հավելումն 48900 և 48900.2 հատվածներում սահմանված պատճառների, 4-րդից 12-րդ դասարանների ցանկացած աշակերտ կարող է կասեցվել դպրոց հաճախելուց կամ առաջարկվել դպրոցից հեռացվելու, եթե գերտեսուչը կամ դպրոցի տնօրենը, որտեղ արձանագրված է աշակերտը, որոշեն, որ աշակերտը կանխամտածված թշնամական և ահաբեկչական միջավայր է ստեղծել՝ մասնակցելով դպրոցի անձնակազմի կամ աշակերտների դեմ ուղղված ոտնձգության, սպառնալիքի կամ ահաբեկման գործին, որն այնքան լուրջ ու ազդեցիկ է եղել, որն իրապես և փաստորեն խանգարել է դասարանային աշխատանքները անկարգություն ստեղծելով և անձնակազմի կամ աշակերտների իրավունքները ոտնահարելով:

Կալիֆոռնիայի Կրթության օրենսգիրք, Մաս 48900.5

(a) 48922.2 մասում սահմանված կասեցումը դպրոցից, ներառյալ վերահսկված կասեցումը, պետք է հարկադրվի միայն այն ժամանակ, երբ աշակերտի վարքն ուղղելու բոլոր միջոցները ձախողվել են: Կրթաշրջանը կարող է փաստագրել աշակերտի վարքն ուղղելու համար օգտագործված այլ միջոցները և կցել աշակերտի գործին, որը կարելի է ձեռք բերել 49069 մասի համաձայն: Այնուամենայնիվ, աշակերտը՝ ներառյալ բացառիկ կարիքներով աշակերտը, ինչպես նշվել է 56026 Մասում, կարող է կասեցվել՝ համաձայն Միացյալ Նահանգների օրենսգրքի 1415 Մասի Խորագիր 20-ի, եթե տնօրենը կամ գերտեսուչը որոշեն, որ աշակերտը առաջին կարգազանցությամբ խախտել է 48900 Մասում թվարկված (a), (b), (c), (d) կամ (e) ենթակետերը կամ եթե աշակերտի ներկայությունը վտանգ է սպառնում ուրիշներին:

(b) Վարքագծի ուղղման այլ միջոցները ներառում, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝

- (1) Ժողով՝ դպրոցի անձնակազմի և աշակերտի ու նրա ծնողների/խնամակալների հետ:
- (2) Հղում խորհրդատվության՝ դպրոցի խորհրդատուի, հոգեբանի, սոցիալական ծառայություն աշխատողի, երեխայի բարեկեցության հարցերով պաշտոնյայի կամ Աշակերտների աշակցության ծառայությունների գրասենյակի անձնակազմի հետ:
- (3) Ուսումնասիրող խմբեր, ուղեցույց տվող խմբեր, ռեսուրսներով օգնող խմբեր կամ միջամտող այլ խմբեր, որոնք քննում են վարքագիծը և մշակում ու գործադրում են անհատականացված ծրագիր՝ աշակերտի ու ծնողի համագործակցությամբ վարքագիծն ուղղելու համար:

- (4) Հղում Մոցիալ-հոգեբանական կամ հոգեբանական-ուսումնական համապարփակ գնահատման անհատականացված ուսումնական ծրագրի ստեղծման նպատակով դաշնային կառավարության օրենքի համաձայն 1973 թ. վերականգնողական Դաշնային օրենսդրության 504 Մասի (29 U.S.C. Մաս. 794(a)):
- (5) Ընդգրկում վարքագծի ուղղման կամ գայրոյթի գալման դաստիարակչական ծրագրում:
- (6) Մասնակցություն վերականգնողական արդարություն ծրագրում:
- (7) Դպրոցական օրվա ընթացքում դրական վարքագծի աշակցություն՝ միջամտության ծրագրերով:
- (8) Արտադասարանային ծրագրեր, որոնք անդրադառնում են վարքագծի որոշակի խնդիրների կամ բացահայտվում են աշակերտի դական աշխատանքներն ու վարքագիծը, ներառյալ, սակայն չսահմանափակվելով այն ծրագրերով, որոնք համատեղ աշխատում են ծնողի ու տեղական համայնքային խմբերի հետ:
- (9) 48900.6 Մասում նկարագրված այլընտրանքներից որևէ մեկը:

Կալիֆոռնիայի Կրթության օրենսգիրք, Մաս 48900.7

- (a) 48900, 48900.2, 48900.3 և 48900.4 Մասերում սահմանված պատճառներից բացի, աշակերտը կարող է կասեցվել կամ առաջարկվել դպրոցից հեռացվել, եթե գերտեսուչը կամ դպրոցի տնօրենը, որտեղ արձանագրված է աշակերտը որոշեն, որ աշակերտն ահաբեկչական սպառնալիք է կատարել դպրոցի պաշտոնյաների կամ դպրոցի գույքի կամ երկուսի դեմ:
- (b) Այս հատվածի նպատակին առընթեր, «ահաբեկչական սպառնալիքը» պետք է ներառի որևէ գրավոր կամ բանավոր հայտարարություն մի անձի կողմից, ով դիտավորյալ սպառնում է հանցանք գործել, որը կհանգեցնի մահվան, մի այլ անհատի մարմնական վնասվածքի կամ հազար դոլարից ավելի արժողությամբ գույքի վնասի, և դա կկատարվի հատուկ մտադրությամբ, այնպես որ հայտարարությունը կընդունվի իբրև սպառնալիք, նույնիսկ, եթե իրականում այդ մտադրությունն իրագործելու նպատակ չի եղել, հանգամանքների ներքո, դա այնքան պարզ, անվիճելի, անհետաձգելի և որոշակի է, որ սպառնալիքի ենթակա անհատին հաղորդում է նպատակի կարևորությունը և սպառնալիքի իրագործման անմիջական հեռանկարը, և հետևաբար պատճառ է դառնում, որ այդ անհատն անվերջ սարսափի մեջ լինի իր, իր անմիջական ընտանիքի կամ կրթաշրջանի գույքի անվտանգության կամ սպառնալիքի ենթակա անհատի անձնական գույքի կամ նրա անմիջական ընտանիքի գույքի անվտանգության համար:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱԶԳԱՆՃԱՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐ

Կալիֆոռնիայի Կրթության օրենսգիրք, Մաս 48901.5. Ցանկացած անձի, այդ թվում աշակերտի կողմից ցանկացած դասարանում արգելվում է էլեկտրոնային ազդանշանային սարքի օգտագործումը՝ առանց ուսուցչի և տնօրենի նախնական համաձայնության, քանի որ այն խանգարում և խաթարում է դպրոցներում դասավանդման գործընթացը և կարգապահությունը: Թույլատրման միակ ընդունելի տարբերակը արտոնագրված բժշկի որոշումը կարող էր լինել, որ աշակերտը պետք է սարքն օգտագործի իր առողջության և անվտանգության համար: Ցանկացած խախտում անող աշակերտ ենթակա է համապատասխան կարգապահական գործողությունների: Մնաթֆոնների օգտագործումը կարող է արգելվել կրթաշրջանների, չարտերային դպրոցների և վարչական շրջանի դպրոցների կողմից, մինչ աշակերտը գտնվում է դպրոցում և անձնակազմի ղեկավարության ու հսկողության ներքո: Գոյություն ունեն առողջության և հատուկ կրթության տարբերակիչ սահմանափակումներ կամ օգտագործում աշակերտների ընդհանուր զանգվածի համեմատ, բայց դրանք պետք է ներկայացվեն գրավոր և պահվեն աշակերտի տվյալների հետ՝ գաղտնիության պահպանմամբ:

ԲՈՆԻ ՀՎՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԶՈՆ

USC 7912. Այն աշակերտը, որը դպրոցում գտնվելիս բռնի հանցագործության զոհ է դարձել, պետք է հնարավորություն ունենա տասը օրացուցային օրվա ընթացքում տեղափոխվելու անվտանգ հանրային դպրոց նույն կրթաշրջանում, այդ թվում չարտերային դպրոց: Եթե կրթաշրջանի կողմից սպասարկվող տարածքում չկա մեկ այլ դպրոց, ապա կրթաշրջանը խրախուսվում է, բայց չի պարտադրվում, ուսումնասիրել այլ հարմար տարբերակներ, ինչպիսիք են հարևան կրթաշրջանի հետ պայմանավորվածությունը աշակերտին միջկրթաշրջանային փոխանցման միջոցով ընդունելու վերաբերյալ: Քրեական օրենսգրքում բռնի քրեական հանցագործությունների ուղղակի օրինակներն են՝ մահափորձը, ծանր մարմնական վնասվածք հասցնելը ծեծի արդյունքում, մահացու զենքով հարձակումը, սեռական բռնությունը, կողոպուտը, շորթումը և ատելությունից բխող հանցագործությունները: Հավելյալ տեղեկությունների համար զանգահարեք՝ (818) 241-3111 ներքին 1285.

ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գլենդելի կրթաշրջանի աշակերտի համար խորհրդատվության հղում ստանալու նպատակով ծնողները/խնամակալները կարող են դիմել Աշակերտների բարեկեցության բաժանմունքի վարիչ, դոկտոր Այլին Մազրանին, հեռ. (818) 241-311 ներքին 1500 համարով, կամ այցելել մեր կայքէջը՝ www.GUSD.net դիմելու համար: Բաժանմունքը կաշխատի ընտանիքների հետ՝ հետևյալ մատակարարների օգնությամբ մեր աշակերտներին աջակցելու համար. կրթաշրջանի intern Academy, բաժնին կցված կրթաշրջանի թերապևտներ և տեղական հոգեկան առողջության գործակալություններ:

ԻՆԸՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կալիֆոռնիայի Կրթության օրենսգիրք, Մաս 215: Աշակերտների ինքնասպանության մակարդակը մտահոգիչ է դպրոցական համայնքի բոլոր անդամների համար: Կալիֆոռնիայում ամեն 5 օրը մեկ 12 տարեկան կամ ավելի մեծ մեկ երեխա մահանում է ինքնասպանությամբ: Կալիֆոռնիայի օրենսդրությամբ կրթաշրջաններից պահանջվեց 7-12 տարեկաններին տալ տարիքին և տեղական քաղաքականությանը համապատասխան ինքնասպանությունների կանխարգելման դասընթաց: Օրենսդիրները որոշել են, որ հոգեկան առողջության ոլորտի դասընթացները և բարելավված ծառայությունների համակարգումը տարածվեն նաև մեր տարրական դպրոցների աշակերտների վրա: Ողջ կրթական անձնակազմի ընդհանուր նպատակը ուսման անվտանգ միջավայրի ապահովումն է, ուր որևէ աշակերտի վտանգ չի սպառնում:

ԴՐԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ (PBIS)

Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը նպաստում ու աջակցում է դրական վարքագծի զարգացմանը, որպես աշակերտին դպրոցից կասեցնելու այլընտրանք: Դրական վարքագծի միջամտությունն ու աջակցությունը կենտրոնանում է դպրոցի տարածքում ու դասարանում մարտավարություններ օգտագործելու վրա, որպեսզի օգնի աշակերտին սովորել ու կիրառել այնպիսի վարքագիծ, որը նպաստում է հարգալից, պատասխանատու ու ապահով դպրոցական միջավայր կերտելուն: Աշակերտների ու բոլոր չափահասների միջև ամուր ու դրական փոխհարաբերություն ստեղծելն է այս հիմնակառույցի հիմնավոր բաղադրատարրը:

ԻՆԱՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Կալիֆոռնիայի օրենքի համաձայն (Ընտանեկան օրենսգիրք, Մաս 3010), յուրաքանչյուր ծնող հավասարապես պատասխանատու է իր երեխայի խնամատարության համար: Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի քաղաքականությունն է՝ ենթարկվել Ընտանեկան օրենսգրքի 3010 Մասին, որի համաձայն թե մայրը, թե հայրը կարող են ինքնությունը հաստատող փաստաթուղթ ներկայացնելով, իրենց երեխային դպրոցից վերցնել կամ նրա առողջության, կրթության և բարեկեցության մասին որոշում կայացնել:

Ընտանեկան օրենսգրքի 3025 Մասի համաձայն չպետք է ոչ-խնամարկու ծնողին մերժել իր երեխայի ուսումնական արձանագրություններին ծանոթանալ: Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը պետք է թույլատրի, որպեսզի թե հորը, թե մորը հասանելի լինեն իրենց երեխայի դպրոցական արձանագրությունները, այդ թվում՝ դպրոցի տնօրինության տակ եղած բժշկական տեղեկագրերը:

Եթե դատարանի կարգադրությամբ սահամանափակվել է երեխայի այցելության, խնամակալության կամ երեխայի մասին տեղեկություններ ստանալու ծնողի իրավունքը, դա պետք է լինի երկու ծնողի պատասխանատվությունը՝ անմիջապես դպրոցին տամադրելու դատավորի ստորագրությամբ և դատարանի կողմից կնքված հրամանը: Դատարանի հրամանի պատճենները կարելի է ստանալ դատարանի գրասենյակից, որտեղ կատարվել է կարգադրությունը:

Միայն մեկ ծնողի բանավոր կամ գրավոր հայտարարությունը, առանց դատարանի ստորագրված փաստաթղթի, բավարար պատճառ չի լինի, որ դպրոցը մերժի երեխային մոտենալու կամ երեխայի դպրոցական արձանագրություններին հասու լինելու մյուս ծնողի իրավունքը:

Գլենդելի կրթաշրջանի բոլոր դպրոցները երեխայի խնամակալության հարցում կհետևեն դատարանի կողմից տրված ամենավերջին փաստաթղթին, իսկ փաստաթուղթ չլինելու դեպքում, Կալիֆոռնիայի օրենքի համաձայն, ինչպես նշված է վերը, յուրաքանչյուր ծնողի կտրվի երեխային խնամելու հավասար իրավունքը:

Ծնողներից խնդրում ենք դպրոցի անձնակազմին չներառել երեխայի խնամակալության վեճերին: Եթե ծնողը համոզված չէ, որ դպրոցն ունի իր երեխայի խնամակալության հարցով վերջին տեղեկությունները, նա պետք է կապվի դպրոցի հետ և համոզվի, թե արդյոք դպրոցն ունի դատարանի վերջին կարգադրության պատճենը:

ՃԵՆԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆԿԱՐԳԵԼՄԱՆ ՈւՍՈՒՑՈՒՄ (TUPE)

Կալիֆոռնիայի առողջապահության և անվտանգության օրենսգրքի 104420 և 104495 մասերի համաձայն, Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը հովանավորում է ծխախոտից զերծ միջավայրի ստեղծումը: Աշակերտների, պաշտոնյաների ու այցելուների ծխելը ցանկացած ժամանակ արգելված է կրթաշրջանի սեփականության տակ գտնվող որևէ տարածքում: (Էլեկտրոնային ծխախոտները համարվում են ծխախոտային արտադրանք: Ծխելու համար հատուկ նյութ արտադրող սարքավորումները համարվում են թմրանյութ արտադրող): Այս քաղաքականության իրագործման վերաբերյալ որևէ հարց ունենալու դեպքում դիմել դպրոցի ղեկավարներին:

ԴՊՐՈՑԻ ՏԱՐԱԾՔԻՑ ԳՈՒՐՄ ԿԵՍՕՐՅԱ ՃԱՇ

Կալիֆոռնիայի Կրթության օրենսգրք, Մաս 44808.5 Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի կառավարման խորհուրդը, համաձայն Կրթության օրենսգրքի 44808.5 Մասի, որոշում է կայացրել թույլատրել Կրեեսենտա Վալի ավագ դպրոցի աշակերտներին կեսօրյա ճաշի ընթացքում դուրս գալ դպրոցից: Ոչ կրթաշրջանը, ոչ էլ որևէ պաշտոնատար անձ կամ աշխատող պատասխանատու չեն աշակերտի վարքի կամ անվտանգություն համար այդ ընթացքում, երբ աշակերտը լքել է դպրոցի տարածքը համաձայն սույս բաժնի:

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐ

Կալիֆոռնիայի Կրթության օրենսգրք Մաս 58501 Կրթաշրջաններից պահանջվում է ծնողներին տեղյակ պահել այլընտրանքային դպրոցների հնարավորության մասին: Կալիֆոռնիայի նահանգային օրենքը լիազորում է բոլոր կրթաշրջաններին առաջարկել այլընտրանքային դպրոցներ: Կրթության օրենսգրքի 58500 Մասի համաձայն, այլընտրանքային դպրոցն այն դպրոցն է կամ դասարանը, որի գործունեությունն ուղղված է հետևյալին.

- Առավելագույնս բարձրացնել աշակերտի հնարավորությունները՝ զարգացնել ինքնավտահույս, նախաձեռնության, բարության, հնարամտության, քաջության, ստեղծագործության, պատասխանատվության ու երջանկության դրական արժեքները:
- Հասկանալ, որ կրթությունն այն ժամանակ է լավագույնս իրականացվում, երբ աշակերտը ուսման ձգտում է ունենում:
- Պահպանել ուսումնական այնպիսի պայմաններ, որն առավելագույնի կհասցնի աշակերտի ինքնամղումը և նրան կխրախուսի, որ իր ազատ ժամերին հետևի իր անձնական հետաքրքրություններին: Այս հետաքրքրությունները կարող են ամբողջովին և ինքնուրույն կերպով ձևավորվել աշակերտի մոտ կամ կարող են ամբողջապես կամ մասամբ ընտրվել նրանց ուսուցիչների ներկայացրած ուսումնական նախագծերից:
- Ուսուցիչների, ծնողների ու աշակերտների համար առավելագույնի հասցնել ուսման գործընթացն ու առարկաները համատեղ բարելավելու հնարավորությունները: Այս հնարավորությունները շարունակական ու մշտական գործընթաց պետք է լինեն:
- Առավելագույնի հասցնել աշակերտների, ուսուցիչների և ծնողների հնարավորությունները, որպեսզի կարողանան շարունակաբար արձագանքել մշտապես փոփոխվող աշխարհին, ներառելով, բայց չսահմանափակելով համայնքով, որտեղ գտնվում է դպրոցը:

Ծարունակական ավագ դպրոց – *Այան Ֆ. Դեյլի ավագ դպրոցն* ունի կամավոր ծրագիր այն աշակերտների համար, ովքեր չունեն բավարար միավորներ իրենց բնակության հասցեի դպրոցն ավարտելու համար: Այս ծրագիրը հնարավորություն է տալիս աշակերտներին արագ միավորներ հավաքել և աստեսատ ստանալ Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի կողմից:

Անկախ ուսումնական ծրագիր – *Վերդուգո Ակադեմիա* կոչվող ծրագիրն այն աշակերտների համար է, ում ծնողները ցանկանում են իրենց երեխաներն ինքնուրույն ուսուցում ստանան: Այս աշակերտները, տանը աշխատելով, ավարտում են իրենց հանձնարարությունները և գնահատվում: Աշակերտը պետք է ամեն շաբաթ հանդիպի Վերդուգո Ակադեմիայի ուսուցիչների հետ, որ իր կատարած աշխատանքները ստուգվեն և առաջադիմությունը գնահատվի: Ավագ դպրոցի աշակերտը, ով կատարել է 9-12-րդ դասարանների աշխատանքները, կարող է աստեսատ ստանալ Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի կողմից:

Համայնքային ցերեկային դպրոց – *Ջուել սիթի* համայնքային ցերեկային դպրոցում, ոչ իրենց ընտրությամբ, տեղավորվում են այն աշակերտները, ովքեր խախտել են աշակերտի անվտանգության ու կարգապահության Կրթության օրենսգրք դրույթները: Աշակերտները մասնակցում են ամենօրյա դասընթացների մեկ կիսամյակից մինչև ամբողջ տարի ժամանակահատվածով: Աշակերտներն ուսումնական ծրագրերից բացի մասնակցում են

նաև կարգապահության ու վարքագծի բարելավման համապատասխան ծրագրերին՝ նախքան իրենց բնակության հասցեի դպրոց վերադառնալը:

Եթե որևէ ծնող, աշակերտ կամ ուսուցիչ հետաքրքրված է այլընտրանքային դպրոցների մասին հավելյալ տեղեկություններ ստանալով, ապա կարող է այս օրենքի պատճենը ստանալ կրթաշրջանի վարչական շրջանի դպրոցների գերատեսուչի գրասենյակից, այս կրթաշրջանի վարչական գրասենյակից և յուրաքանչյուր դպրոցի տնօրենի գրասենյակից:

Կալիֆոռնիայի Կրթության օրենսգրքի 48208, 48980, 48206.3 Մասեր. Ժամանակավորապես անկարողունակ աշակերտներին տրամադրվում է տնային և հիվանդանոցային ուսուցում:

ՍԵՌԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՈՏՆՁԳՈՒԹՅՈՒՆ

Կալիֆոռնիայի Կրթության օրենսգրքի Մաս 231.5 Պահանջվում է, որ յուրաքանչյուր կրթաշրջան ունենա գրավոր կանոնադրություն սեռական ոտնձգությունների մասին: Գլենդեյլի հանրային դպրոցների կրթաշրջանի Ուսումնական խորհրդի 5145.7 Մասը (ներքևում) համապատասխանում է այս պահանջին:

Սեռական ոտնձգություն (Գլենդեյլի կրթաշրջանի Ուսումնական խորհրդի կանոնադրություն 5145.7) – Ուսումնական խորհուրդը հանձնառու է տրամադրել անվտանգ, ոտնձգությունից ու խտրականությունից զերծ ուսումնական միջավայր: Ուսումնական խորհուրդն արգելում է որևէ աշակերտի նկատմամբ սեռական ոտնձգություն՝ դպրոցում կամ դպրոցի կողմից և/կամ դպրոցին առնչվող միջոցառումների ժամանակ: Ուսումնական խորհուրդն արգելում է նաև փոխվեժխնդրության որևէ վարքագիծ կամ արարք որևէ անձի հանդեպ, ով բողոքել, վկայել, աջակցել կամ այլ կերպ աջակցել է է սեռական ոտնձգությանն առնչվող գործընթացին:

Անկախ նրանից ոտնձգության ենթարկված աշակերտը, նրա ծնողը/խնամակալը կամ երրորդ կողմը կրթաշրջանի ընթացակարգերի համաձայն բողոք ներկայացրել են կամ այլ կերպ աշակերտի անունից խնդրել են միջոցներ ձեռք առնել թե ոչ հավանական ոտնձգության կապակցությամբ, այդ մասին տեղյակ դպրոցը պետք է անմիջապես միջոցներ ձեռք առնի, որոշելու թե ինչ է պատահել և ապա համապատասխան քայլերի դիմի սույն իրավիճակը լուծելու համար:

- Նույնիսկ եթե ծնողը/խնամակալը կամ աշակերտը չեն ցանկանում բացահայտել աշակերտի ինքնությունը, կրթաշրջանի անձնակազմը պետք է սահմանափակի ենթադրյալ ոտնձգության հետևանքները և կանխի դրա կրկնվելը՝ առանց պաշտոնական գործողությունների նախաձեռնման:
- Այսպիսի քայլերը կարող են ներառել սահմանափակ քննչական գործողություններ՝ պաշտպանելու համար բողոքողին ու դպրոցական համայնքին և կանխելու դրա կրկնությունը՝ միաժամանակ գաղտնի պահելով բողոքողի ինքնությունը:
- Այս գործողությունները կարող են ներառել բողոքարկուին ծառայություններ տրամադրելը, ինչպիսիք են խորհրդատվական ծառայությունները, հսկողություն ու վերահսկման ավելացում դեպքի վայրում, վերապատրաստման ու դաստիարակչական նյութեր աշակերտների և աշխատակիցների համար կամ սեռական բռնարարքին կապված դպրոցի քաղաքականության փոփոխում ու հրապարակում:
- Սա նաև վերաբերում է այն ոտնձգությանը, որը հիմնված է ցեղի, մաշկի գույնի, ազգային ծագման, հաշմանդամության ու տարիքի վրա:

Կրթաշրջանը մեծապես քաջալերում է այն աշակերտին, ով զգում է, թե դպրոցում կամ դպրոցի կողմից կազմակերպված կամ դպրոցին առնչվող միջոցառման ընթացքում ենթարկվել է սեռական ոտնձգության մի ուրիշ աշակերտի կամ որևէ չափահասի կողմից կամ դպրոցի տարածքից դուրս ենթարկվել է սեռական ոտնձգության, որը շարունակվել է դպրոցի տարածքում, անմիջապես կապվել իր ուսուցչի, տնօրենի կամ դպրոցի աշխատակազմի որևէ անձի հետ: Որևէ ծառայող, ով տեղեկացնում կամ ականատես է լինում սեռական ոտնձգության միջադեպի, պետք է անմիջապես տեղեկացնի տնօրենին կամ կրթաշրջանի համապատասխան պաշտոնյային: Տեղեկացվելու պես, տնօրենը կամ համապատասխան պաշտոնյան պետք է քայլեր ձեռնարկեն հետաքննելու և հասցեագրելու մեղադրանքը՝ ինչպես նշված է կից վարչական կանոնադրության մեջ:

Գերտեսուչը կամ նրա լիազորված ներկայացուցիչը պետք է դիմեն համապատասխան քայլերի՝ գործադրելու կրթաշրջանի սեռական ոտնձգության քաղաքականությունը:

- A. Դասավանդում/տեղեկատվություն - Գերատեսուչը կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչը պետք է վստահանան, որ կրթաշրջանի բոլոր աշակերտները ստանան տարիքին համապատասխան ուսուցում սեռական ունեցման մասին: Նման ուսուցումը և տեղեկատվությունը պետք է ներառեն՝
1. Որ արարքներն ու վարքագիծն է հանդիսանում սեռական ունեցման, ներառյալ այն ունեցմանը, որոնք կարող են պատահել միասեռ մարդկանց միջև և կարող են սեռական բռնության պատճառ դառնալ:
 2. Հստակ հաղորդագրություն, որ աշակերտը չպետք հանդուրժի սեռական ունեցման իր հանդեպ ցանկացած պարագայում:
 3. Խորախուսել գեկուցելու սեռական ունեցման նկատված դեպքերը, նույնիսկ եթե ոստիկանական գործը չի բողոքել:
 4. Հստակ հաղորդագրություն, որ աշակերտի անվտանգությունը հանդիսանում է կրթաշրջանի առաջնային մտահոգությունը, և ենթադրյալ գոհին վերաբերող որևէ խախտում կամ սեռական ունեցման միջադեպի մասին որևէ անձի գեկույց կքննարկվեն առանձին-առանձին և չեն ազդի սեռական ունեցմանը վերաբերող բողոքի հետաքննման կամ վճիռի ընդունման ձևի վրա:
 5. Հստակ հաղորդագրություն, անկախ այն հանգամանքից, որ բողոքողը չի համապատասխանել բողոք ներկայացնելու գրավոր, ժամանակի կամ այլ պաշտոնական պահանջներին, որը վերաբերում է աշակերտին առնչվող սեռական ունեցման մեղադրանքին, ով կարող է հանդիսանալ ունեցման բողոքողը, պատասխանողը կամ գոհը, պետք է հետաքննվի և անհապաղ գործողություն ձեռնարկվի, որը կդադարեցնի ցանկացած ունեցման, կկանխի դրա կրկնությունը և կքննարկի աշակերտների վրա ունեցած շարունակական ազդեցությունը:
 6. Տեղեկություններ կրթաշրջանի ընթացակարգերի մասին՝ բողոքի հետաքննման և սեռական ունեցման ենթարկված անձի(անձանց) մասին, ում պետք է գեկուցվի:
 7. Տեղեկություններ քաղաքացիական կամ քրեական բողոք ներկայացնելու աշակերտների և ծնողների/խնամակալների իրավունքների վերաբերյալ, ներառյալ քաղաքապալաքացիական կամ քրեական բողոք ներկայացնելու իրավունքը՝ քանի դեռ սեռական ունեցման բողոքի վերաբերյալ կրթաշրջանի հետաքննությունը շարունակվում է:
 8. Հստակ հաղորդագրություն այն մասին, որ անհրաժեշտության դեպքում կրթաշրջանը միջանկյալ միջոցառումներ կձեռնարկի, որպեսզի անվանգ դպրոցական միջավայր երաշխավորի այն աշակերտի համար, ով սեռական ունեցման բողոքող է կամ գոհը, ինչպես նաև հետաքննության ընթացքում այլ աշակերտների համար: Հնարավորության դեպքում, երբ նման միջանկյալ միջոցներ են կիրառվում, դրանք չպետք է բացասաբար ազդեն ենթադրյալ ունեցման բողոքողի կամ գոհի վրա:

B. Բողոքի ընթացքը և կարգապահական պատժամիջոցներ

1. Աշակերտների կողմից կամ նրանց դեմ ներկայացված սեռական ունեցման բողոքները պետք է հետաքննվեն և կարգավորվեն թիվ AR 1312.3 Բողոքի համընդհանուր ընթացակարգերի օրենքի և կրթաշրջանի ընթացակարգերի համապատասխան: Տնօրենների պատասխանատվությունն է տեղեկացնել աշակերտներին և ծնողներին/խնամակալներին, որ սեռական ունեցման բողոքները պետք է ներկայցվեն AR 1312.3 պահանջների ներքո և թե որտեղից կարող են ձեռք բերել ընթացակարգերի պատճենները:
2. Սեռական ունեցման վերաբերյալ բողոքը հետաքննելուց հետո, ցանկացած աշակերտ, ով խախտելով այս կանոնադրությունը կներգրավվի սեռական ունեցման կամ սեռական բռնության մեջ, կենթարկվի կարգապահական միջոցների: 4-12-րդ դասարանի աշակերտների համար կարգապահական պատժամիջոցներից կարող են լինել ժամանակավորապես դպրոցից կասեցումը և/կամ հեռացումը, պայմանով, որ նման պատժի որոշման դեպքում հաշվի առնվեն միջադեպի բոլոր հանգամանքները:
3. Սեռական ունեցման վերաբերյալ բողոքը հետաքննելուց հետո, անձնակազմի որևէ անդամ, ով որևէ աշակերտի նկատմամբ կիրառած լինի սեռական ունեցման կամ սեռական բռնություն, աշխատանքային պայմանագրի օրենքի ու կանոնակարգերի համաձայն պետք է ենթարկվի պատժամիջոցների, ընդհուպ մինչև աշխատանքից հեռացում:

C. Արձանագրում

Գերատեսուչը կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչը պետք է գրանցեն սեռական ունեցման

վերաբերյալ զեկուցված բոլոր դեպքերը, որպեսզի կրթաշրջանը կարողանա հսկել, անդրադառնալ և կանխել ոստիկանության կրկնվող վարքագիծը դպրոցում:

Սեռական ոստիկանություն (Գլենդեյլի կրթաշրջանի վարչական կանոն 5145.7) – Կրթաշրջանը նշանակում է հետևյալ պատասխանատու անձ(անց), որպեսզի համակարգեն ջանքերը 1972թ. Կրթության վերաբերյալ բարեփոխումների Title IX և Կալիֆոռնիայի կրթության օրենսգրքի Մաս 234.1-ին համապատասխանելու համար, ինչպես նաև հետաքննելու և կարգավորելու սեռական ոստիկանության բողոքները՝ Բողոքի համընդհանուր ընթացակարգերի AR 1312.3-ի համաձայն: Համակարգողի/հետաքննությունն անցկացնող անձ(անց) հետ կարող էք կապվել՝

Գերտեսուչի Ուսումնական ծառայությունների գծով օգնական
223 North Jackson Street
Glendale, CA 91206
(818) 241-3111, ներքին՝ 1208 հեռախոսահամարով
publicinfo@gusd.net

- A. Արգելված սեռական ոստիկանությունը ներառում, սակայն չի սահմանափակվում անցանկալի սեռական մոտեցումներով, սեռական բարեհաճության անցանկալի պահանջով կամ սեռական բնույթի բանավոր, տեսողական կամ ֆիզիկական անցանկալի շփումով՝ նույն սեռի կամ հակառակ սեռի պատկանող մեկ այլ անձի հանդեպ, ուսումնական միջավայրում, հետևյալ պարագաներից որևէ մեկի ներքո (Կրթության օրենսգրք, Մաս 212.4; 5 CCR 4916).
1. Այսպիսի շփումը բացահայտորեն կամ ոչ բացահայտորեն ազդեցություն է ունենում աշակերտի ուսումնական կարգավիճակի կամ առաջադիմության վրա:
 2. Անհատի այդպիսի շփումը կամ շփման մերժումը օգտագործվում է որպես աշակերտի վրա ազդող ուսումնական որոշումների հիմք:
 3. Այդպիսի շփումը նպատակաուղղված է բացասական ազդեցություն ունենալ աշակերտի ուսումնական վրա կամ ստեղծել ահաբեկող, թշնամական կամ վիրավորական ուսումնական միջավայր:
 4. Աշակերտի կողմից այդպիսի շփման ընդունումը կամ մերժումը օգտագործվում է որպես հիմք, նպաստների, ծառայությունների ու պարգևների ստացման կամ կրթաշրջանի որոշակի ծրագրերի կամ միջոցառումների մեջ ներառվելու որոշում կայացնելու համար:
- B. Կրթաշրջանում արգելված վարքի օրինակներ են հետևյալները, որոնք կարող են սեռական ոստիկանության հիմք ծառայել.
1. Անցանկալի կամ վավաշտ հայացքները, սեռական սիրախաղերը կամ առաջարկները:
 2. Սեռական բնույթի անցանկալի արտահայտությունները, ածականները, ահաբեկումները, բանավոր ոստիկանությունը, նվաստացուցիչ արտահայտությունները կամ սեռական նսեմացուցիչ նկարագրությունները:
 3. Անհատի մարմնի մասին պատկերավոր խոսքերը կամ չափազանց անձնական բնույթի խոսակցությունները:
 4. Սեռական բնույթի կատակները, նսեմացուցիչ պատառները, գրությունները, պատմությունները, մուլտֆիլմերը, նկարները, անպարկեշտ ժեստերը կամ համակարգչի միջոցով պատրաստված սեռական բնույթի պատկերները:
 5. Սեռական բնույթի ասեկոսների տարածումը:
 6. Ծաղրելը կամ սեռական բնույթի արտահայտություններ անելը թվով գերակշռող միասեռ դասարանում արձանագրված աշակերտի մասին:
 7. Մերսումը, ճանկելը, շոյելը, փաղաքշելը, մարմնին թեթևակի դիպչելը:
 8. Անհատի մարմնին կամ հագուստին սեռական ցանկությամբ դիպչելը:
 9. Անհատի շարժումների խոչընդոտումը, արգելափակումը կամ որևէ ֆիզիկական միջամտություն դպրոցական աշխատանքների ժամանակ սեռական հիմունքներից ելնելով:
 10. Սեռական մտքերով անպարկեշտ իրերի ցուցադրումը:
 11. Սեռական բռնությունը, սեռական վիրավորանքը կամ սեռական հարկադրումը:
 12. Վերը նկարագրված մեկնաբանությունները, բառեր կամ պատկերներ պարունակող էլեկտրոնային հաղորդագրությունները:

Ցանկացած արգելված վարք, որը տեղի է ունենում դպրոցի տարածքից դուրս կամ դպրոցին առնչվող կամ դպրոցի կողմից հովանավորվող ծրագրերում կամ միջոցառումներում, կդիտարկվի որպես կրթաշրջանի

կանոնադրությունը խախտող սեռական ոտնձգություն, եթե այն շարունակական ազդեցություն ունենա կամ ստեղծի վտանգավոր դպրոցական միջավայր բողոքողի կամ այդ վարքից տուժողի համար:

C. Չեկուցման գործընթացը և բողոքի հետաքննումն ու կարգավորումը.

1. Ցանկացած աշակերտ, ով համոզված է, որ ենթարկվել է սեռական ոտնձգության կամ ականատես է եղել սեռական ոտնձգության, մեծապես խրախուսվում է այդ մասին տեղեկացնել իր ուսուցչին, տնօրենին կամ դպրոցի որևէ պաշտոնյայի: Դպրոցի պաշտոնյան պետք է միջադեպի մասին տեղեկանալուց մեկ օրվա ընթացքում տեղեկացնի տնօրենին կամ կրթաշրջանի պատասխանատուին՝ կրթաշրջանի ուսումնական օրենսգրքի AR 1312.3 Մասի համաձայն: Ի հավելումն, դպրոցի որևէ պաշտոնյա, ով ականատես է լինում աշակերտի նկատմամբ սեռական ոտնձգության միջադեպի, մեկ օրվա ընթացքում պետք է իր տեսածի մասին հայտնի տնօրենին կամ կրթաշրջանի պատասխանատուին: Աշխատակիցը պետք է ձեռնարկի այս քայլերն անկախ նրանից, ենթադրյալ գոհր բողոք ներկայացրել է թե ոչ:
2. Եթե սեռական ոտնձգության բողոքը վերաբերում է դպրոցի տարածքից դուրս կատարվածին, տնօրենը պետք է գնահատի, թե արդյոք այդ վարքը կարող է ստեղծել կամ նպաստել դպրոցական թշնամական միջավայրի ստեղծմանը: Եթե նա որոշի, որ հնարավոր է ստեղծվի դպրոցական թշնամական միջավայր, բողոքը կհետաքննվի և կկարգավորվի այնպես, եթե դա տեղի ունեցած լիներ դպրոցում:
3. Եթե սեռական ոտնձգության բանավոր կամ ոչ պաշտոնական զեկուցում է եղել, տնօրենը կամ պատասխանատու պաշտոնյան պետք է աշակերտին կամ ծնողին/խնամակալին տեղեկացնի, որ վերջիններս իրավունք ունեն պաշտոնական գրավոր բողոք ներկայացնել՝ կրթաշրջանի Բողոքի համընդհանուր ընթացակարգի համաձայն: Անկախ պաշտոնական բողոք ներկայացնելու հանգամանքից, տնօրենը կամ պատասխանատու պաշտոնյան պետք է քայլեր ձեռնարկեն, որպեսզի հետաքննվի մեղադրանքը, իսկ սեռական ոտնձգության դեպքը հայտնաբերելու դեպքում անհապաղ գործողությունների արդյունքում դադարեցվի և կանխվեն հետագա հնարավոր դեպքերը և անդրադառնան դրա շարունակական ազդեցությանը:
4. Եթե սեռական ոտնձգության բողոքը նախապես ներկայացվել է տնօրենին, ապա նա 2 աշխատանքային օրվա ընթացքում պետք է զեկուցի պատասխանատու պաշտոնյային՝ բողոքի վերաբերյալ հետաքննություն սկսելու համար: Պատասխանատու պաշտոնյան կարող է կապվել դիմողի հետ և հետաքննել ու լուծել բողոքը՝ համաձայն օրենքի և կրթաշրջանի AR 1312.3 ընթացակարգերի:
5. Սեռական ոտնձգության բողոքը հետաքննելիս, գոհի նախկին սեռական կապերը չպետք է դիտարկվեն, բացառությամբ այն դեպքի, երբ նման փաստարկները վերաբերում են գոհի և պատասխանողի նախկին հարաբերություններին:
6. Այն դեպքում, երբ սեռական ոտնձգությունը վերաբերում է տնօրենին, պատասխանատու պաշտոնյային կամ այլ անձի, ում սովորաբար ուղղվում է բողոքը, ապա այն պետք է ներկայացվի գերտեսուչին կամ այն անձին, ով պետք է հետաքննի բողոքը:

D. Գաղտնիությունը՝

1. Սեռական ոտնձգության բոլոր բողոքներն ու հայտարարությունները պետք է գաղտնի պահվեն, բացառությամբ, երբ դա ելնում է հետաքննության կարիքներից կամ ձեռնարկել այլ անհրաժեշտ (5 CCR 4964) միջոցներ:
2. Այնուամենայնիվ, երբ դիմողը կամ սեռական ոտնձգության գոհ դարձած անձը տեղեկացնում է կրթաշրջանին այդ մասին, սակայն խնդրում է ապահովել իր գաղտնիությունը, պատասխանատու անձը պետք է տեղեկացնի վերջինիս, որ դա կարող է սահմանափակել կրթաշրջանի ոտնձգությունը հետաքննելու և անհրաժեշտ գործողություններ կիրառելու կարողությունը: Գաղտնիության խնդրանքը բավարարելու դեպքում, կրթաշրջանն, այնուամենայնիվ, պատշաճ քայլեր կձեռնարկի բողոքը հետաքննելու և պատասխան տալու համար:
3. Երբ դիմողը կամ սեռական ոտնձգության գոհը տեղեկացնում են կրթաշրջանին սեռական ոտնձգության մասին, սակայն խնդրում են կրթաշրջանին որևէ հետաքննություն չիրականացնել, վերջինս կարող է որոշել՝ բավարարել այդ խնդրանքը, թե ոչ, մինչ ապահովվելով անվտանգ և խտրականությունից զերծ միջավայր բոլոր աշակերտների համար:

E. Հետաքննության արդյունքից կախված պատասխան

Երբ զեկուցվում է սեռական ոտնձգության որևէ միջադեպ, տնօրենը կամ նրա հանձնակատարը, հետաքննիչի հետ խորհրդակցելով, պետք է որոշեն հետաքննության արդյունքից կախված հրատապ միջոցների դիմելու անհրաժեշտությունը: Տնօրենը/հանձնակատարը կամ հետաքննիչը պետք է

անմիջապես անհրաժեշտ միջոցների դիմեն արգելք հանդիսանալու ոտնձգության, աշակերտներին պաշտպանելու և/կամ երաշխավորելու ուսումնական ծրագրերին աշակերտի հասանելիությունը: Հնարավորության դեպքում, միջանկյալ միջոցառումները չպետք է սահմանափակեն դիմողին կամ ենթադրյալ ոտնձգության գոհին: Նման միջոցներից կարող են լինել միջադեպի մասնակիցներին առանձին դասարաններում տեղավորելը կամ աշակերտին ուրիշ ուսուցչի դասարան տեղավորելը՝ օրենքի և Խորհրդի կանոնակարգերի համաձայն: Դպրոցը պետք է ոտնձգության գոհ դարձած անհատին տեղեկացնի իր իրավունքների տարբերկաները, այն է՝ մերժել ենթադրյալ ոտնձգողի հետ հանդիպումը և նրան թույլ տա եթե հարկն է փոխել ուսումնական և արտադասարանային ծրագրերը: Դպրոցը պետք է վստահ լինի, որ բողոքարկուն տեղյակ է առկա աղբյուրների մասին, այդ թվում՝ խորհրդատվական օգնության մասին: Անհրաժեշտության դեպքում նման գործողությունները պետք է հնարավոր համարվեն նույնիսկ այն դեպքում, երբ աշակերտը նախընտրում է պաշտոնական բողոք չներկայացնել կամ սեռական ոտնձգությունը կատարվում է դպրոցի տարածքից դուրս կամ դպրոցի կողմից հովանավորված միջոցառման կամ դպրոցին առնչվող ծրագրերի ու գործունեության շրջանակներից դուրս:

F. Ծանուցումներ

Սեռական ոտնձգությանն առնչվող կրթաշրջանի քաղաքականության ու կանոնակարգերի ծանուցման պատճենը պետք է.

1. Մյուս ծանուցումների հետ մեկտեղ ուղարկվի ծնողներին/խնամակալներին ուսումնական տարվա սկզբին (Կրթության օրենսգիրք, Մաս՝ 48980; 5 CCR 4917):
2. Ցուցադրվի աչքի ընկնող մի վայրում՝ դպրոցի վարչական կենտրոնում կամ այլուր, որտեղ փակցված են կրթաշրջանի կանոններն ու կանոնակարգերը, ընթացակարգերը և վարքագծային չափանիշերը: (Կրթության օրենսգիրք 231.5) Սեռական ոտնձգությանն առնչվող կրթաշրջանի քաղաքականությունը և կանոնակարգերը պետք է փակցվեն նաև կրթաշրջանի ու դպրոցի կայքերում, հնարավորության դեպքում, կրթաշրջանի կողմից հովանավորված սոցիալական լրատվամիջոցներում:
3. Որպես ծանուցում տրամադրվի նորեկ աշակերտներին՝ յուրաքանչյուր քառորդի, կիսամյակի կամ ամռան դասընթացների սկզբում (Կրթության օրենսգիրք 231.5):
4. Տպագրվի որևէ դպրոցի կամ կրթաշրջանի հրատարակություններում, որոնք բացատրում են կրթաշրջանի համապարփակ կանոնները, կանոնակարգերը, ընթացակարգերը և վարքագծային չափանիշերը (Կրթության օրենսգիրք 231.5):
5. Ներառնվի աշակերտների ձեռնարկի մեջ:
6. Տրամադրվի աշխատակիցներին և կազմակերպություններին:

ԱՆՕԹԵՎԱՆ ԱՃԱԿԵՐՏՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Անօթևան են այն աշակերտները, ովքեր չունեն սովորական, կայուն և մշտական գիշերելու բնակատեղի, այդ թվում՝ (Կրթության օրենսգիրք 48852.7; 42 USC 11434a)

1. Այն աշակերտները, ովքեր տուն չունենալու և տնտեսական անբարենպաստ պայմանների պատճառով ապրում են ուրիշ մարդկանց հետ կամ նույն պատճառով ապրում են մոթելում, հյուրանոցում, կցված վագոնում կամ ճամբարային վայրերում և այլընտրանքային հարմարությունների բացակայության պատճառով ապրում են ժամանակավոր ապաստարաններում, լքվել են հիվանդանոցներում կամ սպասում են խնամակալության տանը տեղավորվելուն;
2. Այն աշակերտները, ովքեր ունեն գիշերելու հիմնական բնակատեղի՝ հանրային կամ մասնավոր տեղում, որը նախատեսված չէ կամ սովորաբար չի օգտագործվում որպես մարդու քնելու վայր;
3. Այն աշակերտները, ովքեր ապրում են ավտոմեքենայի մեջ, զբոսայգիներում, հանրային վայրերում, ամայի շենքերում, ավտոկայանում, երկաթուղային կայարաններում կամ նմանատիպ վայրերում;
4. Գաղթական երեխաները, ովքեր որակավորվում են որպես անօթևան, քանի որ ապրում են այնպիսի պայմաններում, ինչպիսիք նկարագրված են վերոնշյալ 1-3-րդ կետերում:
5. Անօթևան պատանիներ, ովքեր ֆիզիկապես ծնողի կամ խնամակալի խնամատարության տակ չեն գտնվում:

Սկզբնական դպրոցը այն դպրոցն է, ուր անօթևան աշակերտը հաճախել է, երբ մշտական բնակատեղի է ունեցել կամ այն վերջին դպրոցը, որտեղ նա գրանցված է եղել: Եթե դպրոցը, որտեղ մշտապես տեղավորվելուց հետո հաճախել է անօթևան աշակերտը տարբեր լինի այն դպրոցից, որտեղ վերջին անգամ գրանցված է եղել կամ, եթե կա մի ուրիշ դպրոց, որ նա հաճախել է նախորդ 15 ամիսների ընթացքում, որի հետ կապված է եղել, կրթաշրջանի կապերի ներկայացուցիչը, խորհրդակցելով և ստանալով անօթևան աշակերտի և նրա ուսումնական որոշումների կապակցությամբ որոշում կայացնող անձի համաձայնությունը, ինչպես նաև

եղևելով անօթևան աշակերտի լավագույն շահերից, պետք է որոշում կայացնի, թե որ դպրոցը պետք է սկզբնական դպրոց համարվի (Կրթության օրենսգիրք 48852.7):

Կրթաշրջանի կապերի ներկայացուցիչ – Անօթևան աշակերտների ու խնամակալության տակ գտնվող կարգավիճակով պատանիների հարցերով որպես կրթաշրջանի կապերի ներկայացուցիչ, գերատեսուչը նշանակում է հետևյալ անձին՝ (42 USC 11432)

Դոկտոր Այլին Մագրան, Երեխաների բարեկեցության և հաճախումների գրասենյակի փոխտնօրեն
223 N. Jackson St. Glendale, CA 91206
818-241-3111 x1500
IMagran@gusd.net

Անօթևան աշակերտների ու խնամակալության կարգավիճակով պատանիների հարցերով կրթաշրջանի կապերի ներկայացուցիչը պետք է՝ (Կրթության օրենսգիրք 48852.5; 42 USC 11432)

1. Վստահանա, որ անօթևան աշակերտները կհայտնաբերվեն դպրոցի անձնակազմի և այլ անձանց ու մարմինների համակարգված գործունեության շնորհիվ:
2. Վստահանա, որ անօթևան աշակերտները գրանցված են և ունեն կրթաշրջանի դպրոցներում հաջողության հասնելու լիարժեք ու հավասար հնարավորություն:
3. Վստահ լինի, որ անօթևան ընտանիքներն ու աշակերտները կստանան իրենց հաստանելիք ուսումնական ծառայությունները:
4. Տեղեկացնի ծնողներին/խնամակալներին նրանց երեխաներին հասանելիք ուսումնական և հարակից հնարավորությունների մասին և վստահ լինի, որ նրանց կտրամադրվեն հնարավորություններ՝ իրենց երեխաների կրթությանը մասնակցելու համար:
5. Ծանուցի կրթաշրջանի դպրոցներում անօթևան աշակերտների կրթության իրավունքների մասին, այն տեղերի մասին, ուր ծառայություններ են մատուցվում անօթևան երեխաներին, ինչպիսիք են դպրոցները, ընտանեկան կացարանները և քաղցածությունից ձերբազատման գործակալությունները (ճաշարանները):
6. Միջամտի գրանցման հարցերով վեճերին՝ օրենքին համապատասխան և համաձայն Ուսումնական խորհրդի քաղաքականության և վարչական կանոնակարգերի:
7. Ամբողջովին տեղեկացնի ծնողներին/խնամակալներին տրանսպորտային ծառայությունների մասին:
8. Երբ Կրթության օրենսգրքի համաձայն ծանուցվի՝ աշակցի, հեշտացնի կամ ներկայացնի անտուն աշակերտին, ով ենթարկվել է կարգապահական պատժամիջոցների, որը կարող է հանգեցնել նրա դպրոցից հեռացմանը:
9. Կրթության օրենսգրքի 48915.5 Մասի համաձայն ծանուցվելու դեպքում մասնակցի աշակերտի անհատականացված ուսումնական ծրագրի հանձնախմբի ժողովին՝ հաշմանդամության հիմունքով անտուն աշակերտի վարքագծի վերաբերյալ որոշում կայացնելու համար:
10. Աջակցի անտուն աշակերտին ձեռք բերել անրաժեշտ փաստաթղթեր, այդ թվում՝ պատվաստումների, բժշկական ու ուսումնական առաջադիմության փաստաթղթեր, կրթաշրջանից դուրս մեկ այլ դպրոցում գրանցվելու կամ տեղափոխվելու համար:

Դասընթացների և հավաքած միավորների փոխանցում – Երբ անօթևան աշակերտը փոխադրվում է կրթաշրջանի դպրոցներից մեկը, կրթաշրջանը պետք է նրան ընդունի և լրիվ միավորներ տա այն դասերի համար, որոնք աշակերտը հաջողությամբ հանձնել է հանրային մի այլ դպրոցում, անչափահասների գործերով դատարանային դպրոցում կամ ոչ հանրային, որևէ աղանդի չպատկանող դպրոցում կամ գործակալությունում և չպետք է աշակերտից պահանջվի նորից անցնել նույն դասընթացները (Կրթության օրենսգիրք 51225.2):

Եթե անօթևան աշակերտը չի ավարտել ամբողջ դասընթացը, ապա պետք է տրվի թերի միավոր անցած դասընթացի համար և պահանջվի վերցնել դասընթացի այն մասը, որը նրանք չեն ավարտել նախորդ դպրոցում: Այնուամենայնիվ, կրթաշրջանը կարող է աշակերտից պահանջել կրկնել դասընթացի այդ հատվածը, եթե կրթական իրավունքի շահագրգիռ կողմի հետ խորհրդակցելով կրթաշրջանը գտնում է, որ աշակերտը ժամանակի առումով ի վիճակի է կատարել ավագ դպրոցն ավարտելու պահանջները: Երբ որևէ մասնակի դասընթացի համար թերի միավորներ են տրվել անօթևան աշակերտին, ապա նա, եթե հնարավոր է, պետք է նորից անցնի նույն կամ համարժեք դասընթացը, որպեսզի շարունակի և ավարտի ամբողջ դասընթացը: (Կրթության օրենսգիրք 51225.2)

ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԳԱՏԱՆԻՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանն ընդունում է, որ խնամատարության կարգավիճակով պատանին կարող է բավականաչափ շատ խոչընդոտների առջև կանգնել՝ հասնելու ուսումնական հաջողության, իր ընտանեկան հանգամանքների, ուսումնական ծրագրի խանգարման, հոգեվիճակի, սոցիալական կամ առողջական այլ պատճառներով: Սույն աշակերտներին նահանգային ու կրթաշրջանային ուսումնական չափանիշներով հաջողության հասնելու հնարավորություն տալու նպատակով, գերատեսուչը կամ նրա հանձնակատարը պետք է տրամադրեն կրթաշրջանի ուսումնական ծրագրերից օգտվելու լիարժեք հնարավորություն և իրագործեն այնպիսի ռազմավարություններ, որոնք անհրաժեշտ են այս ֆոսթեր կարգավիճակով պատանիներին՝ ուսումնական հաջողությունների հասնելու համար:

Գերտեսուչը կամ նրա հանձնակատարը պետք է վստահանան, որ ֆոսթեր կարգավիճակով աշակերտի տեղավորումը բիսի նրա շահերից, ինչպես սահմանված է օրենքով և վարչական կանոնակարգով: Այդ նպատակով գերատեսուչը դոկտոր Այլին Մագրանին՝ Աշակերտների բարեկեցության պահպանման ծառայության բաժնի տնօրենին նշանակել է որպես կրթաշրջանի կապերի ներկայացուցիչ ֆոսթեր կարգավիճակով աշակերտների գրանցումը, տեղավորումը և տեղափոխումը կազմակերպելու համար:

Գերտեսուչը կամ նրա հանձնակատարը և կրթաշրջանի կապերի ներկայացուցիչը պետք է վստահ լինեն, որ բոլոր համապատասխան աշխատակիցները, ներառյալ, սակայն չսահմանափակվելով, դպրոցի տնօրենը, դպրոցի մատենավարը և գրասենյակի գործավարը վերապատրաստվեն ֆոսթեր կարգավիճակով աշակերտի գրանցման, տեղավորման, տեղափոխման և հարակից իրավունքների վերաբերյալ (Կրթության օրենսգիրք 48850-48859, AB 490, 2003թ. կրթական իրավունքների և կայունության օրինագիծ 2003):

Ծանուցում և բողոքներ – Խնամատարության կարգավիճակով աշակերտների ուսումնական իրավունքների մասին տեղեկությունները, ինչպես նշված է Կրթության օրենսգրքի 51225.1 և 51225.2 Մասերում, պետք է ներառվեն Բողոքի համընդհանուր ընթացակարգերում, որոնք բաժանվում են աշակերտներին, ծնողներին/խնամակալներին, աշխատակիցներին և այլ շահագրգիռ կողմերին՝ ելնելով 5 CCR 4622-ից (Կրթության օրենսգիրք 51225.1, 51225.2):

ԱՎԱԳ ԳԳՐՈՑԻ ԱՏԵՍԱՏՆԵՐԻ ՀՆՏԱԳՐԱԶ ՈՒԺ ՈՒՆԵՑՈՂ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ. ՀԵՌԱՑՎԱԾ և ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՇԿԵՐՏՆԵՐ, ԿՕ 51430

Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի կառավարման խորհուրդը կարող է ատեստատ շնորհել ցանկացած աշակերտի, որն արտաքսվել է ԱՄՆ-ի սահմաններից դուրս, բայց ավագ դպրոցի երկրորդ տարվա դասընթացը բարեհաջող ավարտել է: ԱՄՆ-ի սահմաններից դուրս ցանկացած առցանց կամ արտասահմանյան դասընթացների միջոցով լրացված փոխանցված միավորներով դասընթացը կհամարվի ավարտած:

ԳԱՇՆԱՅԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԱՇԿԵՐՏՆԵՐԻՆ – Կրթության օրենսգիրք, Մաս 51225.8

Պետական օրենսդրության համաձայն, դպրոցական կրթաշրջանները պետք է նախքան 12-րդ դասարան մուտք գործելը աշակերտներին տեղեկացնեն, որ իրավունք ունեն իմանալ ինչպես պատշաճ կերպով լրացնել և ներկայացնել Ուսանողական Դաշնային օգնության անվճար դիմումը (FAFSA) կամ Կալիֆոռնիայի երագանք որոշման դիմումը, առնվազն մեկ անգամ: Այս տեղեկատվությունը պետք է մատչելի լինի ժամանակին, քանի որ ֆինանսական օգնությունը ժամկետներ ունի և տրամադրվում է ըստ դիմումների ժամանակային հերթականության: Ընտանիքի և ուսանողների ողջ անձնական տեղեկությունները պաշտպանված կլինեն գաղտնիության պետական և դաշնային օրենքների և կանոնակարգերի համաձայն:

Ծանուցում և բողոքարկում՝ Կրթության օրենսգրքի 48853, 48853,5, 49069,5, 51225.1 և 51225.2 Մասերի համաձայն, կրթաշրջանը պետք է ստանդարտացված հայտարարություն փակցնի խնամատարության հանձնված, անապաստան և անչափահասների դատարանի նախկին աշակերտների կրթական իրավունքների մասին: Ծանուցման մեջ պետք է ներառվեն բողոքի գործընթացի մասին տեղեկությունները:

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - Կրթության օրենսգիրք, Մաս 69432.9

Կալիֆոռնիայի Դրամաշնորհը (Cal Grant) քոլեջի համար տրամադրվող դրամաշնորհ է, որը պետք չէ հետ մարել: Իրավասու լինելու համար ուսանողը պետք է համապատասխանի Իրավունակության և ֆինանսական պահանջներին, ինչպես նաև միջին գնահատականի նվազագույնի (GPA) պահանջներին: Cal Grant-ը կարող է օգտագործվել հետևյալ ցանկացած ուսումնական հաստատություններում. Կալիֆոռնիայի համալսարան (University of California), Կալիֆոռնիայի նահանգային համալսարան (California State

University) կամ Կալիֆոռնիայի համայնքային Քոլեջ (California Community College). Կալիֆոռնիայի անկախ և կարիերայի որոշ քոլեջներ կամ տեխնիկական դպրոցներ ևս ընդունում են Cal Grant-եր:

Ուսանողներին ֆինանսական օգնություն ստանալու հարցում օգնելու համար 12-րդ դասարանի բոլոր աշակերտներն ավտոմատ կերպով համարվում են Cal Grant- ի դիմորդ, և յուրաքանչյուր 12-րդ դասարանի աշակերտի միջին գնահատականը (GPA-ը) մինչև հոկտեմբերի 1-ը պետք է ներկայացվի Կալիֆոռնիայի ուսանողական օգնության հանձնաժողովին (CASC) էլեկտրոնային եղանակով, դպրոցի կամ կրթաշրջանի պատասխանատուի կողմից: Ուսանողը կամ մինչև 18 տարեկան աշակերտի ծնողը կամ խնամակալը կարող են լրացնել ձև, ուր նշեն, որ իրենք չեն ցանկանում, որ դպրոցն էլեկտրոնային եղանակով ուղարկի աշակերտի GPA-ը CASC: Մինչև 18 տարեկան ուսանողի համար միայն ծնողը կամ խնամակալը կարող են դիմել այդ հարցով: Երբ ուսանողը 18 տարեկան է դառնում, միայն ինքը կարող է որոշումն ընդունել կամ փոխել ծնողի նախկինում ընդունած որոշումը: Ծանուցումը CASC-ի և ինքնաբերաբար Cal Grant-ի դիմորդ համարվելուց հրաժարվելու մասին բոլոր աշակերտներին և նրանց ծնողներին/խնամակալներին կտրվի աշակերտի 11-րդ դասարանում սովորելու տարում, հունվարի 1-ին:

ԾՆՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԳՂՐՈՑԻ ԺՈՂՈՎՆԵՐԻՆ ԵՎ ԿՈՆՖԵՐԱՆՍՆԵՐԻՆ - ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՆՈՒՄԻ ՕՐԵՆՍՊԻՐՔ, Մաս 230.8

Ծնողները չեն կարող խտրականության ենթարկվել և մերժվել աշխատանքի օրերին ազատ ժամեր վերցնելու խնդրանքում և մասնակցելու երեխաների միջոցառումներին, օրինակ՝ դպրոցական ժողովներին կամ այլ իրադարձություններին, եթե գործատուն ունի 25 և ավելի աշխատող: Ծնողները կարող են յուրաքանչյուր տարի վերցնել մինչև 40 ժամ, 8 ժամից ոչ ավելի մեկ օրացուցային ամսում՝ դպրոցի կամ արտակարգ իրավիճակների հետ կապված կարիքները հոգալու համար: Ծնողները կարող են թույլատրվել մասնակցելու IEP ժողովներին, դպրոցից երեխայի կասեցման կամ հեռացման ժողովներին, SART կամ SARB ժողովներին, Աշակերտի հետազոտության թիմի (SST) ժողովներին, արտակարգ իրավիճակներ կարգավորելու, ինչպիսիք են՝ վարքագծի/կարգապահության պատճառով արգելված հաճախումը, երեխաների խնամքի մատակարարի անսպասելի փակման կամ անհասանելիության, բնական աղետների կամ այլ իրավիճակների դեպքում, երբ վերահսկողության բացակայության պատճառով աշակերտը կարող է վտանգի ենթարկվել: «Ծնող» կարող է նշանակել ծնող, խնամակալ, խորթ մայր, խնամատար ծնող, պապիկ կամ անձ, որը լոկալ ծնող է երեխայի համար: Եթե գործատուն աշխատանքից ազատում է, սպառնում է ազատել, պաշտոնն իջեցնում է, ժամանակավորապես կասեցնում է, կամ ծնողի նկատմամբ այլ խտրականություն է ցուցաբերում, ապա աշխատողը կարող է իրավունք ունենալ վերականգնվելու և հատուցվելու կորցրած եկամտի կամ նպաստի դիմաց:

ԲՈՂՈՔԻ ՀԱՄԸՆՂԻԱՆՈՒՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ (UCP) ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական խորհուրդը հաստատում է, որ ուսումնական ծրագրերը դեկավարելիս կրթաշրջանի գլխավոր պատասխանատվությունն է ենթարկվել նահանգային ու դաշնային օրենքներին ու կանոններին: Ուսումնական խորհուրդը խրախուսում է բողոքների վաղաժամկետ լուծումը հնարավորության դեպքում: Ավելի պաշտոնական գործընթաց պահանջող բողոքների լուծման համար, ուսումնական խորհուրդը պետք է բողոքի համընդհանուր ընթացակարգ որդեգրի, որը նշված է 5 CCR 4600-4670-ում և առկա վարչական կանոնադրության մեջ:

UCP-ին ենթակա բողոքներ

Բողոքի համընդհանուր ընթացակարգը (UCP) պետք է օգտագործվի հետևյալ բողոքները քննելու և լուծելու համար.

1. Ցանկացած բողոք, որը վերաբերում է նահանգային կամ դաշնային օրենքների խախտումներին կրթաշրջանի կողմից և վերաբերում է չափահասների կրթությանը; Արտադասարանական կրթությանը և անվտանգության ծրագրերին; Գյուղատնտեսական կարիերայի տեխնիկական կրթությանը; Ըստ կատեգորիաների օգնության համախմբված ծրագրերին, դաշնային կարիերայի տեխնիկական կրթությանը; Երեխաների խնամատարության և զարգացման ծրագրերին; Փոխհատուցվող կրթությանը, դաշնային Յուրաքանչյուր աշակերտի հաջողության հասնելու օրենքին; Գաղթականների կրթությանը; Տարածաշրջանային մասնագիտական կենտրոններին և ծրագրերին; Աշակերտի հաջողության դպրոցական ծրագրերին; Դպրոցական անվտանգության ծրագրերին; Կալիֆոռնիայի նահանգային նախադպրոցական ծրագրերին; Պետական

նախադպրոցական առողջության և անվտանգության հիմնահարցերին արտոնագրից ազատ LEA-ներում և ցանկացած այլ կրթաշրջանի կողմից իրականացվող պետական կատեգորիայի ծրագիր, որ չի ֆինանսավորվում տեղական վերահսկողության ֆինանսավորման բանաձևով, համաձայն կրթության օրենսգրքի 64000(ա):

2. Անօրինական խտրականության բողոքները (ինչպես օրինակ խտրական ուղեգրություն, ահաբեկում կամ բռնարարք), որևէ աշակերտի, աշխատակցի կամ նահանգի կողմից ուղղակիորեն ֆինանսավորված կամ ֆինանսական օգնություն կամ նպաստ ստացող կրթաշրջանի ծրագրերին կամ աշխատանքներին մասնակցող անհատի նկատմամբ, անհատի իրական կամ ենթադրյալ ազգի կամ ցեղի, մաշկի գույնի, նախնիների, ազգության պատկանելության, ազգային ծագումի, գաղթական կարգավիճակի, ցեղային ինքնության, տարիքի, կրոնի, ամուսնական կարգավիճակի, հղիության կամ ծնողական կարգավիճակի, ֆիզիկական կամ մտավոր հաշմանդամության, հիվանդությունների, սեռի, սեռային կողմնորոշման, սեռային ինքնության, սեռային արտահայտության կամ գենետիկ տեղեկությունների կամ որևէ այլ առանձնահատկության հիման վրա, որը նշված է Կրթության օրենսգրքի 200 կամ 220 Մասերում, Կառավարական օրենսգրքի 11135 կամ Քրեական օրենսգրքի 422,55 Մասում կամ նման իրական կամ ենթադրյալ առանձնահատկությամբ անհատի կամ խմբի հետ կապ ունենալու հիման վրա (5 CCR 4610):
3. Ցանկացած բողոք, կրթաշրջանի կողմից դպրոցում գտնվող կրճքով կերակրող աշակերտի համար ողջամիտ պայմաններ չսպահովելու կապակցությամբ՝ դպրոցում կաթը կթելու, կրճքով կերակրելու կամ կրճքով կերակրելու հետ կապված այլ կարիքների համար (Կրթության օրենսգրքի 222):
4. Ցանկացած բողոք, որը վերաբերում է կրթաշրջանի հղի կամ ծնող աշակերտին Կրթության օրենսգրքի 46015 Մասով սահմանված պայմանները չսպահովելուն, այդ թվում ծնողական արձակուրդի տրամադրման պահանջը, (Կրթության օրենսգրքի 46015) ցանկության դեպքում նախորդ գրանցման դպրոց կամ այլընտրանքային ուսումնական ծրագրի վերադառնալու իրավունքը, ցանկության և հնարավոր լինելու պարագայում ընդգրկվելը ուսումնական հինգերորդ տարվա դասընթացում՝ նահանգի և Խորհրդի կողմից պարտադրված ավարտական կրթության պահանջները լրացնելու հնարավորություն ստանալու համար: (Կրթության օրենսգրքի 46015)
5. Ցանկացած բողոք, որը վերաբերում է աշակերտներից ուսումնական գործունեության համար վճարներ, կանխավճարներ կամ այլ գանձումներ չկատարելու մասին պահանջը կրթաշրջանի կողմից խախտելուն: (5 CCR 4610)
6. Ցանկացած բողոք կրթաշրջանի կողմից (Կրթության օրենսգրքի 52060-52077) Տեղական վերահսկման և հաշվետվության ծրագրի կիրառելի պահանջների խախտման վերաբերյալ, ներառյալ ծնողների/խնամակալների համար ֆինանսավորման տեղական վերահսկողության բանաձևի ակնարկի մշակումը: (Կրթության օրենսգրքի 52075)
7. Ցանկացած բողոք, աշակերտների նվաճումների դպրոցական ծրագրի մշակման կամ դպրոցական խորհրդի ստեղծման ենթադրյալ խախտումների վերաբերյալ, ըստ նշված Դաշնային և/կամ նահանգային կատեգորիային ֆինանսավորման համախմբված պահանջի: (Կրթության օրենսգրքի 64000-64001, 65000-65001)
8. Ցանկացած բողոք՝ խնամակալության հանձնված աշակերտի կողմից կամ աշակերտի անունից, ինչպես սահմանված է Կրթության օրենսգրքի 51225.2 Մասով, աշակերտի տեղավորման որոշմանը վերաբերող պահանջների, աշակերտի նկատմամբ կրթաշրջանի կապերի միջնորդների պարտականությունների, մի այլ դպրոցում, կրթաշրջանում կամ երկրում ավարտած բավարար աշխատանքի համար միավորներ տալու, դպրոցը փոխելու կամ գնահատականները փոխադրելու, ուսումնական խորհրդի կողմից պարտադիր ավարտական պահանջներից ազատելու օրենքը կրթաշրջանի կողմից խախտելու վերաբերյալ (Կրթության օրենսգրքի 48853, 48853.5, 49069.5, 51225.1, 51225.2):
9. Ցանկացած բողոք աշակերտի կողմից կամ անունից, ով կրթաշրջան է տեղափոխվել ավագ դպրոցի երկրորդ տարվանից հետո և անօթևան երեխա կամ պատանի է ըստ 42 USC 11434a-ի, ով անչափահասների դատարանի դպրոցի աշակերտ է՝ այժմ արձանագրված կրթաշրջանում, ով զինվորական ընտանիքի երեխան է ըստ կրթության օրենսգրքի 49701, գաղթական աշակերտ է ըստ կրթության օրենսգրքի 54441, կամ նոր ներգաղթած աշակերտի կամ նրա անունից մասնակցում է նորեկների ծրագրին ըստ կրթության օրենսգրքի 51225.2, ավագ դպրոցի երրորդ կամ չորրորդ տարին է սովորում՝ կրթաշրջանի կողմից ուսումնական խորհրդի ավարտական պահանջներից ազատելու օրենքը խախտելու վերաբերյալ: (Կրթության օրենսգրքի 51225.1)
10. Ցանկացած բողոք աշակերտի կողմից կամ անունից, ով անօթևան երեխա կամ պատանի է ըստ 42 USC 11434a-ի, ով անչափահասների դատարանի դպրոցի աշակերտ է, ով զինվորական ընտանիքի

երեխան է ըստ Կրթության օրենսգրքի 49701, գաղթական երեխա է ըստ Կրթության օրենսգրքի 54441, կամ նոր ներգաղթած աշակերտի կամ նրա անույնից մասնակցում է նորեկների ծրագրին ըստ Կրթության օրենսգրքի 51225.2, կրթաշրջանի կողմից այլ կրթաշրջանում կամ երկրում բավարար գնահատականներով ավարտած դասընթացների համար միավորներ տալու պահանջի օրենքը խախտելու դեմ: (Կրթության օրենսգրքի 51225.2)

11. Բողոք՝ Կրթության օրենսգրքի 51228.1 և 51228.2 Մասերը խախտելու համար, որն արգելում է 9-12-րդ դասառանի աշակերտին արձանագրել ուսումնական բովանդակություն չունեցող դասընթացում մեկ շաբաթից ավելի ժամկետով կիսամյակի ընթացքում կամ որևէ դասընթացում, որ աշակերտը նախկինում հաջողությամբ ավարտել է՝ առանց առանձնահատուկ պայմանների (Կրթության օրենսգրքի 51210, 51223):
12. Ցանկացած բողոք աշակերտների համար պահանջվող մարմնամարզության ուսուցման բույները կրթաշրջանի կողմից չպահպանելու վերաբերյալ (Կրթության օրենսգրքի 51210, 51223):
13. Բողոքներ արտոնագրից ազատ Կալիֆոռնիայի նահանգային նախադպրոցական ծրագրի՝ Առողջության և անվտանգության օրենսգրքի 1596.7925 Մասի և այլ կանոնակարգերի հետ անհամապատասխանության վերաբերյալ:
14. Ցանկացած բողոք բողոքողի կամ բողոքարկման գործընթացի մասնակցի հանդեպ վրեժխնդրության դեմ կամ որևէ մեկի հանդեպ, ով աշխատել է բացահայտել կամ գեկուցել խախտման մասին, ինչպես նշված է կանոնադրության մեջ:
15. Ցանկացած այլ բողոք ինչպես նշված է կրթաշրջանի կանոնադրության մեջ:

Ուսումնական խորհուրդը հասկանում է, որ կախված խնդրի բնույթից, կարելի է առաջարկել խնդրի լուծման այլընտրանք (ADR) այնպիսի ձևով, որն ընդունելի կլինի բոլոր կողմերի համար: Կարելի է ADR ընթացակարգ, ինչպես նաև է միջնորդությունը, առաջարկել այն բողոքների դեպքում, երբ մեկից ավելի աշակերտ է ներգրավված և ոչ մի չափահաս: Միջամտություն չպետք է առաջարկվի կամ օգտագործվի սեռական բռնության դեպքում կամ այն դեպքում, երբ կողմերը իրենց հարկադրված կզգան միջամտությանը մասնակցել: Գերատեսուչը կամ նրա հանձնակատարը պետք է վստահ լինի, որ արդյունքները համահունչ են նահանգային և դաշնային օրենքներին և կանոններին:

Կրթաշրջանը պետք է բողոքարկուին պաշտպանի վրեժխնդրությունից: Բողոքարկման հետաքննության ժամանակ, ըստ օրենքի, ներգրավված կողմերի գաղտնիությունը պետք է պաշտպանված լինի: Վրեժխնդրության կամ անօրինական խտրականության (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարար) դեմ ներկայացրած որևէ բողոքի դեպքում, ըստ պատշաճության, գերատեսուչը կամ նրա հանձնակատարը պետք է գաղտնի պահեն բողոքարկուի ինքնությունը և/կամ բողոքի առարկան, եթե նա բողոքարկու է չէ, քանի դեռ պահպանվում է բողոքի գործընթացի ամբողջությունը:

Երբ UCP-ին չվերաբերող բողոք է ներկայացվում UCP-ին, կրթաշրջանը պետք է UCP-ին չվերաբերող բողոքը հանձնի համապատասխան անձնակազմին կամ գործակալությանը, որը պետք է քննի ու հնարավորության դեպքում UCP-ի հետ կապված խնդիրը լուծի կրթաշրջանի UCP-ի միջոցով:

Գերատեսուչը կամ նրա հանձնակատարը, վերապատրաստման պարապմունքների միջոցով, անձնակազմի անդամներին պետք է զինի գիտելիքներով և իրագեկ դարձնի գործող օրենքին և UCP-ի համապատասխան պահանջներին, այդ թվում քայլերի և ժամկետների մասին, որ նշված են այս կանոնադրության և վարչական կանոնակարգերում:

Գերատեսուչը կամ նշանակված անձը պետք է պահպանի յուրաքանչյուր բողոք և հետագա հարակից գործողությունների վերաբերյալ գրառումները, ներառյալ քննության ընթացքում ձեռնարկված քայլերը և բոլոր պահանջվող տեղեկությունները՝ ելնելով 5 CCR 4631 և 4633 Մասերից:

UCP-ին չվերաբերող բողոքներ

Հետևյալ բողոքները կրթաշրջանի UCP-ին չվերաբերող բողոքներ են, որոնք պետք է հանձնարարվեն նշված գործակալությանը (5 CCR 4611):

1. Երեխայի չարաչափման կամ անտեսման վերաբերյալ բողոքները պետք է ուղղել Վարչաշրջանի սոցիալական ծառայությունների բաժանմունքին (DPSS), պաշտպանական ծառայությունների բաժանմունքին կամ համապատասխան իրավապահ գործակալությանը:
2. Երեխայի զարգացման ծրագրի վերաբերյալ առողջության և անվտանգության բողոքները պետք է

հանձնել հանրային սոցիալական ծառայությունների բաժանմունքին՝ լիազորված կառույցների համար, և Երեխայի զարգացման տարածաշրջանային ղեկավարին՝ ոչ լիազորված կառույցների համար:

3. Խտրադախտության վերաբերյալ բողոքը պետք է հանձնարարել Կալիֆոռնիայի կրթության վարչության (California Department of Education) իրավական, վերահսկումների և համապատասխանության բաժնին:

Ցանկացած հատուկ կրթության հայցադիմում, որը վերաբերում է անվճար համապատասխան պետական կրթության մերժմանը, որը հիմնված է համաձայնագրում, նույնիսկ եթե կարգավորման պայմանագիրը չի ներառվել անհատականացված ուսումնական ծրագրի մեջ, ուսումնասիրվում է Կալիֆոռնիայի կրթության բաժնի կողմից: (5 CCR 3080, 3200-3204; Կրթության օրենսգիրք, մաս 33315(a)(2)):

Ցանկացած բողոքներ, որոնք կապված են երեխայի սննդի հետ, ներառյալ կերակրատեսակների հաշվարկը, հատուցվող կերակուրները և երեխաների և մեծահասակների իրավասությունը, պետք է ուսումնասիրվեն և պատասխան տրվի ուղղակիորեն Կալիֆոռնիայի կրթության բաժանմունքի կողմից, ինչպես նշված է CCR 5-ում, բաժիններ 15580-15584:

Ցանկացած բողոք, որը վերաբերում է աշխատանքային խտրականությանը կամ ոտնձգությանը, պետք է քննվի և կարգավորվի կրթաշրջանի կողմից՝ AR 4030 Ոչ խտրականությանը աշխատանքի վայրում օրենքում նշված ընթացակարգերի հետ համապատասխան, ներառյալ բողոք ներկայացնելու իրավունքը Կալիֆոռնիայի արդարացի զբաղվածության և բնակարանային հարցերի բաժանմունքին:

Ցանկացած բողոք, որը վերաբերում է անբավարար քանակությամբ դասագրքերին և ուսումնական նյութերին, հրատապ կամ շտապ օգնության հարմարանքների պայմաններին, որոնք կարող են սպառնալ աշակերտի ու անձնակազմի առողջությանն ու անվտանգությանը, ուսուցիչների թափուր պաշտոններին և սխալ նշանակումներին, առողջության և անվտանգության խախտումներին՝ Կալիֆոռնիայի նահանգային նախադպրոցական արտոնագիրը ազատված ցանկացած ծրագրին, պետք է հետաքննվի և լուծվի Վիլյամսի Բողոքի համընդհանուր ընթացակարգերի AR 1312.4-ի համաձայն: (Կրթության օրենսգիրք 8235.5, 35186)

Վարչական կանոններ 1312.3 – Բողոքի համընդհանուր ընթացակարգեր

Բացառությամբ, եթե Ուսումնական խուրհուրդը մի այլ կրթաշրջանի որոշակի Կանոններ կապահովի, ապա Բողոքի համընդհանուր ընթացակարգը (UCP) կօգտագործվի միայն BP1312.3 կետում նշված բողոքները քննելու և լուծելու համար:

Պատասխանատու պաշտոնյաներ

Կրթաշրջանը անհատ(ներ), պաշտոնյա(ներ) կամ բաժանմունք(ներ) է ընտրում, որոնք պատասխանատու են ներկայացված բողոքներին անդրադառնալու համար, նահանգային և Դաշնային քաղաքացիական իրավունքների մասին օրենքներին համաձայն: Այդ անհատ(ներ)ը, պաշտոնյա(ներ)ը կամ բաժանմունք(ներ)ը ծառայում են որպես պատասխանատու պաշտոնյաներ, անօրինական խտրականությունները (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարք) հարթելու համար, ինչպես նշված է AR 5145.3-ի «ոչ խտրականության/ոտնձգությանը» բաժնում: Անհատները կստանան և կհամադրեն հետաքննության արդյունքները օրենքին համահունչ:

Dr. Kelly King, Գերատեսուչի օգնական – Կրթության ծառայություններ
223 North Jackson Street
Glendale, CA 91206
(818) 241-3111 x1208
KKing@gusd.net

Dr. Lena Richter, Կատեգորիկ ծրագրերի ղեկավար
223 North Jackson Street
Glendale, CA 91206
(818) 241-3111 x1457
LRichter@gusd.net

Պատասխանատու պաշտոնյան, ով ստանում է բողոքը, կարող է այդ բողոքի հետաքննությունը և լուծումը հանձնարարել մի այլ պատասխանատու պաշտոնյայի: Եթե մի այլ պատասխանատու պաշտոնյա է նշանակվել բողոքը հետաքննելու համար, ապա, եթե կիրառելի է, պատասխանատու պաշտոնյան պետք է ժամանակին տեղեկացնի բողոքարկուին և պատասխանող կողմին:

Ոչ մի դեպքում չպետք է նշանակվի մեկը որպես պատասխանատու պաշտոնյա, ով կողմնակա վերաբերմունք կամ շահերի բախում ունի, որը թույլ չի տա նրան անկողմնակա կերպով հետաքննություն կատարել և լուծել խնդիրը: Պատասխանատու պաշտոնյայի դեմ ցանկացած բողոք կամ պատասխանատու պաշտոնյայի արդարացի հետաքննություն կատարելու և խնդիրը լուծելու ունակության վերաբերյալ մտահոգությունները պետք է ներկայացնել գերատեսուչին կամ նրա հանձնակատարին, ով կորոշի, թե ինչպես պետք է հետաքննվի բողոքը:

Գերատեսուչը կամ նրա հանձնակատարը պետք է համոզված լինեն, որ պատասխատանու պաշտոնյան, ում հանձնարարվել է բողոքի քննումն ու լուծումը, վերապատրաստվել է և գիտի օրենքի և բողոքում նշված խնդրի մասին: Այս աշխատակիցներին տրամադրվող վերապատրաստման աշխատանքները պետք է անդրադառնան նահանգային և դաշնային օրենքներին և կանոններին, ծրագրի ղեկավարման կանոններին, բողոքի հետաքննման և լուծման համար կիրառելի ընթացակարգին, ներառյալ ենթադրյալ անօրինական խտրականությանը (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարք), որոշում կայացնելու կիրառելի չափանիշներին, համապատասխան ուղղիչ միջոցներին: Նշանակված աշխատակիցը կարող է կապվել իրավախորհրդատուի հետ, ինչպես սահմանված է գերատեսչի կամ նրա հանձնակատարի կողմից:

Պատասխանատու պաշտոնյան կամ, անհրաժեշտության դեպքում այլ համապատասխան վարչական աշխատակից կորոշի, թե արդյոք հետաքննության պատասխանին սպասելու ընթացքում անհրաժեշտ են միջանկյալ միջոցառումներ, թե ոչ: Եթե որոշվի, որ անհրաժեշտ են միջանկյալ միջոցառումներ, պատասխանատու պաշտոնյան կամ վարիչը պետք է խորհրդակցեն գերատեսուչի, նրա հանձնակատարի կամ եթե հարկ է, դպրոցի տնօրենի հետ, մեկ կամ ավելի միջանկյալ միջոցառումներ կիրառելու համար: Միջանկյալ միջոցառումները պետք է ուժի մեջ լինեն մինչև պատասխանատու պաշտոնյան կորոշի, որ դրանք այլևս անհրաժեշտ չեն կամ մինչև կրթաշրջանը կհայտնի իր գրավոր վերջնական որոշումը, որը որ առաջինը կլինի:

Ծանուցումներ

Կրթաշրջանի UCP-ի կանոնները և վարչական կանոնները պետք է փակցնել կրթաշրջանի բոլոր դպրոցներում և գրասենյակներում, ներառյալ հանգստի սենյակներում և աշակերտական ժողովների սենյակում (Կրթության օրենսգիրք 234.1):

Ամեն տարի գերատեսուչը կամ նրա հանձնակատարը պետք է տրամադրեն կրթաշրջանի UCP-ի ծանուցումները աշակերտներին, աշխատողներին, կրթաշրջանի աշակերտների ծնողներին/խնամակալներին, կրթաշրջանի խորհրդատվական հանձնաժողովների անդամներին, դպրոցական խորհրդակցական հանձնաժողովի անդամներին, համապատասխան մասնավոր դպրոցի պաշտոնատար անձանց կամ ներկայացուցիչներին և այլ շահագրգիռ կողմերին (5 CCR 4622):

Ծանուցումը պետք է ներառի.

1. Հայտարարություն, որ կրթաշրջանն անմիջականորեն պատասխանատու է հետևել Դաշնային և նահանգային օրենքներին և կանոնակարգերին, ներառյալ սպորինի խտրականության արգելումը, ոտնձգությունը, ահաբեկումը, բռնարարքը՝ ցանկացած պաշտպանված խմբի և բոլոր ծրագրերի և գործունեության հանդեպ, ինչպես նշված է, խորհրդի քաղաքականությանն առընթեր «UCP-ին ենթակա բողոքարկումներ» բաժնում:
2. Հայտարարություն այն մասին, որ աշակերտի վարձավճարների կամ տեղական վերահսկողության և հաշվետվության ծրագրի (LCAP) վերաբերյալ բողոքը կարող է ներկայացվել անանուն, եթե հայցվոր կողմը ներկայացնում է ապացույցներ կամ տեղեկություններ, որոնք հանգեցնում են բողոքին աջակցող փաստերի:

3. Հայտարարություն այն մասին, որ հանրակրթական դպրոցում սովորող աշակերտից չի պահանջվում վճարել ուսումնական այն ծրագրերին մասնակցելու համար, որոնք կազմում են կրթաշրջանի կրթական ծրագրի բաղկացուցիչ մասը, ներառյալ դպրոցական և արտադպրոցական գործունեությունը:
4. Հայտարարություն այն մասին, որ աշակերտի վարձավճարների վերաբերյալ բողոք պետք է ներկայացվի ենթադրյալ խախտումի օրվանից ոչ ուշ քան մեկ տարվա ընթացքում:
5. Հայտարարություն, որ կրթաշրջանը կներկայացնի ստանդարտացված ծանուցմամբ խնամատարության տակ գտնվող պատանիների, անօթևան աշակերտների, նախկին անչափահասների դատական դպրոցների աշակերտների, նորեկների ծրագրում ընդգրկված զինվորական ընտանիքների երեխաների, գաղթական և ներգաղթած աշակերտների կրթության իրավունքի մասին, ինչպես նշված է Կրթության օրենսգրքում 48853, 48853.5, 49069.5, 51225.1 և 51225.2, և բողոքների ընթացակարգում:
6. Բողոքներ ստանալու համար նշանակված պատասխանատու աշխատակազմի անդամ(ներ)ի, պաշտոն(ներ)ի կամ բաժանմունք(ներ)ի ճանաչում:
7. Հայտարարություն այն մասին, որ բողոքները կհետաքննվեն համաձայն Կրթաշրջանի UCP-ի, և գրավոր որոշումը բողոքարկողին կուղարկվի բողոքը ստանալու պահից 60 օրվա ընթացքում, եթե այդ ժամկետը չի երկարաձգվել բողոքողի գրավոր համաձայնությամբ:
8. Հայտարարություն այն մասին, որ հայցվոր կողմն իրավունք ունի բողոքարկել կրթաշրջանի որոշումը CDE-ին՝ գրավոր բողոքարկման միջոցով, ներառելով բողոքի բնօրինակի պատճենը և կրթաշրջանի որոշումը, շրջանի որոշումը ստանալուց հետո 15 օրվա ընթացքում:
9. Հայտարարություն, որը հայցվորին խորհուրդներ է տալիս Քաղաքացիական օրենսդրության միջոցներ, ներառյալ, բայց չսահմանափակվելով, արգելող, զսպող կարգադրություններ կամ այլ միջոցներ, որոնք առկա են պետական կամ Դաշնային հակախտրականության օրենքներում:
10. Հայտարարություն, որ կրթաշրջանի UCP-ի պատճենները անվճար են տրվում:

Տարեկան ծանուցումները, պատասխանատու պաշտոնյաների հետ կապի ամբողջական տեղեկությունը և Title IX-ի վերաբերյալ տեղեկությունները, Կրթության օրենսգրքի 221.61 Մասի համաձայն, պետք է տեղադրել կրթաշրջանի կայքէջում և կարելի է տրամադրել կրթաշրջանի կողմից աջակցվող սոցիալական ցանցերի միջոցով, եթե առկա են:

Գերատեսուչը կամ նրա հանձնակատարը պետք է վստահանան, որ բոլոր աշակերտները և ծնողները/խնամակալները, ներառյալ անզրեքների սահմանափակ իմացությամբ աշակերտները և ծնողները/խնամակալները կարողանում են տեղեկանալ կրթաշրջանի կանոնակարգերին, ձևերին և UCP-ի ծանուցումներին:

Եթե կրթաշրջանի աշակերտության 15 տոկոսը կամ ավելին խոսում են մի այլ նույն լեզվով, համաձայն Կրթության օրենսգրքի 234.1 և 48985 մասերի, կրթաշրջանի կանոնները, ձևերը և UCP-ի ծանուցումները պետք է թարգմանվեն այդ լեզուով: Բոլոր դեպքերում, կրթաշրջանը պետք է վստահանա, որ անզրեքների սահմանափակ իմացությամբ ծնողները/խնամակալները հնարավորինս հասու են UCP-ի վերաբերյալ կարևոր տեղեկություններին:

Բողոք ներկայացնելը

Բողոքը պետք է ներկայացնել պատասխանատու պաշտոնյային, ով պետք է ստացված բողոքների ցանկը պահի, յուրաքանչյուր բողոք կողավորի և ամսաթվի կնիք դնի:

Բոլոր բողոքները պետք է գրավոր ներկայացնել և բողոքարկուն պետք է ստորագրի այն: Եթե բողոքարկուն չի կարող իր բողոքը գրավոր ներկայացնել, օրինակ՝ հաշմանդամության կամ անգրագիտության պատճառով, կրթաշրջանի աշխատակիցները պետք է օգնեն նրան բողոքը ներկայացնել (5 CCR 4600):

Բողոքները պետք է ներկայացնել հետևյալ կանոնների համաձայն, ըստ կիրառելիության:

1. Ցանկացած բողոք, որ ենթադրում է կիրառելի նահանգային կամ Դաշնային օրենքի կամ կանոնների խախտում կրթաշրջանի կողմից, որոնք ղեկավարում են Ուսումնական խորհրդում նշված ծրագրերը («UCP-ին ենթակա բողոքներ» բաժնի 1-ին կետը), կարող են ներկայացվել ցանկացած անհատի, հանրային կառույցի կամ կազմակերպության կողմից (5 CCR 4630):
2. Բողոքը կրթական աշխատանքներին մասնակցելու համար աշակերտներից վճարում, կանխավճար և այլ տեսակի գանձումներ կատարելու կանոնը խախտելու կամ LCAP-ի հետ կապված որևէ պահանջի վերաբերյալ կարող է ներկայացվել անանուն, եթե բողոքարկուն փաստեր կամ տեղեկություններ է ներկայացնում, որոնք նպաստում են խախտման բացահայտմանը: Կրթական

աշխատանքներին մասնակցելու համար աշակերտներից անօրինական գանձումներ կատարելու մեղադրանքը կարելի է ներկայացնել դպրոցի տնօրենին կամ գերատեսուչին կամ նրա հանձնակատարին: Այնուամենայնիվ, այսպիսի բողոքները պետք է ներկայացվեն խախտումի պահից մինչև մեկ տարվա ընթացքում (Կրթության օրենսգիրք 49013, 52075; 5 CCR 4630):

3. Անօրինական խտրականության (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարք) բողոքը կարող է ներկայացնել միայն այն անհատը, ով ենթարկվել է անօրինական խտրականության կամ այն անհատը, ով հավատացած է, որ որևէ անհատ կամ խումբ ենթարկվել է անօրինական խտրականության: Բողոքը պետք է ներկայացնել անօրինական խտրականության մասին իմանալուց հետո վեց ամսվա ընթացքում կամ անօրինական խտրականության մասին իմանալուց հետո վեց ամսվա ընթացքում: Բողոքը ներկայացնելու ժամանակը կարող է երկարացվել մինչև 90 օր ժամկետով՝ գերատեսուչին կամ նրա հանձնակատարին գրավոր դիմում ներկայացնելու և պատճառը բացատրելու պարագայում (5 CCR 4630):
4. Երբ անօրինական խտրականության (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարք) բողոքը անանուն է ներկայացվում, պատասխանատու պաշտոնյան պետք է հետաքննություն կատարի կամ այլ կերպով պատասխանի ըստ պարագայի, ելնելով տեղեկության առանձնահատկությունից, վստահելիությունից և մեղադրանքի լրջությունից:
5. Երբ անօրինական խտրականության (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարք) բողոքարկուն կամ ենթադրյալ գոհը, որը բողոքարկուն չէ, գաղտնապահություն է պահանջում, պատասխանատու պաշտոնյան պետք է նրան տեղեկացնի, որ այդ պահանջը կարող է սահմանափակել կրթաշրջանի հետաքննություն կատարելու կամ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու կարողությունը: Գաղտնապահության պահանջը հարգելով, կրթաշրջանը, այնուամենայնիվ, ողջամիտ քայլեր է կատարում բողոքը հետաքննելու և լուծելու համար ելնելով պահանջից:

Միջնորդություն

Բողոքը ստանալուց երեք աշխատանքային օրվա ընթացքում, պատասխանատու պաշտոնյան բոլոր կողմերի հետ ոչ պաշտոնապես կքննարկի միջնորդություն օգտագործելու հնարավորությունը: Միջնորդություն կարող է առաջարկվել այն բողոքների դեպքում, երբ մեկից ավելի աշակերտ է ներգրավված և ոչ մի չափահաս: Այնուամենայնիվ, միջնորդություն չպետք է առաջարկվի կամ օգտագործվի սեռական բռնության մեղադրանքի պարագայում կամ, երբ կողմերը իրենց պարտադրված կզգան միջնորդությանը մասնակցել: Եթե կողմերը համաձայնվեն միջնորդությանը, պատասխանատու պաշտոնյան պետք է նախապատրաստի այս գործընթացը:

Նախքան վրեժխնդրության կամ անօրինական խտրականության (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարք) բողոքի լուծման համար միջնորդության նախաձեռնումը, պատասխանատու պաշտոնյան պետք է վստահանա, որ բոլոր կողմերը համաձայն են, որ միջնորդը տեղեկանա գաղտնի տեղեկությանը: Պատասխանատու պաշտոնյան պետք է կողմերին հայտնի, որ նրանք իրավունք ունեն ոչ պաշտոնական գործընթացը դադարեցնել ցանկացած պահի:

Եթե օրենքի սահմաններում միջնորդության միջոցով խնդիրը չլուծվի, պատասխանատու պաշտոնյան պետք է շարունակի իր հետաքննությունը:

Միջնորդության օգտագործումը չպետք է երկարացնի կրթաշրջանի՝ բողոքը հետաքննելու և լուծելու համար սահմանած ժամկետը, բացառությամբ, եթե բողոքարկուն գրավոր համաձայնվել է ժամկետը երկարացնելու հետ: Եթե միջնորդությունը հաջողության է հասնում և բողոքը հանվում է, կրթաշրջանը կկատարի միայն միջնորդության միջոցով համաձայնեցված գործողությունները: Եթե միջնորդությունը անարդյունք լինի, կրթաշրջանը պետք է շարունակի վարչական կանոնակարգով սահմանված քայլերը:

Բողոքի հետաքննում

Բողոքը ստանալուց հետո մինչև 10 աշխատանքային օրվա ընթացքում, պատասխանատու պաշտոնյան պետք է սկսի հետաքննություն կատարել:

Հետաքննությունը սկսելուց մեկ աշխատանքային օրվա ընթացքում, պատասխանատու պաշտոնյան պետք է բողոքարկունին կամ նրա ներկայացուցչին հնարավորություն տա ներկայացնելու բողոքում ներառված տեղեկությունները և պետք է բողոքարկունին կամ նրա ներկայացուցչին տեղեկացնի բողոքին նպաստող

ապացույցներ կամ ապացույցներին հանգեցնող տեղեկություններ ներկայացնելու հնարավորության մասին: Այսպիսի ապացույցներ կամ տեղեկություններ կարելի է ներկայացնել հետաքննության ամբողջ ընթացքում:

Հետաքննություն կատարելիս, պատասխանատու պաշտոնյան պետք է հավաքի բոլոր փաստաթղթերը և վերանայի բոլոր մատչելի արձանագրությունները, գրառումները կամ բողոքին վերաբերող հայտարարությունները, ներառյալ հետաքննության ընթացքում կողմերից ստացված լրացուցիչ ապացույց կամ տեղեկություն: Նա պետք է առանձին հարցազրույց անցկացնի բոլոր վկաների կամ նրանց հետ, ովքեր բողոքի հետ կապված տեղեկություններ ունեն և և կարող են այցելել մատչելի վայրեր, որտեղ ենթադրվում է, որ համապատասխան գործողությունները տեղի են ունեցել: Պատասխանատու պաշտոնյան պատշաճ պարբերականությամբ, պետք է երկու կողմերին տեղեկացնի հետաքննության ընթացքի մասին:

Վրեժխնդրության կամ անօրինական խտրականության (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարք) բողոքի հետաքննություն կատարելիս, պատասխանատու պաշտոնյան պետք է առանձին և գաղտնի հարցաքննի ենթադրյալ զոհ(եր)ին, ենթադրյալ հանցագործին և վկաներին: Ըստ անհրաժեշտության, անձնակազմի հավելյալ անդամներ կամ իրավական խորհրդատուներ կարող են վարել կամ նպաստել հետաքննությանը:

Եթե բողոքարկուն հրաժարվի կրթաշրջանի հետաքննողին մեղադրանքին վերաբերող բողոքին վերաբերող փաստաթղթեր կամ այլ ապացույցներ ներկայացնել, չհամագործակցել կամ խոչընդոտել, բողոքը կփակվի ապացույցների բացակայության պատճառով: Նմանապես, եթե մեղադրյալը հրաժարվի կրթաշրջանի հետաքննողին մեղադրանքին վերաբերող փաստաթղթեր կամ այլ ապացույցներ ներկայացնել, չհամագործակցի կամ խոչընդոտի հետաքննության աշխատանքներին, ապա հավաքած ապացույցների հիման վրա որոշում կկայացվի, որ խախտումը տեղի է ունեցել և միջոցներ կկիրառվեն հօգուտ բողոքարկուի (5 CCR 4631):

Ըստ օրենքի, կրթաշրջանը պետք է մեղադրանքին վերաբերող բոլոր արձանագրությունները և այլ տեղեկությունները մատչելի դարձնի հետաքննողին և չպետք է խոչընդոտի հետաքննությանը: Կրթաշրջանի՝ համագործակցությունից հրաժարվելը կհանգեցնի հավաքած ապացույցների հիման վրա վճիռ կայացնելուն, որ խախտումը տեղի է ունեցել և միջոցներ կկիրառվեն հօգուտ բողոքարկուի (5 CCR 4621):

Վերջնական որոշման ժամկետները

Վերջնական որոշումը պետք է բողոքարկուին ուղարկվի բողոքը ստանալուց հետո 60 օրվա ընթացքում, բացառությամբ, եթե ժամկետը երկարացվել է բողոքարկուի գրավոր համաձայնությամբ: Բողոքն ստանալուց հետո, 30 օրացուցային օրվա ընթացքում պատասխանատու պաշտոնյան պետք է գրավոր զեկույց պատրաստի և բողոքարկուին ուղարկի, ինչպես նկարագրված է ստորև «Վերջնական գրավոր որոշում» բաժնում: Եթե բողոքարկուն դժգոհ է պատասխանատու պաշտոնյայի որոշումից, նա կարող է հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր բողոք ներկայացնել ուսումնական խորհրդին:

Ուսումնական խորհուրդը կարող է խնդիրը քննարկել ուսումնական խորհրդի հաջորդ հերթական ժողովում կամ արտակարգ ժողով գումարել, բողոքին պատասխանելու 60 օրվա ժամկետը պահպանելու համար: Երբ օրենքով պահանջվում է, հարցը պետք է քննարկվի դռնփակ: Ուսումնական խորհուրդը կարող է բողոքարկուին չլսելու որոշում կայացնել, որի դեպքում պատասխանատու պաշտոնյայի որոշումը վերջնական կլինի:

Եթե ուսումնական խորհուրդը լսի բողոքը, պատասխանատու պաշտոնյան պետք է բողոքը ստանալուց հետո 60 օրվա ընթացքում կամ գրավոր համաձայնագրում նշված ժամկետում ուսումնական խորհրդի որոշումն ուղարկի բողոքարկուին (5 CCR 4631):

Անօրինական խտրականության (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարք) ցանկացած բողոք լուծելիս, մեղադրյալը ևս պետք է տեղեկացվի ժամկետի երկարացման մասին, որին համաձայնվել է բողոքարկուն և սղտանա կրթաշրջանի գրավոր որոշումը: Մեղադրյալը, կայացված որոշումից դժգոհ լինելու դեպքում, կարող է բողոք ներկայացնել ուսումնական խորհրդին այնպես ինչպես բողոքարկուն:

Վերջնական գրավոր որոշում

Բոլոր բողոքների պարագայում կրթաշրջանի վերջնական գրավոր որոշումը պետք է ընդգրկի (5 CCR 4631).

1. Հավաքած փաստերի վրա հիմնված եզրակացություն; Փաստացի որոշման հանգելու համար, պետք է հաշվի առնել հետևյալ գործոնները.
 - a. Վկանների տված ցուցմունքները
 - b. Ներգրավված անհատների հարաբերական վստահելիությունը
 - c. Ինչպես է բողոքարկու անհատն արձագանքել միջադեպին
 - d. Ենթադրյալ վարքագծի հետ կապված ցանկացած փաստաթուղթ կամ այլ ապացույց
 - e. Ենթադրյալ մեղադրյալի կողմից անցյալում ցուցաբերված նման վարքագիծ
 - f. Բողոքարկուի կողմից անցյալում կատարված կեղծ մեղադրանքներ

2. Օրենքի եզրակացություն(ներ)

3. Բողոքի դրույթ

4. Այսպիսի դրույթի բացատրություն

Վրեժխնդրության կամ անօրինական խտրականության վերաբերյալ բողոքների համար (ինչպիսիք են ՝ խտրական ոտնձգություններ, ահաբեկումներ կամ բռնարարքներ), բողոքարկման դրույթը պետք է ներառի յուրաքանչյուր մեղադրանքի համար մի որոշում թե արդյոք վրեժխնդրություն կամ անօրինական խտրականություն կատարվել է, թե ոչ:

Թշնամական միջավայրի գոյություն ունենալու փաստի հաստատման որոշումը կարող է հաշվի առնել հետևյալը՝

- a. Ինչպես է վատ վարքագիծը ազդել մեկ կամ ավելի աշակերտների կրթության վրա
 - b. Վատ վարքի տեսակը, հաճախականությունը և տևողությունը
 - c. Ենթադրյալ գոհ(եր)ի և մեղադրյալ(ներ)ի հարբերությունները
 - d. Վարքի մեջ ընդգրկված անհատների թիվը և թե ում դեմ էր ուղղված այդ վարքը
 - e. Դպրոցի չափը, միջադեպի վայրը և հանգամանքները, որոնցում պատահել է միջադեպը
 - f. Դպրոցում պատահած այլ միջադեպեր տարբեր անձանց մասնակցությամբ
5. Ուղղիչ գործողություններ(ներ), ներառյալ ձեռնարկված կամ ձեռնարկվելիք գործողությունները բողոքում առաջադրված մեղադրանքները լուծելու համար, ներառյալ՝ աշակերտների վճարումների վերաբերյալ բողոքը, համաձայն Կրթության օրենսգրքի 49013 և 5 CCR 4600:

Անօրինական խտրականության դեմ (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարք) բողոքի համար ծանուցումը, ըստ օրենքի, կարող է պարունակել՝

- a. Մեղադրյալի հանդեպ ուղղիչ գործողություններ;
 - b. Անհատական միջոցառումներ՝ առաջարկված կամ տրամադրված բողոքարկուին կամ այլ անձի, ով հանդիսանում է բողոքարկման սուբյեկտը, բայց այս տեղեկությունները չպետք է հայտնվեն պատասխանողին;
 - c. Համակարգային միջոցառումներ, որ դպրոցը ձեռնարկել է թշնամական միջավայրը վերացնելու և միջադեպի կրկնությունը կանխելու համար:
6. 15 օրացուցային օրվա ընթացքում կրթաշրջանի որոշումը CDE-ին բողոքարկելու բողոքողի և պատասխանողի իրավունքի վերաբերյալ ծանուցումը և ընթացակարգերը, որոնք պետք է իրականացվեն այդպիսի բողոքարկման նախաձեռնման համար:

Որոշումը կարող է ներառել հետագա ընթացակարգերը՝ միջադեպը կամ վրեժխնդրությունը կանխելու և հետագա խնդիրների մասին զեկուցելու համար:

Շրջանի իրավաբանական խորհրդատուի հետ խորհրդակցելով, որոշման համապատասխան մասի վերաբերյալ տեղեկատվությունը կարող է հաղորդվել տուժողին, որը բողոքողը չէ, և այլ կողմերին, որոնք կարող են ներգրավված լինել որոշման իրականացման մեջ կամ տուժել են բողոքից՝ պահպանելով կողմերի գաղտնիության իրավունքը: Անօրինական խտրականության մասին բողոքում (օրինակ ՝ խտրական ոտնձգություններ, ահաբեկումներ և բռնարարքներ), ենթադրյալ տուժողի նկատմամբ կրթաշրջանի որոշման մասին ծանուցումը պետք է պարունակի տեղեկատվություն այն պատժամիջոցների մասին, որոնք պետք է կիրառվեն պատասխանողի հանդեպ, որոնք ուղղակիորեն առնչվում են ենթադրյալ գոհին:

Եթե բողոքում ներգրավված են անգլերենի սահմանափակ իմացությամբ աշակերտ կամ ծնող/խնամակալ և այդ աշակերտը սովորում է մի դպրոցում, ուր աշակերտության 15 տոկոսը կամ ավելին խոսում են մեկ այլ նույն լեզվով, ապա որոշումը պետք է թարգմանվի այդ լեզվով, համաձայն Կրթության օրենսգրքի 48985 Մասի: Բոլոր դեպքերում, կրթաշրջանը պետք է վստահանա, որ անգլերենի սահմանափակ իմացությամբ ծնողները/խնամակալները հնարավորինս հասու են կարևոր տեղեկություններին:

Նահանգային օրենքներից ելնելով՝ անօրինական խտրականության դեմ (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարք) բողոքների որոշումները պետք է ներառեն բողոքողին ուղղված ծանուցում, որ.

- a. Բողոքողը կարող է դիմել քաղաքացիական իրավունքի պաշտպանության միջոցներ, կրթաշրջանի բողոքի ընթացակարգից դուրս, այդ թվում միջնորդության կենտրոններից կամ հանրային/մասնավոր փաստաբանից օգնություն ստանալու համար, CDE-ին բողոքարկելուց հետո 60 օրվա ընթացքում (Կրթության օրենսգիրք 262.3):
- b. 60 օրվա ժամկետը չի վերաբերում նահանգային դատարանում օգնություն փնտրող կամ խտրականությանը վերաբերող բողոքներին ըստ Դաշնային օրենքի (Կրթության օրենսգիրք 262.3):
- c. Ազգի, մաշկի գույնի, ծագման, սեռի, հաշմանդամության կամ տարիքի հետ կապված բողոքները նույնպես կարելի է ներկայացնել ԱՄՆ-ի կրթության վարչության քաղաքացիական իրավունքների գրասենյակին, այցելելով՝ www.ed.gov/ocr կայքը, ենթադրյալ խտրականության միջադեպից 180 օրվա ընթացքում:

Ուղղիչ գործողություններ

Երբ պարզվի, որ բողոքը արժեվորված է, պատասխանատու պաշտոնյան պետք է օրենքով թույլատրված համապատասխան ուղղիչ գործողություններ ձեռնարկի: Համապատասխան ուղղիչ գործողությունները կարող են կենտրոնանալ դպրոցի կամ կրթաշրջանի կանոնների ամրապնդման, աշխատակիցների, անձնակազմի և աշակերտների վերապատրաստման, դպրոցի կանոնների արդիականացման կամ դպրոցի մթնոլորտի ուսումնասիրման վրա:

Վրեժխնդրության կամ անօրինական խտրականության դեմ (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարք) բողոքի համար համապատասխան միջոցները, որոնք կարող են առաջարկվել գոհին, բայց չհաղորդվել մեղադրյալին, կարող են ներառել, բայց չսահմանափակվել, հետևյալը՝

1. Խորհրդատվություն
2. Ուսումնական աջակցություն
3. Առողջապահական ծառայություններ
4. Ուղեկցողի տրամադրում, որպեսզի գոհը կարողանա ապահով շրջել դպրոցում
5. Տեղեկություն առկա աղբյուրների մասին և թե՛ ինչպես գեկուցել նմանատիպ միջադեպերի կամ վրեժխնդրության մասին
6. Չոհին առանձնացնել միջադեպի մեջ ներգրավված անձանցից, բայց ոչ պատժի տեսքով
7. Վերականգնել արդարադատությունը
8. Հետևել իրավիճակին վստահանալու համար, որ վարքագծի դրսևորումը դադարել է և վրեժխնդրության դեպքեր չեն եղել

Վրեժխնդրության կամ անօրինական խտրականության դեմ (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարք) բողոքի համար, համապատասխան ուղղիչ գործողությունները, որ կենտրոնանում են օրինազանց աշակերտի վրա, կարող են ներառել, բայց չսահմանափակվել, հետևյալով՝

1. Դասարանից կամ դպրոցից փոխադրել համաձայն օրենքի
2. Ծնողի/խնամակալի հետ ժողով
3. Դասընթաց այն մասին, թե՛ վարքագիծը ինչպես է ազդում մյուսների վրա
4. Դրական վարքագծի աջակցություն
5. Հղում Աշակերտի հաջողության հանձնախմբին (SST)
6. Չրկել արտադպրոցական կամ արտադասարանական աշխատանքներից, օրենքի սահմաններում
7. Պատժամիջոցներ, ինչպես օրինակ, կասեցում դպրոց հանախելուց կամ հեռացում, օրենքի սահմաններում

Եթե պարզվի, որ աշխատակիցը վրեժխնդրություն կամ անօրինական խտրականություն (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարք) է կատարել, կրթաշրջանը պետք է պատժամիջոցներ ձեռք առնի, ընդհուպ մինչև աշխատանքից ազատում, համաձայն գործող օրենքի և կոլեկտիվ բանակցությունների պայմանագրի:

Կրթաշրջանը կարող է վերապատրաստում և այլ միջամտություններ տրամադրել դպրոցի ընդլայնված համայնքին, որպեսզի վստահ լինի, որ աշակերտները, անձնակազմը և ծնողները/խնամակալները

հասկանում են, թե որ վարքագիծն է անօրինական խտրականություն (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարք) համարվում, որ կրթաշրջանը դա չի հանդուրժում և ինչպես գեկուցել կամ արձագանքել դրան:

Երբ բողոքը իրենից կարևորություն է ներկայացնում, բողոքողին կամ վնաս կրած այլ անձին համապատասխան միջոցներ են տրամադրվում:

Եթե աշակերտների վճարների, կանխավճարների և այլ ծախսերի, աշակերտների ֆիզիկական կրթության դասերի բույներին և LCAP-ի որևէ պահանջի վերաբերյալ բողոքները ենթադրում են անհամապատասխանություն օրենքի հետ, հիմք ունեն, ապա կրթաշրջանը պետք է միջոցներ տրամադրի բոլոր տուժած աշակերտներին և ծնողներին/խնամակալներին՝ համաձայն Նահանգային ուսումնական խորհրդի կանոնակարգերի (Կրթության օրենսգիրք 49013, 51223, 52075):

Բողոքները, որոնք ենթադրում են աշակերտների վճարների օրենքների հետ կապված անհամապատասխանություն, կրթաշրջանը պետք է բարեխղճորեն, ողջամիտ ջանքերով հայտնաբերի և ամբողջությամբ փոխհատուցի վնասը տուժած աշակերտներին և ծնողներին/խնամակալներին, ովքեր վճարել են անօրինական գանձումներ, բողոքը ներկայացնելուց հետո մեկ տարվա ընթացքում (Կրթության օրենսգիրք 49013; 5 CCR 4600):

Բողոքարկումներ Կալիֆոռնիայի կրթության վարչությանը

UCP- ին ենթակա ցանկացած առանձին դաշնային կամ նահանգային ուսումնական ծրագրի վերաբերյալ բողոքի մասին կրթաշրջանի վերջնական գրավոր որոշումից դժգոհ ցանկացած բողոքարկու կարող է գրավոր բողոք ներկայացնել CDE-ին կրթաշրջանի որոշումը ստանալուց հետո 15 օրացուցային օրվա ընթացքում (5 CCR 4632):

Դիմող կողմը պետք է նշի որոշման բողոքարկման հիմքը, և թե ինչով է կրթաշրջանի որոշումը սխալ և/կամ ինչպես է օրենքը սխալ կիրառվել: The appeal shall be sent to CDE with a copy of the original locally filed complaint and a copy of the District's decision in that complaint. Բողոքարկումը պետք է ուղարկվի CDE- ին՝ տեղական բողոքարկման բնօրինակի և այդ բողոքարկման մեջ գտնվող շրջանի որոշման պատճենի հետ միասին (5 CCR 4632):

Երբ ենթադրյալ անօրինական խտրականության (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարք) բողոքի պատասխանող կողմը դժգոհ է կրթաշրջանի վերջնական գրավոր որոշումից, նա կարող է, ինչպես բողոքողը, բողոքարկել որոշումը CDE-ի հետ:

Երբ CDE-ն հայտնի, որ կրթաշրջանի որոշումը բողոքարկվել է, գերատեսուչը կամ նրա հանձնակատարը պետք է CDE-ին ուղարկեն հետևյալ փաստաթղթերը (5 CCR 4632)՝

1. Սկզբնական բողոքի պատճենը
2. Գրավոր որոշման պատճենը
3. Կրթաշրջանի կատարած հետաքննության բնույթի և ծավալի ամփոփումը, եթե ներառված չէ որոշման մեջ:
4. Հետաքննության գործերի պատճենը, ներառյալ, բայց ոչ սահմանափակված, բոլոր գրառումները, հարցազրույցները և կողմերի ներկայացրած և հետաքննողի հավաքած փաստաթղթերը:
5. Բողոքը լուծելու համար ձեռնարկված ցանկացած գործողության գեկույց
6. Կրթաշրջանի Բողոքի համընդհանուր ընթացակարգի պատճենը
7. Առնչվող այլ տեղեկություններ՝ CDE-ի պահանջով

Կալիֆոռնիա նահանգի նախադպրոցական ծրագրի (CSPP) առողջության և անվտանգության վերաբերյալ բողոքներ

Արտոնագրից ազատ յուրաքանչյուր CSPP դասասենյակում պետք է փակցվի ծնողներին/ խնամակալներին, աշակերտներին և ուսուցիչներին առողջության և անվտանգության պահանջներին ծանոթացնող ծանուցում, համաձայն Title 5-ի կանոնակարգերի պահանջի, որոնք վերաբերում են CSPP ծրագրերին՝ համաձայն Առողջապահության և անվտանգության օրենսգրքի 1596.7925 Մասերի և թե որտեղ կարելի է ձեռք բերել բողոք ներկայացնելու դիմումի ձևը՝ այդ պահանջներին չհամապատասխանելու ենթադրյալ խախտումի վերաբերյալ (Կրթության օրենսգիրք 8235.5):

Ցանկացած բողոք, որը վերաբերում է Արտոնագրից ազատ CSPP ծրագրում նշված առողջության կամ անվտանգության հետ կապված որոշակի խնդիրներին, պետք է ներկայացվի նախադպրոցական ծրագրի ղեկավարին կամ պաշտոնակատարին և կարող է ներկայացվել անանուն: Բողոքի ձևաթուղթը պետք է նշի բողոք ներկայացնելու վայրը և ունենա մաս՝ նշելու համար, թե հայցվոր կողմը ցանկանում է պատասխան ստանալ իր բողոքի դիմաց, թե ոչ: Եթե որոշվի, որ բողոքը նախադպրոցական ծրագրի ղեկավարի լիազորություններից դուրս է, ապա գործը պետք է ժամանակին հանձնվի գերատեսուչին կամ պաշտոնատար անձին՝ լուծման համար, մինչև 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Արտոնագրումից ազատված CSPP ծրագրում առողջության կամ անվտանգության խնդիրներին վերաբերող բողոքների քննությունը պետք է սկսվի բողոքը ստանալուց հետո 10 օրվա ընթացքում: (Կրթության օրենսգրքի 8235.5):

Նախադպրոցական հաստատության ղեկավարը կամ պաշտոնատար անձը հիմնավորված բողոքը պետք է շտկի ողջամիտ ժամկետներում՝ ոչ ավելի, քան բողոքը ստանալու պահից 30 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե բողոքող կողմը նշել է, որ բողոքի վերաբերյալ ուզում է պատասխան ստանալ, նախադպրոցական հաստատության ղեկավարը կամ պաշտոնատար անձը պետք է բողոքի լուծման որոշումը բողոքողին զեկուցի բողոքի ներկայացման պահից 45 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե նախադպրոցական հաստատության ղեկավարը ներկայացնում է այս զեկույցը, ապա տեղեկատվությունը պետք է միաժամանակ հաղորդվի գերատեսուչին կամ պաշտոնատար անձին: Եթե բողոքողը չի բավարարված բողոքի լուծումով, նա իրավունք ունի բողոք ներկայացնել Խորհրդին հերթական նիստին:

Դիմող կողմը կարող է գրավոր բողոքարկել կրթաշրջանի որոշումը CDE- ին՝ համաձայն 5 CCR 4632: Ցանկացած նման բողոքարկում պետք է ներկայացվի որոշումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում:

Եռամսյակային կտրվածքով, գերատեսուչը կամ պաշտոնատար անձը պետք է Խորհրդի հերթական նիստում և Վարչական շրջանի դպրոցների գերատեսուչին զեկուցեն CSPP-ի առողջության և անվտանգության բոլոր բողոքների բնույթի և լուծման վերաբերյալ ամփոփված տվյալները, ներառյալ ընդհանուր բողոքների թիվը, լուծված և չլուծված բողոքների քանակը:

ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի վարչական կանոնադրություն 1312.5

Ուսումնական խորհուրդը հանձնառու է ուսումնական ու վարչական ընթացակարգերը կարգավորելու ընթացքում դպրոցներին ու կրթաշրջանին զերծ պահել խանգարող հանգամանքներից և արգելել անթույլատրելի անձանց մուտքը դպրոց: Կրթաշրջանի անձնակազմը հարգալից վերաբերմունք կցուցաբերի աշխատակիցների, աշակերտների, ծնողների, համայնքի անդամների նկատմամբ և կակնկալի փոխադարձը:

Այս կանոնադրության նպատակը որևէ մեկին իր խոսքի ազատության իրավունքից զրկելը չէ, այլ մեր անձնակազմի և աշակերտների համար հնարավորության և խելամտության սահմաններում ապահով և ոտնձգություններից զերծ միջավայր ապահովելն է: Կրթաշրջանի աշակերտներին դրական օրինակ ներկայացնելու նպատակով, Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը քաղաքակիրթ և բարեհաս հաղորդակցություն է ակնկալում: Կրթաշրջանը չի հանդուրժի կոպիտ, անգուսայ, անտարբեր, թշնամական կամ ագրեսիվ վարքագիծ, ինչպես նաև անպարկեշտ ու վիրավորական բարձրաձայն խոսելաձև: Կրթաշրջանն այս նպատակն իրականացնելու համար աշխատակիցների, աշակերտների, ծնողների և հանրության համագործակցության կարիքն ունի:

Կրթաշրջանի անձնակազմը պետք է վերապատրաստվի Ուսումնական կանոնադրությանն անհարիր խանգարող վերաբերմունքի ճանաչման ու զսպման համար: Աշխատակիցները, ծնողներն ու աշակերտները կտեղեկացվեն այս կանոնադրության, ինչպես նաև անբարեկիրթ վերաբերմունքի դիմաց ձեռք առնվող միջոցների մասին: Կրթության օրենսգրքի 32210, 44014, 44810, 44811 Մասեր և Կալիֆոռնիայի Քրեական օրենսգրքի 243.5, 415.5, 626.8, 627.7 Մասեր):

«ՍՈՎՈՐԵԼՈՒ ՎՊԱՀՈՎ ՄԻՋՎԱՅՐ» ՈՐՈՇՈՒՄԸ

Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը հանձնառու է պահպանել ուսուցման այնպիսի միջավայր, որը զերծ է խտրականությունից, անհանգստացումներից, բռնությունից, ահաբեկումից և բռնարարքից՝ հիմնվելով Քրեական օրենսգրքի 422.55 հոդվածի և Կրթական օրենսգրքի 220 Մասում նշված իրական կամ ենթադրյալ հատկանիշների, այդ թվում՝ հաշմանդամության, սեռի, գենդերային ինքնության, գենդերային

արտահայտության, ազգության, ռասայի կամ էթնիկ խմբի, կրոնի, սեռական կողմնորոշման հիման վրա կամ վերոհիշյալ առանձնահատկություններով անձի կամ խմբի հետ կապ ունենալու հետևանքով: Դպրոցի բոլոր աշխատակիցները, ովքեր սկսանատես են խտրականության, անհանգստության, բռնության, ահաբեկման կամ բռնարարքի, պետք է անմիջական քայլերի դիմեն միջամտելու, երբ դա ապահով է: Ցանկացած աշակերտ, ով կներգրավվի խտրականության, անհանգստության, բռնության, ահաբեկման կամ բռնարարքի մեջ, ենթակա է կարգապահական պատժամիջոցների, ընդհուպ և ներառյալ դպրոցից վտարման: Ցանկացած միջադեպ գեկուցելու կամ խտրականության, անհանգստացման, բռնության, ահաբեկման կամ բռնարարքի մասին գեկուցելու նպատակով կրթաշրջանի կանոնների կրկնօրինակը ստանալու համար կապվեք Աշակերտների աջակցման ծառայությունների գրասենյակի տնօրենի հետ (818) 241-3111 ներքին 1285 հեռախոսահամարով:

ԳՊՐՈՑԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՉԵԿՈՒՑԱԳԻՐ (SARC)

1988թ. նոյեմբերից սկսած, Կալիֆոռնիա նահանգային Կրթության օրենսգրքի 35256 Մասի համաձայն, նահանգային ֆինանսավորում ստացող հանրային դպրոցներից պահանջվում է պատրաստել և հրատարակել Դպրոցի հաշվետվության գեկույցներ: Այս գեկույցների նպատակն է ծնողներին և համայնքի անդամներին տրամադրել հանրային դպրոցների մասին կարևոր տեղեկություններ: Դպրոցի հաշվետվության գեկույցները արդյունավետ միջոց են տեղեկացնելու դպրոցի նպատակների իրագործման ուղղությամբ ցուցաբերած առաջընթացը:

Դպրոցի հաշվետվության գեկույցագիրը պարունակում է տեղեկատվություն դպրոցի անցյալի և աշակերտների մասին: Այն ամփոփում է դպրոցի առաքելությունը, նպատակները և ձեռքբերումները: Նահանգային օրենքը պահանջում է, որ գեկույցագիրը պարունակի հետևյալ տեղեկությունները՝ ազգագրական տվյալներ, դպրոցի ապահովության և ուսման միջավայրի մասին տվյալներ, ուսումնական տվյալներ, դպրոցն ավարտելու գործակիցը, դասարանի չափերը, ուսուցիչների և անձնակազմի մասին տեղեկություններ, ուսումնական ծրագրերի և ուսուցման նկարագիրը, քոլեջի նախապատրաստության վերաբերյալ տեղեկատվություն, ֆինանսների և ծախսերի տվյալներ: Կալիֆոռնիայի ներկայիս օրենսդրությունը պահանջում է, որ դպրոցի հաշվետվության գեկույցի մեջ ցանկագրվեն ուսուցիչների իրենց պաշտոնին համապատասխանությունը, ուսուցիչների թափուր աշխատատեղերը, բավարար դասագրքերի ու ուսումնական պարագաների առկայությունը, անհրաժեշտ սպասարկումը՝ դպրոցը լավ վիճակում պահելու համար:

Ծնողները/խնամակալները կարող են գտնել SARC-ի վերաբերյալ ամենաթարմ տեղեկատվությունը Գլենդելի կրթաշրջանի կայքում՝ www.gusd.net/sarc: Դպրոցի հաշվետվության գեկույցի պատճենը և թարգմանությունները կարելի է ստանալ հանրային տեղեկությունների գրասենյակից կամ www.sarconline.org կայքէջից: Հավելյալ տեղեկությունների համար ծնողները կարող են զանգահարել դպրոց կամ կրթաշրջանի գրասենյակ և կարող են ժամադրություն ստանալ դպրոցի ղեկավարության կամ անձնակազմի հետ հանդիպելու համար:

ԱՃԱԿԵՐՏՆԵՐԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՈՒՄ ԵՎ ՏԵՍԱԳՐՈՒՄ

Ուսումնական տարվա ընթացքում աշակերտները երբեմն լուսանկարվում կամ տեսագրվում են լրատվական միջոցների կողմից ուսումնական ծրագրերի, ելույթների ու ծրագրերի մասին ծնողներին ու համայնքին տեղյակ պահելու նպատակով: Աշակերտներին հնարավոր է դպրոցում լուսանկարեն կամ տեսագրեն դպրոցի կամ կրթաշրջանի կայքէջերի, տեղեկագրերի, սոցիալական լրատվամիջոցների, շուկայավարման նյութերի կամ հանրային միջոցառումների համար՝ աշակերտների ձեռքբերումները կամ պատվոգրերը, դպրոցական կամ կրթաշրջանի ուսումնական ծրագրերը կարևորելու կամ միջոցառումների խթանման նպատակներով: Աշակերտները չեն կարող առանց անձնակազմի համաձայնության նրանց լուսանկարել:

Մենք հարգում ենք աշակերտների և նրանց ընտանիքների գաղտնիությունը: Եթե ՉԵՔ ՑԱՆԿԱՆՈՒՄ, որ ձեր երեխայի անունը, լուսանկարը, տեսագրությունը հայտնվի թերթերի, դպրոցի, կրթաշրջանի կայքէջերի, սոցիալական ցանցերի և դպրոցի/կրթաշրջանի լրատվամիջոցների կամ կրթաշրջանի համաձայնությամբ այլ խմբերի կողմից զանազան հրատարակությունների մեջ, խնդրում ենք լրացնել Ձև 8-ը:

ԱՌՈՂՋԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ ԱՊԱՀՈՎ ԳՊՐՈՑՆԵՐ

Ազբեստի տեսակետից անվտանգ դպրոցներ – Կրթաշրջանը շարունակում է բավարարել Asbestos Hazard Emergency Response օրենքի պահանջները, որոնք 1986 թ. վավերացրեց Կոնգրեսը: Օրենքը պահանջում է հայտնաբերել ազբեստ պարունակող շինարարական նյութեր և ծրագիր մշակել այդ նյութերը չեզոքացնելու կամ հեռացնելու համար:

Երկար տարիներ ազդեցություն ունեցողը օգտագործվել է հրդեհի մեկուսացման և կասեցման համար: Որոշ դպրոցների շենքեր դեռ պարունակում են ազդեցող, բայց այն հիմնականում տեղադրված է ձեղնահարկում կամ պահեստային հատվածներում՝ մարդկանցից հեռու:

Դպրոցի ազդեցողի չեզոքացման ծրագրի, ինչպես նաև դպրոցի շենքերի հաշվետվության պատճենները կարող եք ստանալ ձեր շրջանի դպրոցի գրասենյակից:

2000թ. «Առողջ Դպրոցներ» որոշումը – 2000 թ. Առողջ դպրոցներ որոշման համաձայն, Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանից պահանջվում է ամեն տարի դպրոցների անձնակազմին, ծնողներին ու խնամակալներին նամակով տեղեկացնել վնասատուների դեմ պայքարի համար նախատեսված նյութերի մասին: 2020-2021 ուսումնական տարվա համար Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը պայմանագրեր ունի վնասատուների դեմ պայքարի Pest Options of Orange Կալիֆոռնիա նահանգի կողմից արտոնագրված կապալառուի հետ՝ վնասատուների դեմ պայքարելու ծառայություն տրամադրելու մասին: Անհրաժեշտության դեպքում վնասատուների դեմ պայքարում կարող են օգտագործվել հետևյալ արտադրանքները 2020-2021 ուսումնական տարում.

<u>Արտադրանք</u>	<u>Ակտիվ բաղադրամաս</u>	<u>Կիրառումը</u>	<u>Ազդանշանային բառ #</u>
Advion Ant Gel	Indoxacarb	Խավարասերներ	352-652
Advion Roach Gel	Indoxacarb	Մրջյուններ	352-627
Alpine WSG	Dinotefuran	Միջատներ	499-561
Altosid	Methoprene	Մոծակներ	2724-451
Contra Blox	Bromadiolone	Կրծողներ	12455-79
D-Fense SC	Deltamethrin	Միջատներ	53883-276
Evergreen Pyrethrum	MGK	Միջատներ	1021-2560
Fumitoxin	Aluminum Phosphide	Փորող կրծողներ	72959-1, 72959-2
Nyguard IGR	Pyriproxyfen	Միջատի IGR	1021-1603
Siesta	Metaflumizone	Կրակե մրջյուններ	7969-232
Ramik Oats	Diphacinone	Փորող կրծողներ	61282-24
Termidor SC	Fipronil	Միջատներ	7969-210
Triact 70 Organic	Neem Oil	Միջատասպաններ	70051-2-59807
ZP AG Oats	Zinc Phosphide	Կրծողներ	12455-102-3240

Վնասատուների դեմ պայքարի այլ միջոցների մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք այցելել Կալիֆոռնիայի թունաքիմիկատների հսկողության բաժանմունքի www.cdpr.ca.gov կայքէջը:

Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը «զգուշ» կամ «վտանգավոր» պիտակով արտադրանքներ չի օգտագործում վնասատուների դեմ պայքարում: Վնասատուների դեմ պայքարի նյութերը, եթե երբևէ օգտագործվեն, ընկնում են զգուշացման ամենամեղմ «զգուշություն է պահանջվում» խմբի մեջ: Այդ նյութերն օգտագործվում են միայն երբ երեխաներ ներկա չեն: Այդ նյութերն օգտագործողները ստանում են անվտանգության տարեկան վերապատրաստում՝ խստորեն հետևելով ԱՄՆ-ի միջավայրային պաշտպանության գործակալության ցուցումներին և թունաքիմիկատներ օգտագործում են միայն անհրաժեշտության դեպքերում:

Եթե ցանկանում եք վնասատուների դեմ պայքարի յուրաքանչյուր արտադրանքի օգտագործման մասին տեղեկություններ ստանալ կրթաշրջանից, խնդրում ենք կապվել ձեր դպրոցի տնօրենի հետ:

ՀԱՄԱՑԱՆՑԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ/ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանն աշակերտներին ու անձնակազմին առաջադեմ տեխնոլոգիա տրամադրելով՝ ընդարձակում է ուսուցման և ուսումնասիրության հնարավորությունները: Տեղեկատվական աղբյուրների ավելի լայն հնարավորություններ տրամադրելով՝ մենք աշխարհի տեղեկություններին ենք հասու դարձնում մեր աշակերտներին: Արդյունքում, նրանք ավելի լավ պատրաստված կլինեն իրենց ապագա կրթության և մասնագիտության համար:

Համացանց մուտք ունենալը կամ կրթաշրջանի կայքում տեղեկություններ գետեղելը պահանջում են որոշակի իրավական, էթիկական ու բարոյական պատասխանատվություն: Համացանցից օգտվողները պետք է ենթարկվեն Վարչական կանոններին ու էլեկտրոնային տեղեկատվական ծառայությունների (EIS) Ընդունելի օգտագործման պայմանագրին (Իրավական աղբյուրներ՝ GUSD BP 1113, AR 1113, BP 6163.4):

Մեր գլխավոր պատասխանատվություններից մեկը սայբերբուլիինը դադարեցնելն է: Սայբերբուլիինգ նշանակում է անհանգստացնող հաղորդագրություններ, ուղղակի սպառնալիքներ կամ վնասակար գրություններ, ձայներ կամ պատկերներ համացանցում, սոցիալական ցանցերում կամ այլ տեխնոլոգիական միջոցներում, ներառյալ, սակայն չսահմանափակելով հեռախոսներ, համակարգիչներ կամ անլար հաղորդակցական սարքեր: Սայբերբուլիինգ նշանակում է նաև կոտրել և մուտք գործել ուրիշ անձի էլեկտրոնային հաշիվը և ստանալ նրա ինքնության տեղեկությունները՝ նրա հեղինակությունը վարկաբեկելու նպատակով: (Կալիֆոռնիայի Կրթության օրենսգիրք, Մասեր՝ Section 49800, 48900.2, 48900.3, 48900.4, 48900.7 և GUSD BP 5131C):

Աշակերտներին թույլատրվում է ունենալ էլեկտրոնային սարքեր, ինչպիսիք են՝ բջջային ու սմարթ հեռախոսները, համակարգիչները, պլանշետ կամ այլ հաղորդակցման միջոցներ դպրոցում գտնվելիս, դասերի ժամերին, դպրոցի կողմից հովանավորված միջոցառումների ընթացքում կամ եթե գտնվում են կրթաշրջանի աշխատակցի հսկողության տակ: Էլեկտրոնային սարքերը կարելի է օգտագործել դպրոցի արտակարգ իրավիճակներում (օրինակ՝ աշակերտների արգելափակման, երկրաշարժի և այլ իրադարձությունների ընթացքում), ըստ տնօրենի հայեցողության կամ առողջական նպատակներով: Բացի այդ, անձնական սարքերը կարելի է օգտագործել ուսումնական նպատակով, այնպես, ինչպես կսահմանվի տնօրենի կողմից: Այն նախագծված է իր օգտագործողների համար սկզբնաղբյուրները մատչելի դարձնելու նպատակով: Որպես էլեկտրոնային տեղեկատվական ծառայություն, համացանցը աշխարհի մասշտաբով տեղեկությունների փոխանակման և համակարգչային սկզբնաղբյուրների հաղորդակցման ցանց է: Համացանցն ապահովում է ընդարձակ, բազմազան և յուրահատուկ աղբյուրներ՝ ողջ կյանքի ընթացքում կատարելագործվելու համար: Այն նախատեսված է իր օգտագործողներին ապահովելու ամբողջական տեղեկատվությամբ: Օգտագործողի պատասխանատվությունն է պատշաճ նյութեր ընտրել:

Համալսարանների, հանրային և մասնավոր հաստատությունների, կառավարական գործակալությունների և ընկերությունների կողմից տրամադրված տեղեկություններն ընդհանուր առմամբ պատշաճ են աշակերտների օգտագործման համար:

Այնուամենայնիվ, համացանցում հայտնվում են նաև ոչ պատշաճ նյութեր և ուսումնասիրության ընթացքում աշակերտները կարող են անցանկալի նյութերի հանդիպել: Թեև կրթաշրջանը հսկում է աշակերտների կողմից համացանցի օգտագործումը, սակայն տեխնիկապես հնարավոր չէ լիովին վերահսկել աշակերտներին հասու բոլոր նյութերը:

Վերահսկողության տակ լինելով հանդերձ, աշակերտները որոշ չափով հասու են համացանցի տարբեր առկա էլեկտրոնային տեղեկատվական աղբյուրների: Սա օգտակար է բարոյական չափանիշներին հավատարիմ աշակերտների համար: Կրթաշրջանն աշակերտներին սովորեցնում է էլեկտրոնային աղբյուրների էթիկայի տեսակետից ճիշտ և պատշաճ օգտագործումը: Այն աշակերտները, ովքեր ոչ պատշաճ ընտրություն են կատարում, գրկվում են համացանցից օգտվելու իրավունքից և նրանց նկատմամբ կիրառվում են կարգապահական ավելի խիստ պատժամիջոցներ, ներառյալ՝ դպրոց հաճախելուց կասեցում և հավանական հեռացում:

Համացանցի հասանելիությունը համակարգվում է ցանցերի բարդ հարաբերակցության միջոցով: Համացանցի անխափան գործողությունը կախված է օգտագործողի ճիշտ վարքագծից, ով պետք է հետևի խիստ ուղեցույցներին: Այս ուղեցույցները տրամադրվում են, որպեսզի օգտագործողները տեղյակ լինեն համացանցի օգտագործմանը վերաբերող պատասխանատվությանը: Աշակերտներից և անձնակազմից ակնկալվում է հասկանալ և իրականացնել պատշաճ և ընդունելի օգտագործում:

Նախքան կրթաշրջանի համակարգիչների միջոցով էլեկտրոնային տեղեկատվական ծառայություններին հասու լինելը, աշակերտը սովորում է՝

- Համացանցի օգտագործման կանոնների մասին;
- Իր պատասխանատվության մասին՝ որպես օգտագործող անձ:

**ԳԼԵՆԳԵԼԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿՐԹԱՇՐՋԱՆԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳՎՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՆՈՆՆԵՐԸ.**

- 1. Ընդունելի օգտագործման ձև**
 - a) էլեկտրոնային տեղեկատվական ծառայությունների (EIS) նպատակն է՝ ուսումնասիրությանը և կրթությանը նպաստելու համար դուրսին դարձնել յուրահատուկ աղբյուրների օգտագործումը և համագործակցած աշխատելու հնարավորությունը: Ծառայությունների օգտագործման իրավունքը պահպանելու համար, աշակերտը պետք է հետևի և հարգի կրթաշրջանի էլեկտրոնային

տեղեկատվական ծառայությունների օգտագործման կանոնները: EIS-ի ծառայություններից օգտվողները պետք է ենթարկվեն կրթաշրջանի Ընդունելի օգտագործման կանոններին:

- b) Որևէ նյութի փոխանցումը, որը խախտում է Միացյալ Նահանգների կամ նահանգային կանոնները, արգելվում է: Սա ներառում է, սակայն չի սահմանափակվում, հեղինակային իրավունքով նյութերը, սպառնալիք պարունակող կամ անպարկեշտ նյութերը կամ առևտրային գաղտնիքով պաշտպանված տեղեկությունները:
- c) Առևտրային գործունեության նպատակներով օգտագործումն ընդհանրապես անընդունելի է:
- d) Ապրանքների գովազդը կամ քաղաքական լորիինգը արգելվում են:

2. Արտոնությունը իրավունք չի նշանակում

Էլեկտրոնային տեղեկատվական ծառայությունների (EIS) օգտագործումն արտոնություն է, այլ ոչ թե իրավունք: Ոչ պատշաճ օգտագործումը, ներառյալ այս պայմաններին ու կանոններին չհնազանդվելը պատճառ կդառնան, որ աշակերտը գրկվի այդ արտոնությունից: Կրթաշրջանն իրավունք ունի ցանկացած պահի դադարեցնել կամ մերժել էլեկտրոնային տեղեկատվական ծառայությունների օգտագործումը:

3. Հսկողություն

Կրթաշրջանն իրեն է վերապահում դպրոցում գտնվող, կրթաշրջանին պատկանող կամ անձնական ցանկացած տեխնոլոգիայի նյութերը ստուգելու և աշակերտի գործունեությունը վերահսկելու իրավունքը՝ դրանց պատշաճությունը որոշելու նպատակով:

4. Սոցիալական ցանցերի հսկողություն

Դպրոցի անվտանգությունը բարելավելու նպատակով, դպրոցների կրթաշրջանը իրեն վերապահում է սոցիալական ցանցերի հսկողության համակարգի հետ պայմանագիր կնքելու իրավունքը: Կալիֆոռնիայի Կրթության օրենսգրքի 49073.6 Մասի համաձայն՝ կրթաշրջանը «ոչնչացնում է լրատվական միջոցներից հավաքած տեղեկությունները մեկ տարվա ընթացքում, աշակերտի 18 տարեկան դառնալուց հետո կամ մեկ տարվա ընթացքում, երբ աշակերտն այլևս չի հաճախում դպրոց, վարչաշրջանի կրթական համալիր կամ չարտերային դպրոց, որը որ առաջինը տեղի ունենա»:

5. Վարվելակարգ

Աշակերտներից ակնկալվում է հնազանդվել էլեկտրոնային տեղեկատվական ծառայությունների կանոններին: Սա ներառում, սակայն չի սահմանափակվում հետևյալով.

- a) Թույլատրելի չէ հայտնել, կոպտել կամ ոչ պատշաճ բառապաշար օգտագործել:
- b) Չուսպ լինել հաղորդագրություններ գրելու ընթացքում:
- c) Չներգրավվել նահանգային և Դաշնային օրենքով արգելված գործողություններում:
- d) Չբացահայտել անձնական հասցեներ և հեռախոսահամարներ:
- e) Էլ. փոստը (e-mail) անձնական չէ: Մարդիկ, ովքեր աշխատեցնում են համակարգը, կարող են բոլոր նամակագրություններին հասու լինել: Ոչ պատշաճ և անօրինական նամակների մասին կզեկուցվի ղեկավարությանը, որի հետևանքով աշակերտը կգրկվի օգտագործման իր ասարտոնությունից:
- f) Համակարգչային ցանցը չօգտագործել այնպես, որ խանգարի մյուս օգտագործողների աշխատանքին:
- g) Համակարգչային ցանցի միջոցով փոխանցվող հաղորդագրություններն ու տեղեկությունները համարվում են անձնական սեփականություն, ուստի չպետք է խմբագրվեն, վնասվեն կամ ջնջվեն:

6. Ոչ մի երաշխիք

Կրթաշրջանը որևէ կերպ երաշխիք չի տալիս որևէ երեխայի՝ իր տրամադրած ծառայությունների համար: Կրթաշրջանը պատասխանատու չէ աշակերտին պատճառված որևէ վնասի համար: Սա ներառում է ուշացման պատճառով տվյալների կորուստը, առաքումների ձախողումը, միախառնված առաքումները և կամ կրթաշրջանի անուշադրության կամ օգտագործողի սխալների պատճառով ծառայության ընդհատումները:

Համացանցի միջոցով ստացած տեղեկությունների ստույգությունը է աշակերտի հայեցողության ներքո է: Կրթաշրջանը որևէ կերպ պատասխանատու չէ ստացած տեղեկությունների ճշմարտացիության և որակի համար: Բոլոր աշակերտները պետք է ստուգեն տեղեկության աղբյուրի ճշմարտացիությունը:

Անձնակազմը և աշակերտները լիովին կրում են կրթաշրջանին չպատկանող, իրենց անձնական տեխնոլոգիական սարքերի պատասխանատվությունը, այդ թվում սարքերի անվտանգությունը, ապահովությունն ու պահպանումը: Կրթաշրջանը պատասխանատվություն չի կրում տեխնոլոգիական անձնական սարքերի օգտագործման պատճառով առաջացած ծախսերի, այդ թվում՝ օգտագործման/տվյալների, բարելավման, վնասների ու փոխարինման ծախսերի համար: Կրթաշրջանը կարող է միայն գտել համացանցի բովանդակությունը կրթաշրջանի համակարգչային ցանցում: Հետևաբար, անհատական սարքերի համար, որոնք ունեն ավելի քան մեկ համացանցային հասանելիություն, խստորեն առաջարկվում է, որ աշակերտներն օգտագործեն կրթաշրջանի ցանցը՝

համացանցին հասանելիություն ունենալու համար: Համացանցի ոչ պատշաճ օգտագործումը պատճառ կդառնա, որ աշակերտը ենթարկվի կարգապահական պատժամիջոցների:

7. Անվտանգություն

- a) Անվտանգությունն առաջնակարգ կարևորություն ունի համակարգչային որևէ համակարգից օգտվելու համար, մասնավորապես, երբ համակարգն ունի շատ օգտագործողներ: Օգտագործողը չպետք է թույլատրի, որ մյուսներն օգտագործեն իր գաղտնաբառը: Գաղտնաբառը պետք է գաղտնի պահել պաշտպանելու համակարգի անվտանգությունը, օգտագործողի արտոնությունը և համակարգից օգտվելու իրավունքը:
- b) Այն աշակերտները, ովքեր համոզված են, որ կարող են բացահայտել EIS-ի անվտանգությանը սպառնացող որևէ խնդիր, պետք է տեղեկացնեն ուսուցչին կամ ղեկավարին:
- c) Եթե աշակերտը փորձի շրջանցել համակարգչի պաշտպանության միջոցը, փոխի ծրագրի կամ hardware-ի ձևակերպությունները կամ առանց թույլտվության գրանցվի EIS-ի ծրագրում, կկորցնի օգտագործման իր արտոնությունը և կենթարկվի կարգապահական պատժամիջոցների:
- d) Եթե բացահայտվի, որ աշակերտը վտանգ է սպառնում համակարգի ապահովությանը կամ կրթաշրջանի կամ համակարգչային այլ համակարգի հետ խնդիր հարուցելու փորձ ունի, նրան կարող է մերժվել կրթաշրջանի էլեկտրոնային տեղեկատվական ծառայություններից օգտվելը:

8. Վանդալիզմ և ոտնձգություն

- a) Վանդալիզմը և ոտնձգությունը պատճառ կդառնան, որ օգտագործողը գրկվի համակարգն օգտագործելու իր արտոնությունից և կիրառվեն կարգապահական միջոցառումներ:
 - Վանդալիզմը մեկնաբանվում է որպես մի այլ օգտագործողի տվյալները կամ կրթաշրջանի էլեկտրոնային տեղեկատվական ծառայությունների աղբյուրները վնասելու, փոխելու և վերացնելու չարամիտ փորձ: Սա ներառում է, սակայն չի սահմանափակվում՝ համակարգչային վիրուսներ բեռնելը կամ ստեղծելը:
 - Ոտնձգությունը մեկնաբանվում է որպես մեկ ուրիշ օգտագործողի հետևողական անհանգստացում կամ նրա աշխատանքներին միջամտություն: Սա ներառում է, սակայն չի սահմանափակվում համակարգչային անցանկալի նամակների առաքումներով:

9. Օգտագործման ընթացակարգեր

- a) Աշակերտ օգտագործողը մշտապես պետք է ստանա իր ուսուցչի թույլտվությունը՝ նախքան կրթաշրջանի էլեկտրոնային տեղեկատվական ծառայությունների համակարգից օգտվելը: Աշակերտը պետք է հետևի բոլոր գրավոր և դասարանական այլ ցուցումներին:
- b) Բոլոր աշակերտներն ունեն համակարգիչն օգտագործելու հավասար իրավունք: Ուստի, օգտագործողը չպետք է խաղեր խաղա կամ համակարգչային աղբյուրներն օգտագործի ոչ ուսումնական աշխատանքների համար: Բացի դրանից, աշակերտը չպետք է վնասի կամ վատնի կրթաշրջանի կողմից տրամադրված պիտույքները, ինչպիսիք են՝ թուղթը և տպելու թանաքը:

10. Վիճահարույց նյութեր

Օգտագործողը կարող է հանդիպել այնպիսի նյութերի, որոնք օգտագործողի, ծնողների, ուսուցիչների և կամ ղեկավարների տեսակետից կարող են ոչ պատշաճ, վիճահարույց կամ վիրավորական նյութեր համարվել: Եթե աշակերտը հանդիպի այդպիսի նյութերի, պետք է անմիջապես այդ ծրագրից դուրս գա և հայտնի ուսուցչին կամ ղեկավարին: Օգտագործողի պատասխանատվությունն է չփորձել օգտվել այդպիսի նյութերից: Եթե պատահաբար հանդիպի այդպիսի նյութերի, չպետք է այն նյութը կիսի ուրիշների հետ:

11. Տեխնոլոգիական տեղեկությունների ստուգում

Որպես կրթաշրջանի էլեկտրոնային տեղեկատվական ծառայությունների համակարգից օգտվելու նախապայման, կրթաշրջանն իրավունք ունի ցանկացած պահի ստուգել կրթաշրջանի տեղեկատվական համակարգին կից օգտագործվող սարքերում ցանկացած նյութ (ծրագրային ապահովում, արտաքին սարքեր և այլն) կամ ստուգել օգտագործողի անձնական սարքը դպրոցի տարածքում և գործունեությունը դրա միջոցով, որոշելու համար, թե արդյոք պատշաճ կերպով են օգտագործվել սարքերը և ցանցը: Կրթաշրջանի տեխնոլոգիայի ոչ պատշաճ օգտագործումը կարող է արտոնությունից գրկվելու և կամ կարգապահական միջոցների կիրառման պատճառ դառնալ:

12. Ծնողները կարող են դպրոցին տեղեկացնել

Ծնողը կարող է դպրոցի տնօրենին գրավոր տեղեկացնել, եթե չի ցանկանում, որ իր զավակը կրթաշրջանի սարքերի միջոցով մուտք ունենա համացանց և գտված ծրագրեր:

ԻՆՏԵՐՆԵՏԻ ԱՆՎՏԱԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2020-2021 ուս. տարի

ԻՆՏԵՐՆԵՏԻ ԱՆՎՏԱԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը հպարտ է իր աշակերտներին կրթության ապահով միջավայր տրամադրելու համար: Սակայն հետզհետե երկրի մասշտաբով մտահոգիչ խնդիր է դառնում աշակերտների կողմից համացանցի ոչ պատշաճ օգտագործումը: Այս խնդիրը կարող է վնասակար լինել, որի համար մենք ձեր աջակցությունն ենք խնդրում սույն մարտահրավերը դիմակայելու համար:

Ամբողջ երկրում նկատվում է հետզհետե աճող աշակերտի բացասական վարքագիծ, որի պատճառը սոցիալական ցանցերում տեղադրված գրություններն են: Կայքերից շատերում կարելի է անմիջապես միմյանց գրելով գրուցել, պարունակում են գրություններ, և թույլ են տալիս օգտագործել այնպիսի խոսքեր, որոնք սովորաբար չեն ասվում դեմ առ դեմ խոսակցության ժամանակ:

Թվում է, թե կայքերի ժողովրդականությունը աճում է: Օրինակ՝ Facebook.com կայքը ունի ավելի քան 1 միլիարդ անդամ և ամբողջ աշխարհում դարձել է աշակերտների միջև «փոխհաղորդակցության» ամենատարածված կայքը:

Դժբախտաբար, այս կայքերից մի քանիսը չարաշահվում են մանկական հանցագործների, «սայբեր բուլիինգ» կատարողների և խաբեբանների կողմից: Մեր տեղեկության համաձայն, պաշտոնապես որևէ մեկը չի վերահսկում այս կայքերը և աշակերտներից ոմանք օգտագործում են այդ կայքերը՝ ուրիշ աշակերտներին առցանց սպառնալու և ահաբեկելու համար: «Սայբեր բուլիինգ» կատարողները մեծ մասամբ 9-14 տարեկան երեխաներն են, ովքեր օգտվելով կայքի անանունությունից, վիրավորում են ուրիշներին՝ առանց հաշվի առնելու հետևանքները: Սպառնալիքի ու ահաբեկման գոհ դարձած աշակերտները չեն զեկուցում որևէ դեպք այն վախից, որ կարող են գրկվել համացանցն օգտագործելուց:

Դպրոցից դուրս եղել են դեպքեր, երբ չափահասները կարողացել են պատանի ձևանալով մուտք գործել աշակերտի գրուցարանը (chat rooms): Որոշ դեպքերում այս տեսակ շփումը հանգեցրել է ողբերգության: Երբեմն աշակերտները բավականաչափ անձնական տեղեկություններ են հայտնում իրենց մասին, որով զավթիչները կարողանում են հեշտույթամբ գտնել աշակերտի տան կամ դպրոցի հասցեն և նրանց դարձնել իրենց թիրախը:

Գլենդելի կրթաշրջանը արգելել է *մի քանի սոցիալական ցանցերի* օգտագործումը մեր դպրոցներում: Մենք շարունակելու ենք արգելել առարկելի նյութերն ըստ մեր հայեցողության:

Ծնողները պետք է իմանան, թե իրենց երեխաներն ինչ են գրում համացանցում և ուրիշներն ինչ են պատասխանում նրանց: Այս կայքերը պատկանում են հանրությանը և ցանկացած գրություն կարելի է տեսնել և կարդալ, եթե համացանցին միանալու հնարավորություն կա: Թեև այդ գրածներից ոչ բոլորն են անբարոյական, վիրավորական կամ անօրեն, սակայն մի մասն այդպիսին են: Եթե ցանկանում եք, կարող եք անձամբ ուսումնասիրել այդ կայքը: Այդ ծառայություններն անվճար են և օգտագործողները կարող են գրանցվել, օգտագործելով էլ. փոստի հասցեն: Գրանցվելուց հետո կարող եք փնտրել ձեր երեխայի անունով և էլ. փոստի հասցեով և պարզել, թե նա գրանցված է այնտեղ, թե ոչ: Դուք կարող եք նեղացնել արդյունքների շրջանակը՝ մտցնելով քաղաքի անունը և սահմանափակելով որոնման արդյունքները: Դուք կարող եք տեսնել այս կայքերում հրապարակված աշակերտների անձնական տեղեկությունները, գրածները, օրագրերը և լուսանկարները:

Օգտակար խորհուրդներ և աղբյուրներ

Մենք քաջալերում ենք ձեզ խոսել ձեր զավակի հետ համացանցի հավանական վտանգների մասին: Նրանից հարցրեք, թե նա *Facebook, Instagram, Twitter* կամ նման կայքերի էջ ունի, թե ոչ: Եթե ձեր երեխան օգտվում է այդ կայքերից ձեր թույլտվությամբ, դուք հավանաբար կցանկանաք վերանայել նրա էջը, որպեսզի վստահ լինեք, որ նա անձնական բնույթի տեղեկություններ չի հրապարակել կայքում:

Մենք խրախուսում ենք նաև սահմանել օրենքներ ու կանոններ՝ համացանցն օգտագործելիս ձեր երեխայի անվտանգությունն ապահովելու համար: Որոշ կայքեր ծնողներին ու ընտանիքներին ուղեցույցներ են առաջարկում ինտերնետային կայքերն անվտանգ օգտագործելու մասին, օրինակ՝ Commonsensemedia.org կայքը www.commonsensemedia.org հասցեով, SafeKids.com կայքը <http://www.safekids.com> հասցեով և Web Wise Kids-ը <http://www.webwisekids.org> հասցեով, հետախոսի միջոցով կարող եք գանգախարել՝ 866-WEB-WISE կամ էլ. փոստի միջոցով՝ webwisekids2@aol.com: Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը կշարունակի մեր դպրոցներում ապահովել ինտերնետի օգտագործման անվտանգությունը: Կարևոր է, որ ծնողները նաև վերահսկեն համացանցի օգտագործումը տանը:

Ծնորհակալություն ենք հայտնում ձեր աջակցության և մեր երեխաների անվանագրությունը պահպանելու համար:

**ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՄԱՍԻՆ ԾՆՈՂՆԵՐԻ ԾԱՆՈՒՑՄԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
2020-2021 ուս. տարի**

Կալիֆոռնիայի կրթական օրենսգրքի 48980 մասի համաձայն, յուրաքանչյուր ծնող պետք է տեղեկացվի կրթական օրենսգրքի հոդվածներին ու օրենքով սահմանված այլ պայմաններին, որոնք մեկնաբանվել են ձեր հարմարության համար: Ցանկացած հոդվածի բացատրությունը և բառացի մեկնաբանությունը կարող եք պահանջել դպրոցի ղեկավարությունից:

ԿՕ §221.5 – Աշխատանքային ասպարեզի խորհրդատվություն – 7-12-րդ դասարանների աշակերտների ծնողներին տեղեկացվում է, որ աշակերտներին հասանելի է հավասար իրավունքների հիմունքներով աշխատանքային ասպարեզի խորհրդատվություն և դասընթացների ընտրության հնարավորություններ: Այս բաժինը նաև տեղեկացնում է ծնողներին, որ նրանք իրավունք ունեն մասնակցելու խորհրդատվական հանդիպումներին և որոշումներին:

ԿՕ § 32221.5 – Առողջապահական ապահովագրություն մարզիկների համար. Նահանգային օրենսդրության համաձայն, դպրոցական կրթաշրջանները պարտավոր են վստահանալ, որ դպրոցական մարզական հավաքականների բոլոր անդամները ունեն պատահական վնասվածքների ապահովագրություն, որը ծածկում է բժշկական և հիվանդանոցային ծախսերը: Կրթաշրջանի պահանջն է, որ ապահովագրությունը ծածկի բժշկական և հիվանդանոցային ծախսերը: Որոշ աշակերտներ կարող են իրավունակ լինել գրանցվելու անվճար կամ գեղչ գներով տեղական, նահանգային կամ դաշնային հովանավորությամբ առողջության ապահովագրության ծրագրերում:

ԿՕ § 32255 – Կենդանիների վնասակար և կործանարար օգտագործմանը չմասնակցելու իրավունք – Մանկապարտեզից մինչև 12-րդ դասարանի աշակերտներն իրավունք ունեն մերժելու կամ չմասնակցելու դասարանական այն աշխատանքներին, որոնք իրենց կարծիքով «Կենդանիների վնասակար և կործանարար օգտագործման» մաս են կազմում: Այս կետը վերաբերում է նաև այլընտրանքային ծրագրերին:

ԿՕ §§ 35183 և 35183.5 – Հագուստի կանոններ/հանցավոր խմբավորման հագուստ - Լիազորում է դպրոցների կրթաշրջաններին ընդունել կանոններ, որոնք կարգելեն հանցավոր խմբավորմանն առնչվող հագուստ կրել: Դա լիազորում է ընդունել կանոն, որը աշակերտներից կպահանջի համազգեստ հագնել: Եթե կրթաշրջանը հագուստի կանոն որդեգրի կամ համազգեստ պահանջի, ծնողները պետք է նախազգուշացվեն առնվազն վեց ամիս առաջ, ինչպես նաև օժանդակություն կտրամադրվի նյութական ոչ բարենպաստ պայմաններում գտնվող աշակերտներին: ԿՕ § 35183.5 կետը դպրոցներից պահանջում է, որ աշակերտներն արևից պաշտպանվելու հագուստ կրեն բացօթյա պարապմունքների ժամանակ, ինչպես նաև դպրոցական օրերի ընթացքում արևից պաշտպանվելու առանց բժշկի արտոնագրի կամ դեղագրի քսուքներ օգտագործեն:

ԿՕ §§ 35291 և 35291.5 – Կարգապահական կանոններ – Յուրաքանչյուր դպրոց ունի կարգապահական կանոններ, որոնք մշակվել են դպրոցի հանձնախմբի կողմից: Այս կանոնները վավերացվել են «Ուսումնական խորհրդի» կողմից և հասանելի են յուրաքանչյուր դպրոցում և կրթաշրջանի գրասենյակում:

ԿՕ § 32280 – Դպրոցի ապահովության ամբողջական ծրագիր – Գլենդելի կրթաշրջանի բոլոր դպրոցներն ունեն անվտանգության ամբողջական ծրագիր, այդ թվում աղետի ու արտակարգ իրավիճակների նախապատրաստության ընթացակարգեր: Պատճենները առկա յուրաքանչյուր դպրոցի գրասենյակում: Հրդեհի և արտակարգ իրավիճակի նախապատրաստական վարժանքները պարբերաբար տեղի են ունենում յուրաքանչյուր դպրոցում:

ԿՕ § 39831.5 – Դպրոցական ավտոբուսի ապահովություն- Պահանջվում է, որ արձանագրության ժամանակ այն աշակերտների ծնողները կամ խնամակալները, որոնց երեխաները նախապես չեն օգտվել դպրոցի ավտոբուսից, գրավոր տեղեկացվեն դպրոցի ավտոբուսի ապահովության ծրագրին, ինչպես հարկն է: Մա վերաբերում է նախակրթարանի, մանկապարտեզի և առաջինից վեցերորդ դասարանի աշակերտներին:

ԿՕ § 46010.1 – Գաղտնի բժշկական ծառայություններ- Ներկայիս օրենքը դպրոցի ղեկավարներին արտոնում է 7-12-րդ դասարանների աշակերտներին թույլ տալ դպրոցից բացայակել, գաղտնի բժշկական ծառայություն ստանալու համար՝ առանց ծնողի համաձայնության:

ԿՕ § 46014 – Կրոնական ուսուցում – Ուսումնական խորհուրդը, ծնողի կամ խնամակալի գրավոր համաձայնությամբ, կարող է իրավունք տալ աշակերտին դպրոցից բացակայելու կրոնական ծիսակատարությունների և ուսմունքների մասնակցելու համար:

ԿՕ § 48206.3 – Ժամանակավոր անաշխատունակություն – անհատական ուսուցում – Այն աշակերտը, ով ժամանակավոր անաշխատունակության պատճառով չի կարողանում իր սովորական դպրոցը հաճախել, նրա բնակության վայրի կրթաշրջանը պետք է ապահովի աշակերտի ուսման կարիքները:

ԿՕ § 48208 – Ժամանակավոր անաշխատունակություն. ծանուցում ծնողի կողմից – Ժամանակավոր անաշխատունակ աշակերտի ծնողի կամ խնամակալի պարտականությունն է ժամանակին տեղեկացնել այն կրթաշրջանին, որտեղ գտնվում են հիվանդանոցը և տվյալ աշակերտը: Այդ կրթաշրջանի պարտականությունն է աշակերտի համար ուսման պատշաճ հնարավորություն ստեղծել:

ԿՕ § 48900.1 – Ծնողի ներկայությունը դասարանում – Ուսումնական խորհրդի կանոնների համաձայն ուսուցիչը կարող է դպրոցից կասեցված աշակերտի ծնողից կամ խնամակալից պահանջել, որ օրվա մեծ մասը ներկա գտնվի աշակերտի դասարանում:

ԿՕ § 48904 – Դիտավորյալ անկարգապահության պատասխանատվություն – Ծնողները կամ խնամակալները պատասխանատու են անչափահասի կանխամտածված անկարգության համար, որը մեկ այլ անձի վնասվածքի, մահվան կամ դպրոցի ապրանքի վնասման պատճառ է դարձել: Ծնողները նաև պատասխանատու են աշակերտին փոխ տրված և դիտավորյալ չվերադարձրած դպրոցի ունեցվածքի համար: Ծնողները կարող են, ըստ կառավարության օրենսգրքի 53069.5 Մասի, պատասխանատու համարվել այդ գումարի համար: Դպրոցի կրթաշրջանը կարող է չհանձնել աշակերտի գնահատականները, դիպլոմը և հավաքած միավորների մանրամասները (transcripts) մինչև նա չվճարի կամ վերադարձնի դպրոցի ունեցվածքը կամ կամավոր աշխատանքի միջոցով վճարի իր պարտքը: Եթե աշակերտը տեղափոխվի մեկ այլ կրթաշրջան, այդ կրթաշրջանը ևս կարող է չտրամադրել գնահատականները, դիպլոմը և հավաքած միավորների մանրամասները՝ նախկին կրթաշրջանից զգուշացում ստանալով: Ընդունող կրթաշրջանը պետք է ծնողներին գրավոր տեղեկացնի այդ իրերը պահելու որոշման մասին:

ԿՕ § 48906 –Աշակերտին Անվտանգության ոստիկանին հանձնելը – Ձեր երեխային դպրոցի շենքից հեռացնելու ու Անվտանգության ոստիկանին հանձնելու դեպքում դպրոցի պաշտոնյան պետք է անմիջապես ծնողին կամ խնամակալին տեղյակ պահի, բացառությամբ, եթե աշակերտը հսկողության տակ է՝ որպես երեխաների չարաշահման գոհ լինելու կասկածանքով: Այդ դեպքերում ծնողին կամ խնամակալին կտեղեկացնի անվտանգության ոստիկանը:

ԿՕ § 48980 (c) – Կարճ դպրոցական օրեր և անձնակազմի վերապատրաստման օրեր – Պահանջվում է, որ ծնողները տեղեկացվեն (ոչ պակաս, քան մեկ ամիս առաջ) ցանկացած ուսումնական կարճ օրերի կամ անձնակազմի վերապատրաստման պատճառով դասեր չլինելու մասին:

ԿՕ § 48980 (k) – Առաջադեմ աշակերտների (AP) քննության վճարներ – AP դասարաններում գրանցված աշակերտները, որ ծրագրում են դասընթացի ավարտին AP քննություն հանձնել, կարող են մասնակցել AP քննության վճարման ծրագրին:

ԿՕ § 49063, Ընտանեկան կրթության իրավունքների և գաղտնապահության Օրենք (FERPA), 5 CCR § 431(e) – Ծնողների և աշակերտների գաղտնիության իրավունքների տեղեկացում – Դաշնային և նահանգային օրենքներն աշակերտներին և նրանց ծնողներին գաղտնիության և հասու լինելու որոշակի իրավունքներ են տալիս: Կրթաշրջանի կողմից պահված անձնական բնույթի բոլոր գրանցումներին հասու լինելու իրավունքը պետք է տրվի՝

- 1) Տասնյոթ և ավելի փոքր տարիքի աշակերտների ծնողներին:
- 2) Տասնութ կամ ավելի մեծ տարիքի աշակերտների ծնողներին, ովքեր հարկային նպատակներով ծնողի խնամակալության տակ են գտնվում:
- 3) Տասնվեց կամ ավելի մեծ տարիքի աշակերտներին, ովքեր արձանագրված են բարձրագույն ուսումնական հաստատություններում (կոչվում են «իրավունակ աշակերտներ»):

Հավաքած նյութերը, լինեն ձեռագիր, տպագիր, ձայնագրություն, ֆիլմ, միկրոֆիլմ թե այլ միջոցներով, պետք է պահպանվեն աշակերտի զարգացման և ուսումնական առաջընթացի պատմության մեջ: Կրթաշրջանը կպաշտպանի այս գրառումների գաղտնիությունը: Ծնողները/խնամակալները իրավունք ունեն. 1) ստուգել և վերանայել դպրոցի կողմից պահպանվող աշակերտի ուսումնական գրառումները, 2) հայցել դպրոցից ճշտել գրառումները, որոնք, իրենց կարծիքով, ճշգրիտ չեն կամ ապակողմնորոշող են և 3) որոշակի վերահսկողություն ունենալ ուսումնական գրառումների տեղեկատվության տրամադրման վրա: Օրինական ուսումնական նպատակներով դպրոցի պաշտոնյաները կարող են հասու լինել աշակերտի վերաբերյալ գրառումներին առանց ծնողի համաձայնության, եթե նա պետք է վերանայի այդ գրառումները՝ իր մասնագիտական պարտականություններն իրականացնելու համար: Մեկ այլ դպրոցական կրթաշրջանի պաշտոնատար անձանց խնդրանքով, ուր աշակերտը փորձում է կամ մտադիր է գրանցվել, կրթաշրջանը պետք է տրամադրի ուսումնական գրառումները՝ առանց ծնողի համաձայնության:

Դպրոցական անձնական գործերը բաղկացած են հիմնական տվյալներից (աշակերտի օրինական անուն, ծննդյան թիվ, արձանագրության թվական, առարկաներ, գնահատականներ), պարտադիր ժամանակավոր արձանագրություններ (աշակերտի զարգացման և ուսումնական առաջադիմության պատմություն, ներառյալ քննության արդյունքները): Դպրոցի տնօրենը կամ հանձնակատարը պատասխանատու են աշակերտի արձանագրությունները պահելու համար:

Ծնողը կամ պայմանուհի աշակերտը կարող են դպրոցական անձնական գործերը վերանայել տնօրենին գրավոր խնդրագիր ներկայացնելով, ով ժամադրություն կնշանակի, երբ վարչական որևէ անդամ կամ պաշտոնյա կարողանա ներկա լինել հարկ եղած մեկնաբանության համար: Եթե ծնողը արձանագրված տեղեկությունների ճշգրտության կամ պատշաճության մասին որևէ մտահոգություն ունենա, նա կարող է ոչ պաշտոնական ձևով դիմել տնօրենին՝ դրանք ճշտելու համար: Եթե ծնողը կամ չափահաս աշակերտը և տնօրենը տվյալ տեղեկությունների ճշտման կամ վերացման վերաբերյալ համաձայնության չգան, խնդիրը կարելի է ներկայացնել գերտեսչությանը՝ ըստ ուսումնական օրենսգրքի 49070 հոդվածի:

Դպրոցական գրառումների ցանկացած վիճարկում պետք է գրավոր ներկայացվի Ուսումնական ծառայությունների բաժանմունք: Դպրոցական գրառումները վիճարկող ծնողը պետք է ցույց տա, որ գրառումները. 1) ճշգրիտ չեն, 2) անհիմն անձնական եզրակացություն կամ հետևություն են, 3) եզրակացությունը կամ հետևությունը ուսումնասիրողի իրավասության սահմաններից դուրս են, 4) հիմնված չեն նշված անձի անձնական դիտարկումների վրա, նշված ժամանակին և վայրում, 5) ապակողմնորոշող են կամ 6) խախտում են աշակերտի գաղտնիության կամ այլ իրավունքները: Ծնողներն իրավունք ունեն բողոք ներկայացնելու Միացյալ Նահանգների կրթության նախարարությանը, եթե ենթադրում են, որ կրթաշրջանը խախտել է Միացյալ Նահանգների ընտանիքի կրթության իրավունքի և գաղտնիության օրենքի (FERPA) դրույթները, գրելով՝ Ընտանեկան կանոնադրության հետ համապատասխանության գրասենյակին, ԱՄՆ Կրթության նախարարություն, 400 Maryland Ave., SW, Washington, D.C. 20202-4605 հասցեով:

Դրոցական անձնական գործերի մասին կրթաշրջանի կանոնների և ընթացակարգերի տեղեկությունները հասանելի են յուրաքանչյուր դպրոցի տնօրենի միջոցով և դրանք հանրավոր է վերանայել՝ խնդրագիր ներկայացնելով: Երբ աշակերտը տեղափոխվում է մի նոր կրթաշրջան, նոր կրթաշրջանի խնդրանքով արձանագրությունները ուղարկվում են այնտեղ: Ծնողները կամ իրավունակ աշակերտները կարող են արձանագրության պատճենը ստանալ՝ յուրաքանչյուր էջի համար վճարելով 25 սենթ՝ պատճենահանման ծախսը հոգալու համար: Ծնողների հայցադիմումը իրենց աշակերտների ուսումնական արձանագրությունները ստանալու մասին պետք է գրավոր ձևով ներկայացվի գործավարին, և դպրոցը, հայցադիմումը ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում պետք է տրամադրի գրառումները:

ԿՕ § 49073 – Տեղեկագրի տեղեկությունների տրամադրում – Ընտանիքի կրթական իրավունքները և գաղտնիության օրինագիծը (FERPA) դաշնային օրենք է, ըստ որի Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը, որոշ բացառություններով, պահանջում է ստանալ ձեր գրավոր թույլտվությունը՝ նախքան ձեր երեխայի կրթական զեկույցներում առկա անձնական տեղեկությունների թողարկումը: Այնուամենայնիվ, կրթաշրջանը կարող է տրամադրել պատշաճ կերպով նախատեսված «տեղեկագրի տեղեկություններ» առանց գրավոր համաձայնության, եթե նախապես չեք տեղեկացրել կրթաշրջանին հակառակը՝ համապատասխան կրթաշրջանի ընթացակարգերի: Տեղեկագրի տեղեկությունների հիմնական նպատակն է թույլ տալ կրթաշրջանին, որպեսզի ձեր երեխայի կրթական զեկույցներում առկա այդ տեսակի տեղեկատվությունը ներառվի որոշ դպրոցական և/կամ կրթաշրջանի հրապարակումներում: Օրինակները ներառում են՝

- Խաղացանկ, որտեղ նշված է ձեր երեխայի մասնակցությունը բեմադրության մեջ

- Դպրոցի տարեգիրք
- Գովասանագրերի ցուցակներ
- Դպրոցն ավարտելու ծրագրեր
- Սպորտային միջոցառումների մասին թղթեր

Տեղեկագրի տեղեկությունները սովորաբար չեն համարվում վտանգավոր կամ գաղտնիության խախտում տրամադրվելու պարագայում: Դրանք նաև կարող են տրամադրվել այլ կազմակերպություններին՝ առանց ծնողի/խնամակալի նախապես տրված գրավոր թույլտվության:

Կրթաշրջանից դուրս համարվող կազմակերպությունները ներառում են, բայց սահմանափակված չեն այն կազմակերպություններով, որ արտադրում են դպրոցն ավարտելու մատանիներ կամ հրատարակում են դպրոցի տարեկան գրքերը: Դրանից բացի, երկու դաշնային օրենքները պահանջում են, որ եթե կրթաշրջանները աջակցություններ են ստանում 1965թ. ընդունված Տարրական և միջնակարգ կրթության օրենքի սահմաններում (ESEA), բարեփոխման ենթարկվելուց հետո, պահանջի դեպքում զինվորական հավաքագրողներին տրամադրեն աշակերտների անունները, հասցեները և հեռախոսահամարները, եթե ծնողները/խնամակալները չեն տեղեկացրել կրթաշրջանին, որ թույլ չեն տալիս տրամադրել իրենց երեխայի վերաբերյալ տեղեկությունները՝ առանց իրենց կողմից տրված գրավոր համաձայնության:

Եթե չեք ցանկանում, որ կրթաշրջանը տրամադրի տեղեկագրի ձեր երեխայի վերաբերյալ տեղեկությունները ուսումնական գրառումներից առանց ձեր գրավոր համաձայնության, դուք պետք է գրավոր տեղեկացնեք կրթաշրջանին. _____ կողմից _____ (ամսաթիվ): Կրթաշրջանը տեղեկագրի հետևյալը տվյալները համարում է տեղեկություններ.

- ✓ Անունը
- ✓ Հասցեն
- ✓ Հեռախոսահամարը
- ✓ Էլ. փոստի հասցեն
- ✓ Ծննդյան ամսաթիվը
- ✓ Մասնագիտությունը
- ✓ Մասնակցությունը պաշտոնապես ընդունված գործունեություններին և սպորտաձևերին
- ✓ Մարզական խմբերի անդամների քաշը և հասակը
- ✓ Հաճախման ամսաթվերը
- ✓ Ստացված պարգևատրումները և կոչումները
- ✓ Հաճախած նախորդ դպրոցը

Կրթաշրջանը կարող է տրամադրել ձեր երեխայի աշակերտի նույնականացման համարը, օգտատերի անհատական տվյալները և այլ յուրահատուկ անձնական տվյալները, որոնք կիրառվում են էլեկտրոնային համակարգերում հաղորդակցվելու համար: Այս տեղեկությունները չեն կարող օգտագործվել կրթական զեկույցներին տեղեկանալու համար՝ առանց անհատական նույնականացման համարի (PIN), գաղտնաբառի կամ այլ գործոնի, որին տեղյակ է միայն լիազորված օգտատերը: Ձեր երեխայի սոցիալական ապահովության համարը չի օգտագործվի այս նպատակով:

Տեղեկագրի տեղեկությունները չեն ներառում ձեր երեխայի քաղաքացիության կարգավիճակի, ներգաղթողի կարգավիճակի, ծննդյան վայրի կամ այլ տեղեկություն՝ ազգային ծագման մասին: Կրթաշրջանը նմանատիպ տեղեկություններ չի տրամադրի՝ առանց ձեր համաձայնության կամ դատարանի որոշման:

Չինվորական ընտրության մերժում – Ավագ դպրոցի տասնմեկերորդ և տասներկուերորդ դասարանների աշակերտների տեղեկությունները կարող են տրամադրվել զինվորական, կառավարության հավաքագրողներին և ընտրվի ծառայություններին: Այն ծնողները, ովքեր ցանկանում են արգելել իրենց երեխայի տեղեկությունների տրամադրումը վերը նշված կազմակերպություններից որևէ մեկին, պետք է լրացնեն այս ձեռնարկում ընդգրկված Ձև 8 հարցաթերթիկը և մինչև 2020թ. հոկտեմբերի 2-ը վերադարձնեն դպրոց:

ԿՕ § 49407 – Պատասխատավություն բուժման համար – Երեխայի հետ պատահած որևէ վնասվածքի կամ հիվանդության պարագայում, երբ դպրոցի կարծիքով բժշկական օգնություն է պահանջվում և հնարավոր չէ ծնողի կամ խնամակալի հետ կապվելը, դպրոցը կապահովի շտապ օգնության ծառայություններ (paramedic services) և կտրամադրի երեխայի մասին բժշկական տեղեկություններ, բացառությամբ, երբ ծնողը կամ

խնամակալը նախօրոք գրավոր հայտնած լինի, որ առաջին օգնությունից բացի, դեմ է բոլոր տեսակի բժշկական օգնություններին: Դպրոցը ֆինանսապես պատասխանատու չէ այսպիսի շտապ ծառայությունների համար:

ԿՕ § 49500 – Անվճար և գեղջված գներով սնունդ – Կարիքավոր երեխաների ծնողներին տեղեկացվում է, որ բավարար սնունդ ստանալու համար կարող են դպրոցական օրերին անվճար կամ գեղջված գներով ճաշ ստանալ: Դիմումի ձևը հասանելի կլինի բոլոր դպրոցների գրասենյակներում: Լրացրած դիմումները պետք է հանձնել դպրոցի գրասենյակ կամ փոստով ուղարկել Սննդառության ծառայություններին:

ԿՕ § 51101 – Ծնողների և խնամակալների իրավունքները- Ծնողները և խնամակալները իրավունք ունեն և պետք է հնարավորություն ունենան ներգրավվելու իրենց երեխաների կրթությանը և դպրոցի կողմից տեղեկացված լինել:

ԿՕ § 51512 – Լսող կամ ձայնագրող էլեկտրոնային սարք - Առանց ուսուցչի և տնօրենի նախօրոք համաձայնության չի թույլատրվում որևէ դասարանում որևէ անձի, այդ թվում աշակերտի կողմից էլեկտրոնային լսող կամ ձայնագրող սարքի օգտագործում, քանի որ դա խանգարում է ուսուցման ու դպրոցական կարգ ու կանոնին: Այս կանոնի ուղղությամբ կարգազանց աշակերտը կենթարկվի կարգապահական պատժամիջոցի:

ԿՕ § 51513 – Անձնական համոզմունքների մասին հարցեր – Որևէ քննություն, հարցաթերթիկ կամ հարցաշար չի տրվելու 1-12-րդ դասարանների աշակերտներին՝ նրանց անձնական համոզմունքների կամ սեռական խնդիրների, ընտանեկան կյանքի, բարոյագիտության և կրոնի մասին, աշակերտների ծնողների կամ խնամակալների համոզմունքների ու սեռական կյանքի, ընտանեկան կյանքի, բարոյականության և կրոնի վերաբերյալ չպետք է տրվի որևէ հարց մանկապարտեզի կամ 1-ից 12-րդ դասարանների աշակերտներին, բացառությամբ, երբ ծնողին/խնամակալին գրավոր տեղեկացվել է վերոնշյալ նյութերի շուրջ քննության, հարցաթերթիկի կամ հարցաշարի մասին և ծնողը/խնամակալը գրավոր արտոնել է, որ աշակերտը հանձնի սույն քննությունը, հարցաթերթը կամ հարցաշարը:

GC § 54950-54963 – Բրաունի օրենք. Պահանջվում են ծանուցումներ և օրակարգեր՝ հրապարակային բաց ժողովների համար: ՀԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ. Մինչև 20 բառից բաղկացած օրակարգ՝ տեղադրված ժողովից 72 ժամ առաջ: ՀԱՏՈՒԿ ԺՈՂՈՎՆԵՐ. Պետք է ծանուցումը օրենսդիր մարմնի անդամներին և լրատվամիջոցներին տրամադրվի քսանչորս ժամ առաջ՝ ներառելով քննարկման ենթակա հարցերի համառոտ նկարագիրը: ՇՏԱՊ ԺՈՂՈՎՆԵՐ. Մեկ ժամ առաջ ծանուցում աշխատանքի դադարեցման կամ բռնի գործողությունների դեպքում, բացառությամբ ծանր արտակարգ իրավիճակների: ԴՈՆՓԱԿ ԺՈՂՈՎՆԵՐԻ ՕՐԱԿԱՐԳ . Փակ նիստում քննարկվելիք բոլոր կետերը պետք է նկարագրվեն ժողովի ծանուցման կամ օրակարգի մեջ: Պատասխանատուն պետք է բանավոր հայտարարի դոնփակ նիստի թեման: Եթե վերջնական որոշումը կայացվում է փակ նստաշրջանում, ապա մարմինը, ընդհանուր առմամբ, պետք է զեկուցի դրա մասին փակ նստաշրջանի եզրափակմանը: ՕՐԱԿԱՐԳԻ ԲԱՑԱՌԻԿՈՒԹՅՈՒՆ. Հատուկ ընթացակարգերը թույլ են տալիս մարմնին առանց օրակարգի վարել ժողովը արտակարգ իրավիճակների դեպքում, կամ երբ անհապաղ գործողությունների անհրաժեշտություն է ծագել օրակարգը կազմելուց հետո:

ԿՕ § 56301 – Հատուկ կրթություն. երեխայի ի հայտ բերելու համակարգ – Յուրաքանչյուր կրթաշրջանից պահանջվում է ի հայտ բերել առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաներին: Գլենդեյլի կրթաշրջանը, Ֆուլթիլի Մելպա ծրագրի համաձայն, իրականացնում է մի շարք գործողություններ, որպեսզի համոզված լինի, որ Գլենդեյլի կրթաշրջանի տարածքում բնակվող երեխաները, ովքեր որոշ անկարողություններ ունեն, հայտնաբերվեն և գնահատվեն: Այս գործողությունները ներառում են համակարգման, փաստաթղթերով հիմնավորման և զեկուցման շարունակական համակարգի պահպանումը՝ համաձայն երեխայի հայտնաբերման և հանրային իրազեկման գործողությունների, որոնք, ըստ կանոնադրությունների և որոշումների, իրականացվում են տարածաշրջանում:



Եթե արտակարգ դրություն է, և ձեր երեխան դպրոցում է

Առաջին հերթին լավ գաղափար է պարբերաբար ստուգել արտակարգ իրավիճակի ժամանակ անհրաժեշտ ձեր ընտանիքի պաշարի փաթեթը և համոզվել, որ դուք ունեք խմելու թարմ ջուր, առաջին բուժօգնություն և անհրաժեշտ այլ պաշար: Արտակարգ կրավիճակի հարցերով ձեր տան նախապատրաստության համար կարող եք մանրամասն տեղեկություններ ստանալ՝ զանգահարելով Ամերիկյան կարմիր խաչի տեղական բաժանմունք 818-243-3141 հեռախոսահամարով:

- **ՁԵՐ ԳՊՐՈՑՆ ՈՒՆԻ ՈՐՈՇԱԿԻ ԾՐԱԳԻՐ** –Անձնակազմի ԲՈԼՈՐ անդամները, վարժանքների միջոցով, վերապատրաստվել են արտակարգ իրավիճակներում հետևելու որոշակի ծրագրի: Շատ կարևոր է, որ աշակերտները հետևեն իրենց ուսուցչի տված հրահանգներին:
- **ԹԱՐՄ ՊԱՀԵՔ ՁԵՐ ԵՐԵՆԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՁԵՉ ՀԵՏ ԿԱՊՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ** –Արտակարգ իրավիճակում ձեզ հետ կապվելու տեղեկությունները (տան հասցե, տան/աշխատանքային/բջջային հեռախոսահամարներ և այն անձանց անունները, ովքերձեր գավակին վերցնում են դպրոցից) պետք է թարմացնել, երբ դրա մեջ փոփոխություն է լինում:
- **ՀԵՏԵՎԵՔ ՏԵՂԵԿԱԿԱՆ ԼՈՒՐԵՐԻՆ** - Դպրոցի արտակարգ իրավիճակների մասին տեղեկությունները կհաղորդվեն տեղական լրատվամիջոցներով: Կրթաշրջանի կայքի առաջին էջն օգտագործվում է դպրոցներում արտակարգ իրավիճակի մասին հանրությանը «զուշացնելու» համար:
- **ՈՒՇԱԴՐՈՒ ՀԵՏԵՎԵՔ ԱՎՏՈՄԱՏԱԳՎԱԾ ՀԵՆԱԽՈՍԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԻՆ** –Կրթաշրջանը և դպրոցը ավտոմատացված հեռախոսային ծանուցումներով ծնողներին տեղեկացնում են առօրյա և հրատապ իրավիճակների մասին: Արտակարգ իրավիճակի մասին ավտոմատացված հեռախոսային ծանուցումները կհաղորդվեն ծնողներին կամ խնամակալներին դպրոցի տրամադրած հեռախոսահամարներով:
- **ՄԻ ՉԱՆԳԱՀԱՐԵՔ ԵՎ ՄԻ ԳՆԱՅՅԵՔ ՁԵՐ ՉԱՎԱԿԻ ԳՊՐՈՑՆ** –Արտակարգ իրավիճակներում դպրոցի անձնակազմը համապատասխան քայլեր կձեռնարկի երեխաների կարիքները հոգալու համար: Դպրոց զանգահարելով՝ դուք կգրադեցնեք հեռախոսագծերը, որը կխանգարի շտապ օգնությանը դիմելու հնարավորությունը: Խնդրում ենք չզնայ ձեր երեխայի դպրոց, եթե հրահանգ չեք ստացել դպրոցի կամ կրթաշրջանի պաշտոնյաներից: Դպրոցի շրջակայքում առաջացած երթևեկության խճողումը կխանգարի շտապ օգնության աշխատողների մուտքը կամ ելքը դպրոց:
- **ՎԵՐԱՄԻՎՈՐՈՒՄ ՁԵՐ ԵՐԵՆԱՅԻ ՀԵՏ** –Երբ դրությունը խաղաղվի, աշակերտները կարձակվեն ըստ «Վերամիավորման գործընթացի», որը նկարագրված է դպրոցի արտակարգ իրավիճակների ծրագրում: Այս գործընթացի նպատակն է վստահ լինել, որ յուրաքանչյուր աշակերտ հանձնվի իր ծնողին, ազգականին կամ ծնողի կողմից արտոնված անձին: Անվտանգության պահպանման նպատակով, աշակերտին դպրոցից վերցնող անձիք պետք է իրենց ինքնությունը հաստատող նկարով փաստաթուղթ ներկայացնեն՝ նախքան աշակերտին նրանց հանձնելը:
- **ԱՇԿԵՐՏՆԵՐԻՆ ՎԵՐՅՆԵԼՈՒ ԱՅԼԸՆՏՐԱՎՔՅԻՆ ՎԱՅՐ** –Արտակարգ իրավիճակների որոշ դեպքերում անհրաժեշտ է դառնում աշակերտներին ու անձնակազմին փոխադրել «դպրոցից դուրս մեկ այլ վայր»՝ ինչպես նկարագրված է դպրոցի արտակարգ իրավիճակների ծրագրում: Արտակարգ իրավիճակի բնույթը աննախատեսելի լինելու պատճառով, տարհանման վայրը հայտնի կլինի դեպքի ժամանակ: Ծնողները կտեղեկացվեն զանազան միջոցներով, այդ թվում՝ ավտոմատացված հեռախոսազանգեր, կրթաշրջանի կայք էջ, տեղական ռադիո և հեռուստակայաններ:
- **ԱՇԿԵՐՏՆԵՐ, ՈՎՔԵՐ ՄՆՈՒՄ ԵՆ ԳՊՐՈՑՈՒՄ** - Եթե ծնողը, խնամակալը կամ արտոնված անձը չի կարող արտակարգ իրավիճակի ժամանակ երեխային դպրոցից վերցնել, ապա երեխան կմնա դպրոցի անձնակազմի հսկողության ներքո՝ մինչև ծնողը, խնամակալը կամ արտոնված անձը գա դպրոց:
- *Խնդրում ենք վստահանալ, որ ձեր երեխայի դպրոցն ունի արտակարգ իրավիճակում ձեզ հետ կապ հաստատելու թարմ տվյալներ, այդ թվում՝ ծնողի կամ ընտանիքի որևէ անդամի հեռախոսահամարը: Արտակարգ իրավիճակում շատ կարևոր է, որ դպրոցը կարողանա կապ հաստատել ծնողի հետ: Աղետի պատրաստվածության ծրագրի մասին ցանկացած հարց ունենալու դեպքում խնդրում ենք զանգահարել դպրոցի գրասենյակ:*